



Բ. ԼԵՅՔԶՈՆ
ԼԵՆԻՆՅԱՆ
„ԻՏԿՐԱ“-Ն



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ԳՐԱԴԱՐԱՆ
ԵՐԵՎԱՆ 1972

19 JUN 2009



ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅՆՔ

07
L-33

Բ. ԼԵՅԲԶՈՆ

Լ Ե Ն Ի Ն Յ Ա Ն
„ИСКРА“-Ն

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ● 1940

30 APR 2013



1629
41


Б. ЛЕЙБЗОН

ЛЕНИНСКАЯ «ИСКРА»

Государственное издательство политической литературы
ЕРЕВАН • 1940



Վ. Լ. ԼԵՆՏՈՎ (1897 թ.)





ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ԾՆՈՒՆԴԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Բանվորական մամուլը Ռուսաստանում երե-
վան է գալիս անցյալ դարի 90-ական թվականներին
կեսերին: Դա խոշոր կապիտալիստական արդյունա-
բերության բավական արագ զարգացման մի տասնա-
մյակ էր. երկրում ուժեղ երկաթուղային շինարարու-
թյուն էր կատարվում. յուրացվում էին նոր մետաղա-
դորձական և նավթային շրջաններ. առաջանում էին
խոշոր արդյունաբերական կենտրոններ մեծ քանակու-
թյամբ բանվորներով: 10 տարում խոշոր ֆաբրիկա-
ներում և գործարաններում, լեռնային արդյունաբե-
րության մեջ և երկաթուղիներում բանվորների թիվը
դրեթե կրկնապատկվեց: 90-ական թվականների վեր-
ջին հասնելով 2.792 հազարի:

Հետամնաց երկրում, որտեղ բնակչության ճնշող
մեծամասնությունը՝ ճորտատիրության մնացորդնե-
րից ճնշված պարապում էր դյուղատնտեսությանը,
առաջացավ բանվոր դասակարգ: Դա իսկական պրո-
լետարիատ էր՝ խոշոր մասսաներով հավաքված ար-



դյուանաբերական կենտրոններում: Աշխատանքի բուն իսկ պայմանները խոշոր կապիտալիստական ձեռնարկություններում բանվորների մեջ դատարարվում էին դասակարգային համաձայնվածություն, կարգապահություն և մարտական ուժեղություն հատկություններ:

Պրոլետարիատի դրությունը Ռուսաստանում չափազանց ծանր էր: Ոչ մի ուրիշ կապիտալիստական երկրում այդ տարիներում այդպիսի երկարատև բանվորական օր, բանվորների այդպիսի իրավազուրկ վիճակ, կապիտալիստների այդպիսի վայրագ կամայականություն դոյություն չունեին: Եվրոպական երկրներում վաղուց արդեն դոյություն ունեւր մի ինչ-որ բանվորական օրենսդրություն, կային արհեստակցական միություններ և բանվորների իրավունքները պաշտպանելու զանազան լեզալ հնարավորություններ: Իսկ Ռուսաստանում կապիտալիզմի զարգացումը փոփոխություններ չմտցրեց երկրի քաղաքական կարգի մեջ: Ծնշման ոստիկանական ապարատը դործում էր նույն կերպ, ինչպես և առաջ: Ռուսական բուրժուազիան չահագործված էր ցարիզմի պահպանման մեջ: Նա հաշտվում էր ճորտատիրության մնացորդների հետ, որովհետև ճորտատիրական կարգերը, աշխատավորների իրավազրկությունը, դործարանային օրենսդրության բացակայությունը բուրժուազիայի համար հեշտացնում էին բանվորների և դյուղացիների բարբարոսական չահագործումը:

Արդեն 70-ական թվականներին բանվորներն սկսեցին պայքար մղել կապիտալիստների դեմ: Ֆաբրիկաներում բռնկվում էին դործադուլներ: Դրանք դեռևս բանվորների տարանջատ (разрозненные), զուտ տարերային ելույթներ էին, որոնք չոչափում էին պրո-

լետարիատի միայն ամենից ավելի զխտակից մասին: Բայց դեռ այն ժամանակ էլ առաջավոր պրոլետարները, ինչպես հյուսիս խալտուրիներ, փակնադործ Օրնորսկին, ցույց տվին իրենց որպես ազատության աչքի ընկնող մարտիկներ:

✕ Բանվորական շարժումն արագորեն աճում էր և 90-ական թվականների կեսերին երկրի քաղաքական կյանքում խոշոր ուժ էր դարձել: Բայց բանվորների պայքարը մնում էր առաջվա պես տարերային պայքար, որը ոչ դործողությունների միասնություն ունեւր, ոչ դեկավարների շտաբ, ոչ կուռ կադմակերպություն:

Ժիշտ է, դեռ 80-ական թվականներին, բանվորական շարժման աճման հողի վրա և մարքսիզմի զաղափարներին՝ Ռուսաստան մուտք դործելու ազդեցության տակ ծաղեցին առաջին մարքսիստական խմբակներն ու խմբերը: Բայց նրանք հատուկենտ էին, խիտ կերպով կոնսպիրացված, բանվորների հետ համարյա թե կապ չէին ստեղծում և բանվորական մասսայական շարժման վրա չէին ազդում: Իրենց անդամների նեղ շրջանակում փակվելով, նրանք բավականանում էին բացառապես ներխմբակային պրոպագանդով:

Առաջին և ամենաաչքի ընկնող ուսական մարքսիստական խումբը «Աշխատանքի ազատագրություն» խումբը եղավ: Նա ծաղեց 1883 թվին Շվեյցարիայում և մարքսիզմի տարածման համար մեծ աշխատանք կատարեց Ռուսաստանում:

Նմբի հիմնադիր Պլեխանովը, խմբի մասնակիցներ Զասուլիչը և Աքսելրոդը Մարքսի և էնգելսի աշխատությունները թարգմանում էին ռուսերեն և դադունի ուղարկում էին Ռուսաստան: Նրանք դրեցին նույնպես

մի շարք աշխատութիւններ, որոնց մեջ լուսաբանում էին գիտական սոցիալիզմի գաղափարները և նրանց կիրառումը ուսական կրականութեան մեջ:

«Աշխատանքի ազատագրութիւն» խումբը ուսական արտասահմանյան մամուլում մարքսիզմի դրոշմ բարձրացրեց այն մոմենտին, երբ Ռուսաստանում սոցիալ-դեմոկրատական շարժումը դեռևս չկար: Անհրաժեշտ էր ամենից առաջ թեորիապես, իդեալես ուղի հարթել այդ շարժման համար: Մարքսիզմի տարածման և սոցիալ-դեմոկրատական շարժման ուղու վրա հանդիպող գաղափարական գլխավոր խոչընդոտն այն ժամանակ նարոդնիկական հայացքներն էին, որոնք այն ժամանակ գերակշռում էին առաջավոր բանվորների ու ուսուցիչների կերպով տրամադրված ինտելիգենցիայի շրջանում»¹:

Թեպետև նարոդնիկներն իրենց սոցիալիստ էին անվանում, բայց նրանց հայացքները գիտական սոցիալիզմի հետ ընդհանուր ոչինչ չունեին:

Նարոդնիկները նշանակութիւն էին տալիս կապիտալիզմի աճմանը երկրում, նրա հաջողութիւնները «պատահականութիւն» համարելով: Նրանք չէին հասկանում, որ կապիտալիզմի զարգացման հետ միասին աճում և զարգանում է առաջավոր ուսուցիչի գաղափարը, «կապիտալիզմի գերեզմանափորը», պրոլետարիատը: Նարոդնիկները երազում էին հասնել սոցիալիզմին առանց պրոլետարիատի: Նարոդնիկները գլխավոր ուսուցիչն ու թեման էին ինտելիգենցիայի կողմից ղեկավարվող գյուղացիութեան մեջ,

իսկ գյուղացիական համայնքը համարում էին սոցիալիզմի սաղմը և հիմունքը:

Երբ ցարիզմը ջախջախեց «Նարոդնայա միլյա» գաղտնի ընկերութիւնը, նարոդնիկներն մեծ մասը հրաժարվեց ուսուցիչի պայքարից: 80 և 90-ական թվականներին նարոդնիկները դարձան կուլակութեան շահերի արտահայտիչները, որոնք ձգտում էին հաշտեցման ցարական կառավարութեան հետ:

Չբարենկով հասարակութեան զարգացման բուն օրենքները, նարոդնիկները ենթադրում էին, որ պատմութիւնն առաջ շարժողը ոչ թե ժողովուրդը, ոչ թե գաղափարներն պայքարն է, այլ առանձին աչքի ընկնող անձնավորութիւնները, «հերոսներն» են, որոնք ըստ իրենց հայեցողութեան ուր ուղեն, կարող են տանել մասնաւոր՝ «ամբիւր»: Հրաժարվելով մատայնակ և ուսուցիչի աշխատանքից բանվորների և գյուղացիների մեջ, նարոդնիկները կտրվեցին ժողովրդից և անցան անհատական տեւորի տակտիկային:

«Աշխատանքի ազատագրութիւն» խումբը դիպուկ հարկածներ հասցրեց նարոդնիկական հայացքներին: Պլեխանովը յուր աշխատութիւններում ապացուցեց, որ Ռուսաստանն արդեն ոտք է դրել զարգացման կապիտալիստական ուղին և ուսուցիչներին խնդրն այն է, որպեսզի նրանք հենկեն այն ուսուցիչն ու թեման, որն աճում է կապիտալիզմի զարգացման հետ միասին, այսինքն՝ պրոլետարիատի վրա: Չնայած որ դեռևս պրոլետարիատը չատ սակավաթիւ էր, իսկ գյուղացիութիւնը կաղմում էր երկրի բնակչութեան ճնշող մեծամասնութիւնը, Պլեխանովն ապացուցում էր, որ հատկապես պրոլետարիատին է պատկանում ապագան: Ինչպես գրում էր ընկեր Ստալինը մարք-

¹ Համկ(ր)Պ պատմութիւն, համառոտ գաղափար, Պետրադ-հրատ, 1938, էջ 14:

սխառներէ և նարողնիկներէ այլ վեճերէ մասին, ոչ թե թիւն էր դեր խաղացողը, այլ այն, թե «կյանքում ով է աճում և ով է ծերանում»: Պլեխանովը ցույց տվեց, որ պրոլետարիատը միակ դասակարգն է, որն անընդհատ աճում է և զարգանում, մինչդեռ միլենոլոյն ժամանակ գյուղացիութիւնը քայքայվում է: Համայնքի ներսում, որի վրա նարողնիկներն այնքան հույսեր էին դնում, աճում էր մի կողմից գյուղական բուրժուազիան՝ կուլակ-ցեցերը, իսկ մյուս կողմից դատավում էին չքավորները, որոնք վերածվում էին կիսապրոլետարիների և պրոլետարիների:

Պլեխանովը ջանջախեց նույնպէս և նարողնիկներէ հայացքները ժողովրդական մասսաները որպէս ամբողջ դիտելու հարցում: Նա ցույց տվեց, որ տըխրահոչակ «հերոսները» կամ, ինչպէս նարողնիկներն էին նրանց անվանում, «քննադատորեն խորհող անձնավորութիւնները» ընկան ձախողակ հերոսներէ դրութեան մեջ, որովհետեւ չէին ըմբռնում հասարակութեան զարգացման օրենքները և ժողովրդի իսկական կարիքները: Պլեխանովը և այլ մարքսիստներ ցույց տվին, որ «ոչ թե հերոսներն են պատմութիւն կերտում, այլ պատմութիւնն է հերոսներ կերտում», հետեաբար, «ոչ թե հերոսներն են ժողովուրդը ստեղծում, այլ ժողովուրդն է հերոսներ ստեղծում և պատմութիւնը շարժում առաջ»¹:

«Աշխատանքի ազատագրութիւն» խմբի ձեռքով հրատարակված գրականութեան աղեկցութեան տակ շատ ուսուցիչներն են խղեցին իրենց կապը նարողնի-

¹ Համկ(բ)Պ պատմութիւն, համառոտ դասընթաց, Պետքադ-հրատ, էջ 20—21:

կութեան հետ և դարձան մարքսիստներ: Բայց Պլեխանովը, Աքսելրոդը և Զատուլիչը գործնականորեն կապված չէին բանվորական շարժման հետ Ռուսաստանում: Նրանց ձեռքով հրատարակվող գրականութիւնը տարածվում էր միայն ինտելիգենցիայի և առաջավոր բանվորութեան ոչ մեծ խմբի մեջ: «Աշխատանքի ազատագրութիւն» խմբին մինչև իսկ հաջողվեց իրականացնել վաղուց ի վեր մտադրված հանրամատչելի մարքսիստական «Ռաբոչայա բիրլիտոեկայի» հրատարակութիւնը:

Ինչպէս գրում էր Լենինը, «Աշխատանքի ազատագրութիւն» խումբը «սոսկ տեսականորեն հիմնեց սոցիալ-դեմոկրատիան և առաջին քայլն արեց դեպի բանվորական շարժումը»:

Չնայած մարքսիստներից ստացած հարվածներին, նարողնիկներն առաջիկա պէս ածրածում էին իրենց հրատարակութիւնները, օգտվելով այն հանգամանքից, որ մարքսիստները դեռ չէին ստեղծել իրենց հանրամատչելի մասսայական գրականութիւնը:

Ժխտելով բանվորական շարժման փոքրիշատե ինքնուրույն դերը Ռուսաստանում և դիտելով բանվորներին միայն որպէս ժամանակավոր կերպով հողից կտրված գյուղացիների, նարողնիկները, սակայն, չէին կարող չտեսնել, որ բանվորները խորապէս զգայունակ են ուսուցիչին պրոպագանդի նկատմամբ: Նարողնիկները դեմ չէին բանվորների օգտագործմանը գյուղում, որպէս իրենց ագիտատորների: Այդ նպատակով նրանք բանվորների համար հրատարակում էին հատուկ լրագրեր, թոուցիկներ և բրոշյուրներ:

Նարողնիկական կազմակերպութիւնների հրատարակած գրականութիւնն ամբողջովին արտացոլում էր

Նրանց իղեկողներն: Նարոդնիկական իղեկողներն արտահայտվում էր նույնպես և նրանց մամուլի ամբողջ բնույթի և ոճի մեջ:

Լենինը բազմիցս մատնանշել է, որ միայն հասարակության զարգացման օրենքներին տիրապետող մարքսիստն է, որ կարող է սլարզ և մատչելի կերպով քացատրել բարդ խնդիրները: «Մարքսիզմի մաքսիմալիզմը—մատչելիության և սլարզության մարքսիստական»,—գրում էր Լենինը: Նարոդնիկական գրականությունը հենց այդ սկահանջին չէր համապատասխանում: Տեսակետով անճարակ, անկարող ճիշտ կերպով լուրջանելու և իմաստավորելու հասարակական երևույթները, նարոդնիկները լույս էին ընծայում խճճված, գոհակալիկ գրվածքներ:

Ինտելիգենցիայից ելած «հերոսները» համար նարոդնիկները լույս էին ընծայում մեծածախալ հրատարակություններ, որոնցում երկար ու բարակ խոսվում էր «պարտքի մասին ժողովրդի հանդեպ», «քննադատություն խորհող անձնավորությունների կողման մասին», իսկ «ամբոխի» համար, որին նարոդնիկները պատկերմամբ մասսայի դեր էին հատկացնում,—հատուկ բրոշյուրներ, թուղթիկներ և լրագրեր էին հրատարակում, որոնց ամբողջ բնույթը վկայում էր այն մասին, որ նարոդնիկները ժողովրդին չէին ճանաչում և հարգանքով չէին վերաբերվում նրան:

Նարոդնիկները կարծում էին, թե ժողովուրդը լուրջ կերպով գրված ոչ մի բան ընդունակ չէ հասկանալու, որ նա կարելի ունի սուբյեկտիվներ, մի ինչ—որ առանձին, հատկապես ժողովրդի համար հարմարեցրած լեզվի: Նարոդնիկները հենց այդպիսի մի կեղծ—ժողովրդական լեզվով էին գրում բանվորների

համար լույս տեսնող իրենց հրատարակություններին մեջ:

Նարոդնիկական մամուլը մարզվում էր մի առանձին «ժողովրդական» ոճ հնարելով՝ համեմատելի կաճելի առաձներով, ոչ գրական արտահայտություններով, խոսքի հայտնապես անգրագետ դարձվածքներով: Որպես նմուշ կարող է ծառայել նարոդնիկների հրատարակած «Рабочая газета»-ից (№ 3, 1881 թ.) բերվող հեռեկալ քաղվածքը.

«Իմանում ար, այսինքն, էս վախտերումս թաղավորը, որ մեր խալխի լախ հենց վերջն ար հասնում, այսինքն թե օրինակ ոչ թե հարկը տալ, այլ մինչև անգամ լախելու դադ էլ ճարել չենք կարում, ու հրես մեր ողորմած թաղավորը հրաման ար տալի դադադա անելու էս նդոված խմիչքը, այսինքն թե որ, օրինակի համար, մեղանից հեռու լինի, որ մոլորության մեջ չընկնենք: Նու, ուրեմն, հրես մեր էն փողերը, որ արաղի վրա ենք խարջում, դե հայտնի բան ար, որ բոլամա էլ խարջում ենք էս զոռադայի վրա, հրես ասում եմ, ես փողերը օրեսը եղը մոլժիկի ջիբումը կման, այսինքն իրա տնտեսության վրա կխարջվեն»:

Իհարկե, նման գրականությունը բանվոր ընթերցողին չէր կարող բավարարել: Արդեն այն տարիներում էլ առաջավոր բանվորը շատ հեռու էր այն բանվորից, որին մոդոնել էին նարոդնիկները:

Թե նարոդնիկները պատկերացումը բանվորների մասին որքան հեռու էր իրականությունից, այդ մասին կարելի է դատել Պլեխանովի այն հետաքրքրական նկարագրությունից, որում նա պատմում է մի բանվորին հետ ունեցած իր հանդիպման մասին.

«Երբ ես առաջին անգամ հանդիպեցի Միտրոֆա—

նովի հետ և խմացա, որ նա բանվոր է, այսինքն «Ժողովրդի» ներկայացուցիչներին մեկը, իմ հոգում խղճահարութեան և ինչ-որ անհարմարութեան մի խառը զգացմունք շարժվեց, կարծես ես նրա առաջ մի բանում մեղանշել եմ: Ես շատ ցանկանում էի նրա հետ զրույց սկսել, բայց միևնույն ժամանակ ուղղակի չէի իմանում՝ ինչպես և ինչ արտահայտություններով պիտի սկսեմ խոսել նրա հետ: Ինձ այնպես էր թվում, որ մեր ուսանող-եղբոր (բարեկամի) լեզուն բոլորովին անհասկանալի կլինի այդ «Ժողովրդի զավակին» և նրա հետ խոսելիս ես պետք է դորժածեմ այն անհեթեթ, արհեստական լեզուն, որով գրված էին մեր ուսուցիչին բրոշյուրներից շատերը: Բարեբախտաբար Մխրթանյանն ինձ այս դժվարությունից դուրս բերեց: Առաջինը նա խոսեց, և արդեն չեմ հիշում թե ինչպես, խոսակցությունն անցավ ուսուցիչին գրականության վրա: Ես տեսա, որ իմ խոսակցը կարդացել է ոչ միայն արհեստական լեզվով բրոշյուրներ: Նրան ծանոթ էին Չերնիշևսկու, Բակունինի, Լավրովի գրվածքները, և նա կարողանում էր քննադատորեն վերաբերվել նրանց... Իմ դարմանքը վերջ չունեւ: Մխրթանյանովի կերպարանքը բոլորովին չէր ամփոփվում «Ժողովրդի» մասին ունեցած իմ սանտիմենտալ պատկերացման նեղ շրջանակի մեջ»¹:

Նարոդնիկական գրականությունն օտար էր բանվորներին:

Իզուր չէր, որ դեռ 80-ական թվականներին Ստեպան Սալտուրինը փորձ արեց լույս ընծայելու մի իրոք բանվորական լրագիր: Պլեխանովը վերհիշում է, որ

Ստեպան Սալտուրինը հաճախ դժգոհություն էր հայտնում Պետերբուրգում այն ժամանակ հրատարակվող «Земля и воля» ժողովրդի: «Ո՛չ, մեզ համար չի այդ ժողովարը, — ասում էր Սալտուրինը, — մեր ժողովարը բոլորովին ուրիշ տեսակ պիտի տարվի»:

Օրենսդրական օգնություն, որն արտասահմանից չրեֆտ էր բերել, Ստեպան Սալտուրինը կազմակերպեց «Ռուս բանվորների հյուսիսային միություն» տպարանը և սկսեց նախապատրաստել լրագրի հրատարակումը:

1880 թ. փետրվարի 15-ին տպագրվեց «Рабочая заря» լրագրի առաջին համարը:

Առաջնորդող հոգիածը կոչ էր անում բանվորներին պայքարել իրենց շահերի համար: «... Եթե մենք ինքներս մեզ չպաշտպանենք, — գրում էր լրագիրը, — ո՞վ կպաշտպանի մեզ, ումնի՞ց մենք օգնություն սպասենք, արդյոք կառավարությունից, որն ամեն բանում մեր տերերին է աջակցում, թույլ է տալիս նրանց անպատիժ կողոպտել մեզ, ճնշում է մեր ամեն մի հակադրոծունեությունը, մեր ամեն մի ցանկությունը՝ գոնե մի քիչ բարելավել մեր դրությունը, արդե՞րոք է մեր դորժադուները, արդե՞րոք է մեր միությունները մեջ մտնելը և դորժադուներում կամ միություններում մասնակցելու համար, անգամ սոսկ կասկածի հիման վրա մեզ բանտ է նստեցնում և տաժանքի աքսորում... ո՛չ գործարանատերերից և ո՛չ կառավարությունից մենք օգնություն սպասել չենք կարող»:

Եվ լրագիրը կոչ էր անում բանվորներին «համարձակ կերպով քայլել առաջ, պայքարելու կառավարության և գործարանատերերի դեմ, այժմյան հասարա-

¹ Плеханов, т. III, стр. 128.

կուլթյան դեմ մեր իրավունքները, նոր կյանքի համար»:

Այդ քաղաքական պայքարի մի համարձակ կոչ էր: «Рабочая зоря»-ն ամբողջովին դրված էր բանվորների ձեռքով, իսկ խմբագրել էր այն ինքը թալտոլիներ: Բայց լրագիրն ընթերցողներին չհասավ: Առաջին համարի համարյա ամբողջ տիրաժն ընկավ ոստիկանության ձեռքը: Տպարանն ավերի ենթարկվեց, իսկ տպարանի հետ կապ ունեցող 16 բանվորները ձերբակալվեցին: Այնուամենայնիվ «Ռուս բանվորների հյուսիսային միությունը» կարողացավ տարածել միլիոնի թուղթիկ, որոնցում շարադրված էր նրա ծրագիրը, որ կոչ էր անում տապալելու «գոյություն ունեցող քաղաքական և տնտեսական կարգը, որպես ծայրահեղորեն անարդար կարգ»:

Նարոդնիկները բանվորներին չեղում էին միասնական կարգի դեմ տարվող պայքարից: Նրանք հետևում էին ռեուլուցիոն պայքարի համար վնասակար՝ անհատական տեուրի տակտիկային: Նարոդնիկներն ուղիղեցին Ստեպան թալտոլիներին հրաժարվել բանվորներին կազմակերպելու աշխատանքից և ամբողջովին զբաղվել տեուրով:

«Նարոդնիկները բանվոր դասակարգին խանդավորում էին հասկանալու իր ղեկավար դերը ռեուլուցիայի մեջ և կասեցնում էին բանվոր դասակարգի ինքնուրույն պարտիայի ստեղծումը»¹: Այն ժամանակ դեռևս ռուս մարքսիստները չէին կարողացել բանվորական շարժման անհրաժեշտ մասսայական գրականությունը տալ: Ընդհուպ մինչև 90-ական թվականները

¹ Համկ(բ)Պ պատմություն, համառոտ դասընթաց, Պետքաղհրատ, 1938, էջ 16:

բանվորների մեջ տարածվող ընդհատակյա հրատարակություններն առավելապես նարոդնիկական էին:

1893 թվի վերջերին Պետերբուրգ է գալիս Լենինը՝ նա կապեր է հաստատում առաջավոր բանվորների հետ և 1895 թվին միավորում է մոտ 20 մարքսիստական խմբակներ որպես պետերբուրգյան «Բանվոր դասական կարգի ազատագրության պայքարի միություն»:

Առաջիկա պես նարոդնիկները հանդիսանում էին ղեկավար արդեւքը, որը խանդավորում էր քաղաքականորեն կազմակերպել բանվոր դասակարգը և սոցիալիզմի դադարների միացնել աճող բանվորական շարժման հետ: Այդ ժամանակ նարոդնիկներն արդեն դարձել էին կուլակության շահերի բացահայտ արտահայտիչները: Նրանք վաղուց արդեն դադարեցրել էին ամեն ռեուլուցիոն պայքար միասնականության դեմ և, փակելով իրենց աչքերը քաղաքում և գյուղում տեղի ունեցող դասակարգային հակասությունների սրման վրա, ցարիզմի հետ հաշտեցում էին քաղաքում: «Մարքսիզմի հետագա տարածումը և սոցիալ-դեմոկրատական պարտիայի ստեղծման հնարավորությունն ապահովելու համար հարկավոր էր մինչև վերջը դադարապես ջախջախել նարոդնիկությունը:

Այդ աշխատանքը կատարեց Լենինը:

Իր «Ի՞նչ են «Ժողովրդի բարեկամները» և ի՞նչպե՞ս են նրանք մարտնչում սոցիալ-դեմոկրատների դեմ» գրքում (1894 թ.) Լենինը մինչև մերժ մերկացրեց նարոդնիկների՝ որպես «Ժողովրդի» կեղծ «բարեկամների»՝ իսկական դեմքը, որոնք իրականում Ժողովրդի դեմ են գնում»¹:

¹ Համկ(բ)Պ պատմություն, համառոտ դասընթաց, Պետքաղհրատ, 1938, էջ 27:

Այդ դրքում **Լենինը** զարգացրեց ուսմ մարքսիստ-ների լայն ծրագիրը և առաջադրեց «սոցիալիստական քաղաքական պարտիայի կազմակերպման»¹ խնդիրը:

Լենինը ուսմ մարքսիստների ուշադրությունը մարքսի վերացական ուսումնասիրությունից ուղղեց մարքսիզմը ուսմական իրականություն մեջ գործադրել տվորներու վրա:

Լենինը ջանք էր անում, որ բոլոր մարքսիստական խմբակներն անցնեն լայն ագիտացիայի բանվորական մասսաների մեջ, արձակառեկն բանվորների ամենօրյա կարիքներին ու պահանջներին և քաղաքականորեն ղեկավարեն բանվորական շարժումը: Պետերբուրգյան «Բանվոր դասակարգի ազատագրություն» պայքարի միությունը», հենվելով խմբակներին անդամների՝ բանվորների վրա, լայն ուղղություն աշխատանք ծավալեց: Նա կատարեց «... ուղղություն պարտիայի սաղմի դեր, որը հենվում է բանվորական շարժման վրա, ղեկավարում է պրոլետարիատի դասակարգային պայքարը՝ պայքար կապիտալի և արքայական կառավարության դեմ...»²:

Մինչև այն ժամանակ, քանի դեռ սոցիալ-դեմոկրատական աշխատանքը Ռուսաստանում կրում էր սահմանափակ, պրոպագանդիստական բնույթ, քանի դեռ խմբակներում պարապում էին գլխավորապես մարքսիստական ինքնակրթությամբ, նրանց սակավաթիվ անդամները բավարարվում էին այն դրականություններ, որը նրանց ձեռքն էր հասնում «Աշխատանքի

ազատագրություն» խմբի միջոցով, և այն մարքսիստական գրվածքներով, որոնք Ռուսաստանում տպագրվում էին լեզու կերպով: Բայց աճող բանվորական շարժումը շատ շուտով պահանջեց նոր տեսակի դրականություն՝ մասսայական ուղղություն ագիտացիոն թուղթիկ թերթեր և պրոկլամացիաներ, որոնք արձագանքում էին բանվորների հրատապ կարիքներին:

Ռուսաստանում դեռևս այդպիսի դրականություն չկար: Նրա հրատարակման սկիզբը դրեց պետերբուրգյան «Բանվոր դասակարգի ազատագրություն» պայքարի միությունը:

Պետերբուրգյան «Բանվոր դասակարգի ազատագրություն» պայքարի միությունը՝ դրականությունը նույնքան էր տարբերվում մինչև այդ բանվորների մեջ տարածվող թուղթիկ թերթերից, ինչքան երկինքը երկրից: Առաջավոր բանվորների հետ կապված լինելով, հիանալի կերպով ղեկավարում Պետերբուրգի Փարբիկաներում եղած դրությունը՝ **Լենինը** ստեղծեց անցնողուր մամուլի մի բոլորովին նոր տիպ: Դրանք թերթիկներ էին, որոնք սլարգ և հստակ լեզվով ուղղակի պատասխաններ էին տալիս ամենաբարդ հարցերին, օգնում էին ընթերցողին իրեն հայտնի ամենօրյա փաստերից ճիշտ քաղաքական հետևություններ հանելու:

«Թերթիկները» գլխավոր բովանդակությունը, ինչպես դրում էր **Լենինը**, «Փարբիկային կարգերի մեղակցումներն էին»: Թերթիկներում ճշարտացի և սլարգ կերպով նկարագրվում էին աշխատանքի անմարդկային պայմանները, գործարանատերերի և վարպետների կամայականությունը, առաջադրվում էին պահանջներ, և բանվորներն ավելի և ավելի համոզվում էին այն բանում, «որ և՛ գործարանատերերը, և՛

¹ Լենին, հատ. I, էջ 261, Հայպետհրատ, 1930 թ.:

² Լենին, հատ. II, էջ 182:



ուստիկանությունը, և՛ ամբողջ պետական իշխանությունը՝ դրանք բոլորն էլ միատեղ են և բոլորը մեզ դեմ են»։ Տնտեսական այսպիսի ազդեցության ծառայում էր որպես «...եղակետ՝ դասակարգային գիտակցության արթնացման համար, սլոֆեստիոնալ պայքարի սկզբնավորության և սոցիալիզմի տարածման համար»¹։

Կարճ միջոցում թերթիկները նվաճեցին Պետերբուրգի շատ ֆաբրիկաների և գործարանների բանվորներին համակրանքը և գործադուլային պայքարում լուրջ կազմակերպող ուժ դարձան։

Առաջին թերթիկները գրվում էին ձեռքով և տարածվում էին պրիմիտիվ եղանակով։ «Այսպես, օրինակ, —հիշում է պետերբուրգյան «Բանվոր դասակարգի ազատագրության պայքարի միության» մասնակիցներին մեկը, —Նեկսկայա դաստալայից այն կողմ որոշվեց թերթիկները տարածել Մեմյանիկովի գործարանում։ Թերթիկը գրեց Լենինը, այն արտագրեց տպագիր տառերով չորս օրինակ, Բաբուշկինը ցրեց գործարանում։ Թերթիկներից երկուսը վերցրին պահակները, իսկ երկուսն ընկան բանվորների ձեռքը և անցան ձեռքից ձեռք. այն ժամանակ այդ համարվում էր մեծ հաջողություն...»²։

Բայց շուտով թերթիկների հրատարակման և տարածման տեխնիկան կատարելագործվեց, և արդեն 1896 թ. մայիսյան թերթիկը երկու հազար օրինակով տարածվեց 40 գործարանում։ Առաջին անգամ «Правительственный вестник»-ում հաղորդում երևաց սո-

ցիալ-դեմոկրատներին գործունեություն մասին...», «չարամիտ անձերի» մասին, որոնք 1896 թվի պետերբուրգյան գործադուլի ժամանակ «տպագրել են զանազան բովանդակություն ունեցող 25 հաղտնի գցված թերթիկներ»։

Մարքսիստներն այլ քաղաքներում ընդօրինակեցին պետերբուրգյան «Պայքարի միության» փորձը։ Թերթիկներ հայտնվեցին Մոսկվայում, Թիֆլիսում, Տուլայում, Կիևում, Եկատերինոսլավում և այլ քաղաքներում։ Այդ թերթիկների ուժն այնքան մեծ էր, որ նաև կապիտալիստները հարկադրված էին հաշվի նստել նրանց հետ։

Տուլայում Լատունի գործարանում բաց էր թողնված թերթիկ, յուրաքանչյուր ցեխի համար առանձին մշակված պահանջներով։ Երկօրյա գործադուլից հետո գործարանի դիրեկտորը դեպուտատներ հավաքեց բոլոր ցեխերից, սկսեց կարգալ սոցիալ-դեմոկրատական հեկտոգրաֆած մի թերթիկ և բախարաբեղ պահանջ պահանջի հետևից։ Այս հարմար մոմենտից օգտվելով՝ բանվորներն սկսեցին թված պահանջներին, այստեղ ևեթ նոր պահանջներ գրել-ստիպանել մատիտով։ Դիրեկտորը մերժեց այդ պահանջները, հայտարարելով, վոր դրանք արդեն կոմիտեի պահանջները չեն, այլ մասնավոր դիմում են»¹։

Թերթիկների հետ միաժամանակ պետերբուրգյան «Բանվոր դասակարգի ազատագրության պայքարի միությունը» բաց էր թողնում փոքրիկ հանրամատչելի բրոշյուրներ։

¹ Տե՛ս. Доклады социал-демократических комитетов II съезду РСДРП, стр. 242, 1930 г.

¹ Լենին, հատ. IV, էջ 403։

² Листовки петербургского «Союза борьбы за освобождение рабочего класса», стр. III, 1934 г.

Այդ ժամանակվա մասսայական դրականության մի ականաւոր նմուշն է հանդիսանում «Փարբիկաներում և դործարաններում բանվորներից դանձվող տուգանքների օրենքի բացատրությունը» ընկնյաւն բրոշյուրը: Լայն ընթերցող մասսային հասկանալի այդ բրոշյուրը խորը կերպով ցույց էր տալիս մի մասնավոր կոնկրետ երևույթի՝ բանվորից դանձվող տուգանքի կապը Ռուսաստանում տիրող ամբողջ հասարակական սխառեմի հետ:

Բրոշյուրը սկսւում է մի նշանաւոր ներածութեամբ.

«Եթե հարցնենք բանվորին՝ արդո՞ք դիտե՞ նա, թե ինչ են տուգանքները, նա, թերեւ, դարմանա այդպիսի հարցի վրա: Նա էլ ի՞նչպէս չիմանա, թե ինչ են տուգանքները, երբ շարունակ ստիպւած է լինում տուգանքներ վճարելու: Իլ ի՞նչ հարցնելու բան կա այստեղ:

«Բայց այդ միայն թւում է, որ այստեղ կարծես հարցնելու բան էլ չկա: Այնինչ իսկապէս բանվորների մեծամասնութիւնը ճիշտ հասկացողութիւն չունի տուգանքների մասին:

Սովորաբար կարծում են, որ տուգանքը բանվորի կողմից տնտեսատիրոջը պատճառած վնասի հատուցումն է: Այդ ճիշտ չէ: Տուգանքն ու վնասի հատուցումը երկու տարբեր բաներ են»¹:

Եւ այնուհետեւ Լենինը կոնկրետ օրինակներով ցույց է տալիս, որ տուգանքների նպատակն է—ստիպել բանվորին հպատակւել դործարանատիրոջ հրամաններին:

¹ Լենին, հատ. I, էջ 509, Հայկահրատ, 1930 թ.:

«Ճորտ դյուղացիներն աշխատում էին կալածատերերի համար, և կալածատերերը նրանց պատժում էին: Բանվորներն աշխատում են կապիտալիստների համար, և կապիտալիստները նրանց պատժում են: Ամբողջ տարբերութիւնը միայն այն է, որ առաջ անպատ մարդուն խփում էին մահակով, իսկ հիմա նրան խփում են ուղբով»¹:

Բրոշյուրը բանվորներին ապացուցում էր, որ «կառավարութիւնը և նրա չինովնիկները Փարբիկանների կողմնակից են», և իր ամբողջ ոգով բանվորներին հրում էր Փարբիկանների և ինքնակալութեան դեմ քաղաքական պայքարի:

Պետերբուրգյան «Բանվոր դասակարգի ազատագրութեան պայքարի միութեան» դրականութիւնը շատ խոշոր դեր խաղաց: Լենինի ձեռքում նա դարձաւ մի պենք, որն օգնում էր առաջին անգամ Ռուսաստանում իրականացնելու սոցիալիզմի միացումը բանվորական շարժման հետ: 1896 թվի վերջին Լենինի՝ բանառում դրած «Յարական կառավարութեանը» պրոկլամացիան ցույց է տալիս, թե ինչ աչքի ընկնող դեր խաղացին թուղիկները բանվորական մասսաների քաղաքական դարթոնքի դործում:

Տնտեսական պահանջներից, օրինակ, թղթի կամ թելի արտադրման գնահատումը բարձրացնելու պահանջներից բանվորներն անցնում էին այլ պահանջներ: Նրանք «... ձեռքից ձեռք խլելով կարդում և պահանջում էին այն թերթիկները, որոնց մեջ ամենեւին չէր խոսւում ոչ թղթի ու ոչ թելերի մասին, այլ խոսւում էր ռուսական քաղաքացիների իրաւադրութեան

¹ Լենին, հատ. I, էջ 510, Հայկահրատ, 1930 թ.:

ու այդ կառավարութեան վայրենի կամայականութեան մասին, որ սպասարկում է կապիտալիստներին...»¹։

Ռուսական ամբողջ իրականութիւնը բանութեան ցուցց էր տալիս, որ «ներանց պատերազմը դործարանատներին դեմ պետք է անխուսափելի կերպով պատերազմ լինի կառավարութեան դեմ։ Սոցիալիստներին մնում էր միմիայն հաստատել այդ բանը և հրապարակել թերթիկներում»²։

Շնորհիվ պետերբուրգյան «Բանվոր դասակարգի պատասխանատվության պայքարի միութեան» դրականութեան—«...բանվորները մեջ շուտով իսկական կերպ բռնկվեց դեպի մերկացումները։ Հենց որ բանվորները տեսան, որ սոցիալ-դեմոկրատները խմբակներն ուղղում են և կարող են նրանց հասցնել իրենց թշվառ կյանքի, անչափ ծանր աշխատանքի և իրավազուրկ դրութեան մասին ամբողջ ճամարտութիւնն ասող նոր տեսակի թերթիկներ,—նրանք սկսեցին, կարելի է ասել, թղթակցութիւններ տեղալ Փաբլիկաներից ու դործարաններից»³։

Լենինն այդ տարիներում դաստիարակեց սկանաւոր պրոլետարներին մի խումբ, որոնք իրավամբ մտան բողոքական մամուլի պատմութեան մեջ որպէս նրա առաջին բանթղթակիցները։ Խմբակներից մեկում, որը գեկաւարում էր Լենինը, պարապում էր վեց բանվոր։

Լենինը հաճախ աշխատում էր ունկնդիրներին մեջ,—գրում է յուր հիշողութիւններին մեջ խմբակի մասնակից Բաբուշկինը,—«կամ հակահասարակութիւններ, կամ

վեճ սկսելու ցանկութիւնն առաջացնել և այն ժամանակ դրդում էր, ստիպելով, որ մեկը մյուսին ապացուցի յուր տեսակետի ճշտութիւնը տվյալ հարցի մասին... այդ դասախոսութիւնները միևնույն ժամանակ մեզ վարժեցրին ինքնուրույն աշխատանքի և նյութեր ձեռք բերելու»¹։

Լենինը յուր պարապմունքներն ուղղակի կապում էր խմբակի անդամների դործնական ուղղութիւնն աշխատանքի հետ, նա նրանցում դաստիարակում էր յուրաքանչյուր պարտիական աշխատողի, մամուլի յուրաքանչյուր աշխատողի համար այնքան անհրաժեշտ՝ կյանքի խորքը դիտելու ունակութիւնը։

«Մենք, դասախոսից ստանում էինք,—նշում է Բաբուշկինը,—թերթիկներ մշակված հարցերով, որոնք մեզնից պահանջում էին դործարանային, Փաբլիկային կյանքի ուղղելու ծանոթութիւն և դիտողութիւններ»²։

Լենինյան այդ շկոլան Բաբուշկինից ստեղծեց պարտիայի ակտիւադույն դործիչ, որը գիտեր նաև լայնորեն օգտուել ապագիւր խոսքի գեներից։ Ի պատասխան Լենինի՝ 1895 թվին տեղի ունեցած ձերբակալման Բաբուշկինն արդեն ինքնուրույն կերպով գրեց յուր առաջին թոռցիկը «Խնչ է սոցիալիստը և քաղաքական հանցագործը»։

Բանվորներին միջավայրից շարժման ղեկավարներին երևան գալն ուղղակի հաջողութիւնն էր սոցիալիզմի և բանվորական շարժման միացման այն աշխատանքի, որն սկսել էր Լենինն այդ տարիներում։ Տասնյակ

¹ Լենին, հատ. I, էջ 637, Հայկահայրատ, 1930 թ.։

² Նույն տեղում, էջ 638։

³ Լենին, հատ. IV, էջ 403։

¹ Воспоминания И. В. Бабушкина, стр. 51, 1925 г.

² Նույն տեղում։

բանվորներ արդեն իրենք սոցիալիստական պրոպագանդա և ազդեցության էին մղում, ուղեորվում էին այլ քաղաքներ, նրանցում «Պայքարի միության» օրինակով կազմակերպություններ ստեղծելու:

Այն կապերը, որ ստեղծել էր «Բանվոր դասակարգի ազատագրության պայքարի միությունը» ոչ միայն Պետերբուրգի, այլ և ուրիշ քաղաքների բանվորներին հետ, հնարավորություն տվին ձեռնարկելու խոկական բանվորական լրագրի հրատարակմանը: Լենինը մի այսպիսի լրագրի առաջին համարը պատրաստեց տալագրության համար: Բայց Լենինի և «Բանվոր դասակարգի ազատագրության պայքարի միության» մյուս անդամների՝ 1895 թվի դեկտեմբերի 9-ի զիջերը տեղի ունեցած ձերբակալման ժամանակ ամբողջ նյութն ընկավ ոստիկանության ձեռքը:

Լրագիրը պետք է լույս տեսներ «Рабочее дело» անվան տակ անորոշ ժամկետներում, «նայած նյութի կուտակման»: Լենինը յուր «Ի՞նչ անել» գրքում հրատարակման նշվող այդ օրդանին այսպիսի բնորոշում է տալիս.

«Այդ լրագրի առաջնորդող հոգւածը (որը գուցե մի 30 տարի անց մի որեւէ «Русская старина» ոստիկանության դեպարտամենտի արխիւներէից դուրս կբերի) ուրվագծում էր բանվոր դասակարգի պատմական խնդիրները Ռուսաստանում և այդ խնդիրների գլուխ համարում էր քաղաքական ազատության նվաճումը: Հետո կար մի հոգւած՝ «Ինչի մասին են մտածում մեր միներսորները», նվիրւած Գրադիստության Կոմիտեների ոչնչացմանը ոստիկանության ձեռքով, և մի շարք թղթակցություններ ոչ միայն Պետերբուրգից, այլև Ռուսաստանի այլ վայրերից (օրինակ՝ Յարոսլավլի

նահանգում տեղի ունեցած բանվորական ջարդի մասին): Այսպիսով 90-ական թվականների սոցիալ-դեմոկրատների այդ, եթե չենք սխալվում, «առաջին վտրձը» իրենից ներկայացնում էր ոչ նեղ-տեղական, առավել ևս ո՛չ «տնտեսական» բնույթ կրող մի լրագիր, այլ այնպիսի լրագիր, որը ձգտում էր միացնել գործադուլային պայքարը միապետության դեմ ուղղված ուղղություն չարժան հետ և զրավել ունակցիոն խափարապաշտության քաղաքականությունից բոլոր ճնշվածներին աջակցելու սոցիալ-դեմոկրատիային»¹:

Ծրագրված էր «Рабочее дело»-ի առաջին համարում մեծ տեղ հատկացնել Փարիզիաներից և գործարաններից ստացված նամակներին, բանվոր դասակարգի կյանքի ու պայքարի առանձին էպիզոդների և գործադուլների նկարագրությանը:

Լենինի «Рабочее дело»-ի համար գրած առաջնորդող հոգւածը պահնորդարանի արխիւներում գտնւում չէ, բայց Լենինի դեմ նախապատրաստւած դատավարության նյութերի մեջ բավական մանրամասն կերպով շարադրւած է հոգւածի բովանդակությունը և բերված են ցիտատներ: Հոգւածը կոչ էր անում քաղաքական պայքարի ելնելու և վերջավորւում՝ այսպես.

«Այսպէս ուրեմն, պայքար Փարիզիանների դեմ կյանքի մարդավայել պայմանների համար: Պայքար կառավարության կամայականության և ամենակալության դեմ: Բանվորներ՝ Միացե՛ք և միահամուռ ու աննկուն կերպով պայքարեցե՛ք մեծ գործի համար»:

Վլադիմիր Իլյիչի հղացած «Рабочее дело» լրա-

¹ Լենին, հատ. IV, էջ 385—386:

«գիրք պետք է՝ ծառայեր որպէս քաղաքական աղիտա-
ցիւայի և սոցիալ-դեմոկրատական խմբակները պետե-
րութեան «Բանալոր դասակարգի ազատագրութեան
պայքարի միութեան» շուրջը միավորելու օրդան:

Ոստիկանութեան հասցրած հարկածների պատճա-
ռով լրագրին չհաջողվեց իր դերն իրականացնել: Բայց
այդ լույս չտեսած լրագրի ուղղութիւնը միանգամայն
պարզ էր. «Рабочее дело»-ն լենինյան «Искра»-ի նա-
խապատկերն էր:

1914 թվականին Լենինը գրում էր. «Սյն ժամա-
նակիւ, այսինքն՝ 20 տարի առաջիւ, բանալորական
թերթիկները և սոցիալ-դեմոկրատական լրագրներն
այժմյան բանալորական մամուլի ուղղակի և անմիջա-
կան նախորդներն են հանդիսանում. նույն Փարբիկա-
յին «մերկայումները», «տնտեսական» պայքարի նույն
խրոնիկան, բանալորական շարժման խնդիրները նույն
սկզբունքային լուսարանումը մարքսիզմի և հետևողա-
կան դեմոկրատիզմի հայեցակետով, — վերջապէս, բան-
ալորական մամուլում գոյութիւն ունեցող մարքսիս-
տական և օպորտունիստական նույն երկու հիմնական
ուղղութիւնները»¹:

Օպորտունիստական հոսանքը 1894 թվին արդեն
ուրվագծուել էր:

Գործադուլային շարժումը դեռ նոր էր զարգա-
նում, բայց Պետերբուրգի մարքսիստների մեջ արդեն
մարդիկ գտնվեցին, որոնք սկսեցին բանալորներին չա-
փավորութեան կոչել: «Մենք առաջին անգամիւ հա-
մար այնպիսի պահանջներ պիտի դնենք, որոնց կա-
տարմանը կարող ենք հասնել», — գրում էր 1895 թվին
մի թերթիկի հեղինակ:

¹ Լենին, հատ. XVII, էջ 344:

Լենինի և նրա մերձակորդ ղեկավարների ձեռքա-
կալումից հետո պետերբուրգյան «Բանալոր դասակար-
գի ազատագրութեան պայքարի միութեան» ղեկավար-
ման ղեկըր նոր մարդիկ անցան: Նրանք այնպէս էին
համարում, թէ բանալորները միայն տնտեսական պայ-
քար պիտի մղեն, առանց քաղաքականութեամբ դրադ-
վելու: Բարուչկինի «Ի՞նչ է սոցիալիստը և պետական
հանցագործը» թուղթիկը «Բանալոր դասակարգի ազա-
տագրութեան պայքարի միութեան» այդ անդամների
կողմից առարկութիւնների հանդիպեց, որովհետեւ
դրանք էր ոչ թէ տնտեսական, այլ քաղաքական թե-
մայի մասին: 1897 թվին նրանք ձեռնարկեցին իրենց
«Рабочая мысль» լրագրի հրատարակութեամբ: Սկզբ-
րում այն լույս էր տեսնում Պետերբուրգում անլեզալ
կերպով, հետո նրա հրատարակումը տեղափոխվեց ար-
տասահման: Իսկ 1898 թվին արտասահմանում սկսեց
լույս տեսնել է՛լ ավելի բացահայտ օպորտունիստական
«Рабочее дело» օրդանը:

Բանալորական շարժման մեջ ծագած առաջին
օպորտունիստական հոսանքը՝ «էկոնոմիզմը» երիտա-
սարդ բանալորական շարժման համար ահադին վտանգ
էր ներկայացնում:

«էկոնոմիստներն» այնպէս էին համարում, որ
բանալոր դասակարգը չպետք է քաղաքական պայքար
մղի, այլ այդ պայքարն ամբողջովին պիտի թողնի լի-
բերալ բուրժուազիային: Բանալորներն, ասում էին
նրանք, միայն տնտեսական պայքար պիտի մղեն:
«էկոնոմիստները» ոչ մի ուղղութիւն չէին դարձ-
նում սոցիալիստական դադարաբախտութեան, այն
ուղղութիւն թերութեան դարգացման վրա, որը պրո-

լեւտարիատին ցույց է տալիս նրա պայքարի վերջնական նպատակը:

«Մտածեցեք այն հասին, թե ինչպես կազմակերպեք ձեր կյանքը, իսկ ձեր ծոռները կյանքի հոգւոյ թողեք ձեր ծոռներին», — խորհուրդ էին տալիս էկոնոմիստները բանվորներին, ծանակելով սոցիալիստական մեծ դադարները:

«էկոնոմիստները» կարծիքով, սոցիալ-դեմոկրատներին խնդրելը ոչ թե այն էր, որ սոցիալիզմը բանվորական շարժման հետ միացնելն և պրոլետարիատի պայքարի ավանդարդում ընթանալին, այլ այն, որ համակերպվելն բանվորներին մակարդակին և սպասարկելն նրանց ընթացիկ կարիքները:

Ըստ էութեան «էկոնոմիստները» պրոլետարիատին ինքնուրույն քաղաքական պարտիա ստեղծելուն դեմ էին դուրս գալիս: Նրանք առաջինն պնդել էին, որ դեմ էին բանվորական փոխադարձ օգնութեան դրամարկիները, համարելով, որ «նրանցից ամեն մեկն ավելի թանկարժեք է շարժման համար, քան հարյուր այլ կազմակերպութեանները»:

Ռուս «էկոնոմիստները» քարոզում էին նույն հայացքները, ինչ որ արեւմտաեւրոպական սոցիալ-դեմոկրատական պարտիաներում բերնշտայնականները՝ ռեւոլյուցիոն մարքսիզմի ամենամոլիսերիմ թշնամու, Բերնշտայնի կողմնակիցները:

«էկոնոմիզմի» տարածման գործում պակաս դեր չխաղաց նույնպես և «լեզալ մարքսիստները»՝ այդ բուրժուական ինտելիգենտների, ցարական կառավարութեան կողմից թուլյաւորված մամուլի օրգաններում հանդես եկող այդ ուղեկիցներին դրականութեամբ: «Լեզալ մարքսիստները» սկսեցին ելույթներ ունենալ

անցյալ դարի 90-ական թվերին, երբ բանվորական շարժման տարերային վերելքը դարձեցրեց ինտելիգենցիայի նշանակելի խավերի, օպոզիցիոն կերպով տրամադրված ուսանող երիտասարդութեանը և լիբերալ բուրժուազիայի հասարակական ակտիվութեանը: Այդ տարիներում հետաքրքրութեամբ դեպի բանվորական շարժումը և մարքսիզմն անուշիկ կերպով աճեց: Մարքսիզմը դարձավ մոդա և ամեն տեսակի ուղեկիցներ սկսեցին խցկվել նրա մեջ: Մինչև իսկ բուրժուազիայի այնպիսի տիպիկ դադարաբախտներ, ինչպես Ստրովեն և Տուզան-Բարանովսկին, իրենց մարքսիստներ հայտարարեցին:

Յենդուրան հաշվի առնելու հարկադրված՝ ռեւոլյուցիոն սոցիալ-դեմոկրատները լեզալ հրատարակութեաններում գրում էին եզոպոսյան լեզվով, այսինքն՝ ալլաբանորեն, սահմանափակվելով տեղաբնիկներ ամենով մարքսիզմի ռեւոլյուցիոն բովանդակութեան մասին: Իսկ Ստրովեն և Տուզան-Բարանովսկին գիտակցորեն ամրացնում էին (выхолащивали) Մարքսի ուսմունքի ռեւոլյուցիոն էութեանը, համակերպելով այդ ուսմունքը լիբերալ բուրժուազիայի պետքերին: Այդ՝ Լենինի որոշմամբ՝ «մարքսիզմի արտացոլումը բուրժուական գրականութեան մեջ», որը հայտնի դարձավ «Լեզալ մարքսիզմ» անվան տակ, 90-ական թվականների կեսերին մեծ աղեկցութեամբ գործեց սոցիալ-դեմոկրատական խմբակների անվորձ անդամների վրա:

Բանտ նետված և ապա աքսոր քված Լենինը չէր դադարում պայքարելուց օպորտունիստների դեմ, որոնք խանդարում էին պարտիայի ստեղծմանը և չեղում էին բանվոր դասակարգը քաղաքական պայքարից:

Լենինի՝ 1897 թվին աքսորում գրած «Ռուս սոցիալ-դեմոկրատների խնդիրները» բրոշյուրն ուրվագծում էր պրոլետարիատի քաղաքական պայքարի գործնական ծրագիրը: Այդ բրոշյուրը կոչ էր անում «Ռուսաստանի բոլոր ծայրերում գտնվող ցարքերի բանվորական և սոցիալ-դեմոկրատական խմբակներին միավորվել մի միասնական սոցիալ-դեմոկրատական բանվորական պարտիայի մեջ»¹:

Նույն տարում Կիևի սոցիալ-դեմոկրատների մի խումբ բաց թողեց յուր օրգան «Рабочая газета»-ի առաջին համարը: «Աշխատանքի ազատագրում» խմբի անդամ Աքսելրոդը Լենինի՝ արտասահմանում հրատարակված «Ռուս սոցիալ-դեմոկրատների խնդիրները» բրոշյուրի առաջաբանում «Рабочая газета»-ի մասին գրում էր. «Լրագրի այդ համարը հենց իր բովանդակությամբ, ռուսական կյանքի փաստերի և երևույթների ընտրությամբ, նրա մեջ հաղորդվող լուրերով և այն խնդիրներով, որ խմբագրությունն առաջին պլանումն է դնում, իրենից ներկայացնում է մեծ հեղինակի ցույց տված տակտիկայի գործնական կիրառումը գրական պրոպագանդի բնագավառում»²:

Սակայն, արտահայտվելով հօգուտ պարտիայի ստեղծման, «Рабочая газета»-ի խմբագրությունն իր խնդիրը տեսնում էր միայն նրանում, որպեսզի հաղորդի բանվորներին «գիտելիքներ, որոնք սովորեցնում են յուր շահերի համար գիտակցորեն պայքար մղել» և նա փոքրիչատե միձուական պայքար չմղեց նրանց դեմ, ովքեր խանդարում էին պարտիայի միավորմանը:

¹ Լենին, հ. II, էջ 187:

² Լենին, հ. II, Հավելումներ, էջ 605:

Պլեխանովը մի նամակով դիմեց «Рабочая газета»-ի խմբագրությանը, որում հույս էր հայտնում, որ այդ օրգանը «նպաստելու է վերացնելու» քաղաքական պայքարի մասին եղած այն սխալ հայացքները, որոնք տարածված են ռուսական սոցիալ-դեմոկրատական խմբակներում և խմբերում: Լրագրի երկրորդ համարը՝ լույս տեսած Պլեխանովի նամակից հետո, արդեն ավելի որոշ էր և պարզ: Սակայն «Рабочая газета»-ն այնպես էլ չզարձակ «էկոնոմիստներին» դեմ պայքարող օրգան:

Հետագայում, երբ «Рабочая газета»-ի խմբագրությունը դիմեց Լենինին, առաջարկելով աշխատակցել լրագրին, նա սուր քննադատություն ևնթարկեց խմբագրության դիրքը, որը համարում էր, թե «Բերն-շտայնիադայի և նրա ռուսական աշտացույցներին դեմ բանավեճ մղելու առանձին կարիք չկա»: Որպես յուր աշխատակցության պայման Լենինը պահանջ առաջադրեց. ««Рабочая мысль»-ի դեմ, ես կարծում եմ, ուղղակի անհրաժեշտ է բանավեճ քարձակել»¹:

Կիևի, Պետերբուրգի և մի շարք այլ «Պայքարի միություններին» ջանքերով 1898 թվին փորձ արվեց միավորվելու և սոցիալ-դեմոկրատական պարտիական կազմելու: Նրանց նախապատրաստած ՌՍԴԲՊ առաջին համագումարը, որը տեղի ունեցավ Մինսկում, հուշակեց Ռուսական սոցիալ-դեմոկրատական բանվորական պարտիան հիմնված և «Рабочая газета»-ն պարտիայի կենտրոնական օրգանը հայտարարեց: Բայց համագումարի որոշումները մնացին սոսկ որպես ձևական ակտ: Համագումարին չհաջողվեց տեղական կազմա-

¹ Լենին, հ. II, էջ 490:

կերպով թյուներեն իրար հետ չաղկապել, ծրագրել և միասնական տակտիկական դիմ մշակել: Համադրված լինելով ընտրված Կենտրոնական Կոմիտեն չուտով ձեռք բերվեց: «Рабочая газета»-ի հրատարակումը չվերսկավեց, նրա երրորդ համարն աճյալն էլ լույս չտեսավ:

Ռուսական սոցիալ-դեմոկրատիան մնաց մասնատված բազմաթիվ անջատ տեղական կազմակերպություններով՝ չառ թույլ կերպով կապված իրար հետ: Տեղական կոմիտեների մեծ մասը «Հեկոնոմիստներին» ձեռքում էր գտնվում: Այն մի խումբ յուր խելքի կտրածով էր մեկնում տակտիկական և ծրագրային հարցերը: Շատ քաղաքներում մինչև իսկ դուզահետ աշխատում էին միջանի անջատ խմբեր, որոնք իրար հետ միանալու փորձ անգամ չէին անում: Սոցիալ-դեմոկրատներին նշանակելի մասն աճյալն էր խրվել նեղ տեղական դործերի մեջ, որ մինչև իսկ չէր փորձում առաջադրել ինքնակալության դեմ համառոտական պայքար կազմակերպելու հարցերը:

Ինչպես ասում էր Լենինը, «տարբերացման, քայքայման, տատանման» մի ժամանակաշրջան էր այդ:

«Հեկոնոմիստներին» այդպիսի դրությունը միանգամայն նորմալ էին համարում: «Հեկոնոմիստներին» առավել չիտակ լուծվել բաց թողեց մի մանիֆեստ «Կրեդո» անվան տակ: Նրանում նրանք ուղղակի դեմ դուրս եկան ուղղության մարքսիզմին և պրոլետարիատի ինքնուրույն քաղաքական պարտիայի ստեղծմանը:

Լենինը, որ այդ ժամանակ աքսորում էր գլխունում, խորհրդակցություն հավաքեց 17 ուղղություն մարքսիստներից: 1899 թ. օգոստոսի վերջին նրանք հրապարակ եկան «Կրեդոյի» հեղինակների կտրուկ

մերկացմամբ: 17-ի բողոքը մերկացնում էր «Հեկոնոմիզմի» էությունը և կոչ էր անում ուստ սոցիալ-դեմոկրատներին «...ամեն ջանք դործ դնել Պարտիայի վերջնական ամրապնդման, Պարտիայի ծրագրի մշակման, նրա պաշտոնական օրգանի վերսկսման համար»¹:

¹ Լենին, 4. II, էջ 484:

ՊԱՐՏԻԱՅԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԼԵՆԻՆՅԱՆ ՊԼԱՆԸ

Արդարապես եղած ժամանակ Լենինն սկսեց մշակել քաղաքական լրագրի՝ պարտիայի կոլեկտիվ կազմակերպչի ստեղծման իր հանճարեղ սլոանը։ Դա գործողութիւնների խնամաջան կերպով մտածված մի ծրագիր էր, որի հետ Լենինը կապում էր պարտիայի ամբողջ ապագան։

Երբ 1899 թ. Կիևում փորձ արվեց վերսկսել «Рабочая газета»-ն, Լենինն ընդունեց նրանում աշխատակցելու առաջարկը։ Նա «խմբագրական խմբին» մի հատուկ նամակ և երեք հոդված ուղարկեց։ Մակայն «Рабочая газета»-ի հրատարակումը չիրականացավ։ Լենինի հոդվածները լույս տեսան միայն հոկտեմբերյան ռեդակցիայից հետո, բայց հենց նրանցում էր, որ Լենինը զարգացրել էր լրագրի ստեղծման իր պլանը, նույն այն իսկ պլանը, որը նա հետագայում այնպես փայլուն կերպով իրացրեց «Искра»-ում։

Արդեն հոդվածների վերնագրերն իսկ—«Մեր ծրագիրը», «Մեր մերձակա խնդիրը», «Կենսական հարցը» —ընդգծում են, որ Լենինն ամբողջ պարտիական աշ-

խատանքի մեջ լրագրին վճռողական օղակի նշանակում թյուր էր տալիս։

«Մեր ծրագիրը» հոդվածը պատասխանում է այն հարցին, թե լրագրին ինչպիսի հայացքներ պետք է «սխառեմատիկ և բազմակողմանի կերպով զարգացնել»։ «...այդ ծրագրի էությունը կայանում է պրոլետարիատի դասակարգային պայքարի կազմակերպման և այդ պայքարի ղեկավարման մեջ, որի վերջնական նպատակն է քաղաքական իշխանության նվաճումը պրոլետարիատի կողմից և սոցիալիստական հասարակության կառուցումը»¹։

Այդ ծրագիրը որոշում էր լրագրի բնույթը որպես պայքարի օրգանի նրանց դեմ, ովքեր, «համախմբվելով գերմանացի սոցիալիստ Բերնշտայնի շուրջը», վերանայում են և աղճատում Մարքսի թեորիան, ովքեր բանվորական շարժման խնդիրները սահմանափակում են միայն սնտեսական շահերի պաշտպանությամբ, իսկ սոցիալ-դեմոկրատիայի դերը հանդեսնում են բանվորների կողմից գործարանատերերի դեմ մղվող տարերային պայքարի պատասխաններ։

Լենինը գրում էր, որ լրագիրը երբեք իր դերը կատարած չի լինի, եթե նա անտարբեր մնա դեպի թեորիան, եթե նա հասարակական երևույթները նկարագրելու է միայն, առանց նրանցից ընդհանրացումներ անելու և տեսական հետևություններ չանելով նրանցից։

«Մենք Մարքսի թեորիան ամենևին չենք դիտում, —գրում էր Լենինը, —որպես մի ինչ-որ ավագ-տուն և անձեռնմխելի բան. ընդհակառակը, մենք հա-

¹ Լենին, Կ. II, էջ 492։

մոգլած ենք, որ նա դրել է միայն անկյունաքարերն
այն գիտութեան, որը սոցիալիստները պիտի շարժեն
դեպի առաջ բոլոր ուղղութիւններով, եթե նրանք
չեն ուզում կյանքից հեռ մնալ: Մենք կարծում ենք,
որ ուստի սոցիալիստների համար առանձնապէս կարեւոր
է Մարքսի թեորիայի ինքնուրույն մշակումը, որով-
հետեւ այդ թեորիան տալիս է միայն ընդհանուր
գեկավարող դրույթներ, որոնք մասնավորում կերպո-
ւում են Անգլիայի նկատմամբ այլ կերպ, քան Ֆրան-
սիայի նկատմամբ, Ֆրանսիայի նկատմամբ այլ կերպ,
քան Գերմանիայի, Գերմանիայի նկատմամբ այլ կերպ,
քան Ռուսաստանի»¹:

Մարքսիզմի ստեղծադրծական հարստացումը,
մարքսիստական զիտութեան զարգացումը լրացրի ամե-
նակարեւոր պարտականութիւններից մեկն է: Ղեկա-
վարող օրգանը կոչված է խորը կերպով և դիտակա-
նորեն խմաստավորելու բանիոր դատակարգի պայքա-
րի փորձից ձեռք բերած հարստագուն փաստական
նյութը:

Մարքսիստական թեորիան զարգացնելով, պաշտ-
պանելով այդ թեորիան օպորտունիստները ռեվիզիո-
նիզ՝ լրացրին չպիտի մոռանա, որ սոցիալիզմի դա-
դարարները դեռևս չարունակում են լինել սոցիալ-
դեմոկրատների միայն առանձին, իրար հետ չկապված
խմբերի սեպականութիւնը: «Սոցիալիզմի միացումը
բանվորական շարժման հետ»—ահա Լենինի երկրորդ՝
«Մեր մերձակա խնդիրը» հոդվածի հիմնական միտքը:
Սոցիալիստական իդեալները սրբերային շարժման

¹ Լենին, հ. II, էջ 492:

մեջ մտցնելու և տեղական սոցիալ-դեմոկրատական
խմբերը մի պարտիայի մեջ համախմբելու համար մի-
այն մի ճանապարհ կա. «... մենք,—մատնանշում էր
Լենինը,—մեզ համար որպէս մերձակա նպատակ պի-
տի դնենք պարտիայի կանոնավոր կերպով լույս տես-
նող և բոլոր տեղական խմբերի հետ սերտ կերպով
կապված օրգանի կազմակերպումը»¹:

Սոցիալ-դեմոկրատիայի դործունեութեան բոլոր
տեսակները, Լենինի արտահայտութեամբ, «իրենց
նշանակութեան իննը տասերորդը կորցնում են», եթե
չկա պարտիայի ռեզոլյուցիոն կերպով լույս տեսնող օր-
դան:

Լրագրի կազմակերպման դործական կողմին Լե-
նինը նիշեր էր «Կենտական հարցը» հոդվածը:

Ռատիկանական պետութիւնը խորտակելու համար
պետք է ռեզոլյուցիոն կազմակերպութիւնը, դիսցիպլի-
նան և կոնսպիրատիվ տեխնիկան հասցնել ծայրագուն
կատարելութեան: Լենինը պահանջում էր, որ պար-
տիայի անդամները մասնագիտանան պարտիական աշ-
խատանքի առանձին կողմերի մեջ, որոնք ուղղակի
ստորադրվում են մշտական խնդրին՝ պարտիայի
օրգանի ստեղծմանը:

Ումանք,—զրուած էր նա,—«...մասնագիտանալու են
դրականութեան վերարտադրման մեջ, ուրիշները—ար-
տասահմանից տեղափոխելում, երրորդները—Ռուսաս-
տանի զանազան վայրերը հասցնելում, չորրորդները
քաղաքների մեջ ցրելում, հինգերորդները—զապոյտի
բնակարանների հարմարեցման մեջ, վեցերորդները—
փող հաւաքելում, յոթերորդները—թղթակցութիւն—

¹ Լենին, հ. II, էջ 498:

ներ և շարժման մասին ամեն տեսակ տեղեկությունները ձեռք բերելու գործը կազմակերպելում, ութերորդները—հարաբերություններ պահպանելում և այլն և այլն»¹։

Պարտիայի օրգանի մեջ այս կերպ մասնակցելը, Լենինի համոզմունքով, պետք է վերջ դնի տնայնագործականությանն ու մանրատվածությանը և «ուսուցիչն ու գործի ամեն մի «մասնակի աշխատողը» տա այն գիտակցությունը, որ նա ընթանում է «չարքում և սողանում», որ նրա աշխատանքն անմիջականորեն հարկավոր է պարտիային, որ նա հանդիսանում է մի օղակն այն շղթայի, որի օղակները պիտի խեղդեն ուսական պրոլետարիատի և ամբողջ ուսուս ժողովրդի սխեռիմ թշնամուն—ուսական ինքնակալ կառավարությանը»²։

Մոցիալ-գեմոկրատական շարժման համար դա մի նոր խոսք էր։ Լենինից առաջ ոչ ոք լրագրել վրա չէր նախել որպես պարտիայի կազմակերպման և հավաքման միջոցի վրա։ Անգամ այն տեղական կոմիտեները, որոնք գիտակցում էին տնայնագործականության և մանրատվածության վտանգը և քայլեր էին անում պարտիայի միավորման համար, կարծում էին, որ միավորումը հնարավոր է իրականացնել միայն պարտիական համադրումների անհապաղ հրավիրման միջոցով։

Այն ժամանակվա ուսու մարքսիստների առանձին խմբերի ձեռքով հրատարակվող լրագրերի վրա նույն տեղայնականության, անջատվածության և տնայնա-

գործականության կնիք էր դրված, ինչ որ պարտիական այլ տեսակի աշխատանքների վրա։ Ռուսաստանի վեց քաղաքում երկուս ու կես տարվա ընթացքում լույս տեսավ ընդամենը 30 համար լրագիր, այսինքն՝ յուրաքանչյուր անունից տարեկան միջին թվով երկուսական համար։ Այդ լրագրերը չէին դնում ամբողջ ուսական սոցիալ-դեմոկրատական շարժման համար ընդհանուր բնույթ կրող որևէ հարց և չէին կարողանում շրջապատող իրականությունը քաղաքականապես խմաստավորել։

Պարտիայի հավաքման Լենինի մշակած պլանը միակ կենսական պլանն էր։ Այն նշանակությունը, որ Լենինը տալիս էր լրագրին, որպես այդ պլանի մոտողական օղակի, բխում էր Ռուսաստանի քաղաքական կարգի կոնկրետ իրադրությունից։

Արևմտա-եվրոպական երկրներից ամեն մեկում ուսուցիչն շարժումը լրագրից զատ ուներ իր ուժերը կազմակերպելու այլ հնարավորություններ։ Խսկ Ռուսաստանում չկար ո՛չ պառլամենտական տրիբունա, ո՛չ արհեստակցական միություններ, ո՛չ տեղական ինքնավարություն։ Ռուսական մարքսիստներին միայն մի ճանապարհ էր մնում—կազմակերպել անլեզու քաղաքական օրգան։ Միայն նա կարող էր «պարտիայի կառուցվող շենքի համար միայնաձի» դեր խաղալ, բազմաթիվ անջատ խմբակների հավաքման կենտրոն դառնալ։ Միայն տպագիր օրգանը կարող էր լուրջ դեր խնել «էկոնոմիստների» իդեոլոգիական ջախջախման համար, առանց որի անխմատ էր պարտիայի համադրումների հրավիրումը։

Հետագայում՝ դարգացնելով պարտիան լրագրի օգնությամբ կառուցելու իր պլանը, Լենինը «Ինչի՞ց

¹ Լենին, Հ. II, էջ 501։

² Նույն տեղում, էջ 502։

սկսել» հոգւածում և «ի՞նչ անել» գրքում ցույց տալեց, որ դոյութիւնն ունեցող իդեական տարրն ինքնաման պարագայում մտածել անգամ չէր կարելի մոտ ժամանակում պարտիայի համադումպը հրափիրելու մասին: Այդպիսի համադումարը միայն ձեականորեն կմիախորհրդէ խմբակները: Ոչ նման ժամանակամիջոց էր պահանջվում օպորտունիստներին սահմանադատվելու, նրանց ջախջախելու և պարտիայի ստեղծումն իդեոլոգիորեն նախապատրաստելու համար:

Համադումարին պետք է նախորդէր մեծ և համառ պրոպագանդիստական աշխատանք և այդ աշխատանքը լայնազույն կերպով կարող էր իրադրծել միայն մի այնպիսի հզոր կոլեկտիվ պրոպագանդիստ, որսիւսին լրագիրն է: Մարքսի ուսմունքի ուսուցիչն պրոպագանդը բնակչութեան լայն խափելում հետաքրքրութիւն կհարուցի դեպի քաղաքականութիւնը և դեպի սոցիալիզմի հարցերը, իսկ այդպիսի լայն քաղաքական ազդեցիկան, որն արձագանգում է ընթացիկ մոմենտի ամենատուր և կենսամահաթեշտ հարցերին, միայն մի այնպիսի հզոր ազդեցատուր ուժի գործն է, որպիսին հանդիսանում է լրագիրը:

Միաժամանակ Լենինը ցույց տալեց, որ «լրագիրը ոչ միայն կոլեկտիվ պրոպագանդիստ է և կոլեկտիվ ազդեցատուր, այլև կոլեկտիվ կադմակերպիչ»: Ըստ Լենինի պլանի՝ լրագրի գործակալներին ցանցը պետք է կառուցվող պարտիայի համար որպես կմախք ծառայէր: Այդ ցանցը պետք է լինէր բախականաչափ լայն, որպէսզի ընդգրկէր ամբողջ երկիրը, բախականաչափ ամրակուր և մարտունակ, որպէսզի անշեղ կերպով տանէր իր աշխատանքը մինչև իսկ ամենամանապատ պայմաններում:

Այդպես պետք է լինէր Լենինի մտահղացած համառուսական քաղաքական լրագիրը:

«Պարտիայի գոյացման ժամանակաշրջանում, — գրում էր ընկեր Ստալինը, — երբ խմբակներն ու կադմակերպութիւններն անթիւ բազմութիւնը դեռևս իրար հետ կապված չէր, երբ տնայնադրծականութիւնը և խմբակցականութիւնը (кружковщина) մաշում էին պարտիան մերից մար, երբ դադարաբային տարրն ինքնութիւնը (разброд) կադմում էր պարտիայի ներքին կյանքի որոշ գիծը, — այդ ժամանակաշրջանում հիմնական օղակ ու հիմնական խնդիր օղակների շղթայում ու աշխատանքի շղթայում, որոնք աշխատանակ կանգնած էին պարտիայի առաջ, հանդիսացաւ համառուսական անշեղ լրագրի ստեղծումը: Ինչո՞ւ: Այն պատճառով, որ աշխատանակվա պայմաններում միայն համառուսական անշեղ լրագրի միջոցով կարելի էր ստեղծել պարտիայի ներդաշնակ միջուկ, որն ընդունակ լինէր ի մի շարկապելու անհամար խմբակներն ու կադմակերպութիւնները, նախապատրաստելու դադարաբային ու տակտիկական միասնականութեան պայմաններ և, այդպիսով, իսկական պարտիայի գոյացման հիմքը դնելու»¹:

Երկրում եղած ամբողջ իրադրութիւնը հրամայորէն թելադրում էր մարքսիստական մարտական պարտիայի ստեղծումն արագացնելու անհրաժեշտութիւնը: Ռուսաստանը ոտք էր դնում նոր ժամանակաշրջան — նա դառնում էր խմբակալիզմի բոլոր հակասութիւններին հանդուցակետը: Ռեուլցիոն շարժման

¹ Ի. Ստալին, Լենինի մի հարցերը, Կուսկրատ, 1937 թ., էջ 82—83:

Լեննորոնը սկսեց տեղափոխվել հատկապես Ռուսաստան, որն ամեն տեսակի ճնշումների օջախն էր՝ թե՛ կապիտալիստական, թե՛ դադութային և թե՛ ղինվորական:

Արդյունաբերության ճղնաժամը, որը 90-ական թվականների վերջերին պայթեց Եվրոպայում, առանձնապես սուր կերպով արտահայտվեց Ռուսաստանում: Նա սրեց բոլոր հակասությունները երկրում. բանվորներն պայքարն սկսեց ավելի և ավելի ուժեղացնել ընդդեմ:

Բանվորական շարժումը պետք է ունենար իր մարտական շտաբը, իր պարտիան: Ըստ Լենինի մտածության՝ այդ պիտի լիներ նոր տիպի պարտիա: Արևմտյան Եվրոպայի սոցիալ-դեմոկրատական պարտիաները, որոնք աճել էին պառլամենտարիզմի խաղաղ պայմաններում, նրա համար օրինակ ծառայել չէին կարող:

Բացահայտ ուժեղացնելով ընդհարումների ժամանակաշրջանը, որի մեջ ոտք էր դրել Ռուսաստանը, պահանջում էր ստեղծել հատկապես «...նոր պարտիա, մարտական պարտիա, ուժեղացնելով պարտիա, որը պետք է բավականաչափ համարձակ լինի, որպեսզի պրոլետարներին առաջնորդի պայքարի հանուն իշխանության, բավականաչափ փորձված լինի, որպեսզի ուժեղացնի իրադրության բարդ պայմաններին դեմ հանի և բավականաչափ ճկուն լինի, որպեսզի խուսափի իր նպատակի ճանապարհին եղած բոլոր և ամեն տեսակ ստորջրյա քարերից»¹:

Դեռևս արքայորոմ եղած ժամանակ Լենինը եռանդուն կերպով սկսեց նախապատրաստել լրագրի հրատարակումը, որը պիտի կարողանար այսպիսի պարտիայի հիմքը դնել: Նա նամակադրություն ուներ պետերբուրգյան «Բանվոր դասակարգի աղատաբանական պայքարի միության» նախկին մասնակիցների հետ: Այնուհետև, արքայից վերադառնալով, նա անձամբ եղավ Ուֆայում, Մոսկվայում, Պետերբուրգում: Ամեն տեղ Լենինն ընկերների հետ քննարկում էր իր պլանը, պայմանավորվում էր թղթակցությունների ուղարկման մասին, ծածկագրերի ու հասցեների մասին:

¹ Ի. Ստալին, Լենինի դժի հարցերը, Կուսհրատ, 1937 թ., էջ 87—88:

ՌԵՎՈԼՈՒՑԻՈՆ ՄԱՐՔՍԻՍՏՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՌՈՒՍԱԿԱՆ ԼՐԱԳԻՐԸ

✓ 1900 թվի դարնանը Լենինը Պսկովում՝ խորհրդակցություն հրավիրեց համառուսական քաղաքական լրագրի հրատարակման հարցի առթիվ: Այդ խորհրդակցությունից մեջ որոշվեց, որ «ռուս սոցիալ-դեմոկրատները մի խումբ» — Լենինը, Մարտովը և Պոսրեսովը — ձեռնարկում է տպագրել օրգանի հրատարակություն: Խորհրդակցության մեջ քննարկեցին նաև ապագա լրագրի ծրագրերը: Դա «Искра»-ի և «Заря»-ի խմբագրություն հայտարարության նախագիծն էր, գրված Լենինի ձեռքով:

Ընդհանուր դեերով նկարագրելով այն ծանր դրությունը, որի մեջ այն ժամանակ գտնվում էր սոցիալ-դեմոկրատիան, և ցույց տալով «էկոնոմիստները» և «լեզալ մարքսիստները» ապականիչ ազդեցությունը բանվորական շարժման վրա՝ «Հայտարարությունը» գործնական ծրագիր է նշում այն օրգանների համար, որոնց ստեղծումը «մի անհրաժեշտ, նախադատարանական քայլ է պարտիայի գործունեությունը վերսկսելու համար»:

Լենինն ի հակակշիռ «էկոնոմիստներին», որոնք քամահրում էին ռևոլուցիոն թեորիան, լրագրի աշխատանքի մեջ առաջին տեղը զնում էր տեսական և քաղաքական հարցերը: Նա ընդգծում էր, որ ռևոլուցիոն մարքսիստական լրագիրը ոչ թե ստակաբար պետք է նկարագրի այն երևույթները, որ տեղի են ունենում Ռուսաստանում, այլև պետք է տեսականորեն նրանց ընդհանրացնի: Միայն բարձր իդեական տեսական մակարդակը և մարքսիզմի ռևոլուցիոն զիրքերից ելնելով շարժման ամեն մի ստանձին փաստը ճիշտ կերպով դնահատել կարողանալն է, որ կարող են օրգանը դարձնել ղեկավարող:

Լենինն այդպիսի մի օրգանի համար լայն ծրագիր նշեց.

«... սոցիալ-դեմոկրատական բանվորական պարտիան պետք է արձագանգի կյանքի առաջադրած հարցերին բոլոր բնագավառներում, և ներքին և միջազգային քաղաքականությունից հարցերին, և մենք պիտի ձգտենք այն բանին, որ ամեն մի սոցիալ-դեմոկրատ և ամեն մի գիտակից բանվոր բոլոր հիմնական հարցերի նկատմամբ իր որոշ հայացքները կադմի, — առանց այդ պայմանի անհնարին է լայն և պլանաչափ պրոպագանդա ու ագիտացիա: Թեորիայի և քաղաքականության հարցերի քննարկումը կապվելու է պարտիայի ծրագրի մշակման հետ, վերի անհրաժեշտությունը ճանաչված էր դեռ 1898 թվի համագումարի կողմից, և մենք մոտ ապագայում մտադիր ենք հրապարակել ծրագրի նախագիծը, որի բաղմակողմանի քննարկումը պետք է բավականաչափ նշույթ տա ապագա համագումարին, որի առաջ կկանգնի ծրագրի ընդունման խնդիրը: Այնուհետև մենք առանձնապես

կենսաանհրաժեշտ խնդիր ենք համարում կազմակերպման և գործը գործնականորեն մշակելու եղանակների հարցերի քննարկումը»¹։

Լենինի «Խմբագրության հայտարարության նախադիժը» մեծակարգի խորտակում էր տրադիցիոն հայացքները լրագրի միտ ուղեւ գոյտ գրական ձեռնարկման և կրկին ընդդժում էր, որ օրգանի կենտրոնական խնդիրը հանդիսանում է «սոցիալիզմի միացումը բանվորական շարժման հետ»։

«Էկոնոմիստներն» իրենց հրատարակությունների խմատը հանդեցնում էին մանրախույզ (крохоборческий) և մանր խնդիրների լուսաբանման։ Օրինակ, «Рабочая мысль» լրագիրն այսպես էր յրոշում իր ծրագիրը։

«1) Բանվորների իրավական և նյութական դրության պարզաբանումը, 2) մեր օրենսդրության դրան համապատասխանող պարագրաֆների պարզաբանումը, 3) գործադուլներին, սաբոտաժին, փոխադարձ օգնության դրամարկներին, սպառողական և կրթական ընկերություններին մերաբերող հարցերի պարզաբանումը, և 4) ինֆորմացիա բանվորներին նյութական և իրավական դրության մասին Արեւմուտքում»։

Իսկ Լենինը պատկերացնում էր ապագա լրագիրը որպես օրգան, որը չի սահմանափակվում միայն բանվորական կյանքի փաստերի նեղ շրջանով։ Ապագա լրագրի մեջ նա տեսնում էր ասելի միապետության դիմակադերժման մի համաժողովրդական տրիրոնա։

«... Մենք անհրաժեշտ ենք համարում ձգտել, — գրում էր Լենինը, — մեր օրգանները դարձնելու ընդ-

հանուր-դեմոկրատական օրգաններ, — ոչ թե այն իմաստով, որ մենք թեկուզ մի բուսեով համաձայնվելնք մոռանալ դատակարգային հակամարտության մասին պրոլետարիատի և այլ դատակարգերի միջև, որ մենք չենք չափով անդամ թուլատրում ենք դատակարգային պայքարի սքողումը, — ոչ, այլ այն իմաստով, որ մենք առաջադրենք և քննարկենք բոլոր դեմոկրատական խնդիրները, չսահմանափակվելով միայն նեղ-պրոլետարական խնդիրներով, առաջադրենք և քննարկենք քաղաքական ճնշման բոլոր դեպքերը և արտահայտությունները, ցույց տանք այն կապը, որ կա բանվորական շարժման և իր բոլոր ձևերով արտահայտվող քաղաքական պայքարի միջև, դրավենք միապետության դեմ բոլոր աղնիվ պայքարողներին, ինչ հայացքներ էլ նրանք ունենան, ինչ դատակարգ էլ նրանք պատկանելու լինեն, դրավենք նրանց աջակցություն ցույց տալու բանվոր դատակարգին, որպես միակ ունողներին և արսողություններին անդառնալի թընամական ուժին»¹։

Այսպես լայն կերպով մտահղացված լրագիրը կարիք ուներ միջոցների, կասերի, դրական ուժերի։ Համախմբելով ապագա օրգանի շուրջը սոցիալ-դեմոկրատներին՝ նախկին «Բանվոր դատակարգի ազատագրության պայքարի միության» մասնակիցներին խումբը, Լենինը նպատակահարմար էր համարում լրագրի համար օգտագործել նաև այնպիսի մարդկանց ուժեր, ինչպես Ստրուվեն, Տուզան-Բարանովսկին։ Խոսքն, իհարկե, վերաբերում էր ոչ թե «լեզալ մարքսիզմի» նկատմամբ ունեցած վերաբերմունքի վերաքննությանը,

¹ Լենին, հ. IV, էջ 8։

¹ Լենին, հ. IV, էջ 12։

որի դեմ Լենինը վճռական պայքար էր մղում, այլ միայն այն հնարավորությունների օգտագործմանը, որ տրամադրում էին «Իսկրային» մարքսիստական շարժման այդ ժամանակավոր ուղեկիցներին՝ դրական շրջաններում ունեցած լայն կապերը և խոշոր նյութական միջոցները։ Այդ նպատակով էլ նրանք հրավիրվեցին սրկովյան խորհրդակցությանը։

Տուգան-Բարանովսկու միջանի ճառերից հետո, որոնցում նա պնդում էր «մարքսիզմի ուսկիզիայի» դեմ ուղղված «խմբագրության հայտարարության նախագծի» փոփոխման վրա, պարզ եղավ, որ «լեզալ մարքսիստներին» հետ համաձայնություն չի կայանալու։ Լենինը լրագրի դիմը դիմել չէր կարող։ Ինչպես նշում է իր հիշողություններում Մարտովը, Ստրովսկի հետ կայանալիք համաձայնությունը «Ուլյանովին ինքն իր մեջ պատկերացնում էր... «քարը կոնստակին թաքցրած», ընդամին, ինչպես հետագայում պարզվեց, անհրաժեշտ չէր համարում այնպես թաքցնել այդ քարը, որ շատ էլ հայտնի կերպով դուրս ցցված չլիներ»¹։

Որոշվեց լրագիրը հրատարակել «Ալխատանքի ազատագրություն» խմբի հետ միատեղ։ Ապագա օրդանի համար այդ մեծ նշանակություն ուներ։ «Ալխատանքի ազատագրություն» խումբը շատ բան արեց մարքսիզմի դադախարների տարածման համար Ռուսաստանում։ Նա առաջինը նարոդնիկներին խորտակիչ հարված հասցրեց. նա խիստ սուր կերպով դեմ դուրս եկավ «էկոնոմիստներին» և 1900 թ. ապրիլին կազմակերպորեն իր կապը խզեց «Ռուս ս.-դ.-ի միություն» հետ, որն «էկոնոմիստներն» իրենց ձեռքն էին վզել։

¹ «Ленинский сборник», IV, стр. 56.:

Այն հեղինակությունը, որ վայելում էր «Ալխատանքի ազատագրություն» խումբը և հատկապես Պլեխանովը ոչ միայն ռուսական, այլև միջազգային սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններում, հեշտացնում էր այդ դժվար դործի՝ քաղաքական լրագրի ստեղծման սկիզբը։

«Ալխատանքի ազատագրություն» խումբը ողջունեց լրագրի ստեղծման ինիցիատիվը։ Աքսելրոդը Լենինին հանդիպելիս այդ «դրական ձեռնարկում» անվանում էր «վերածնություն» «Ալխատանքի ազատագրություն» խմբի համար և ասում էր, որ խմբի համար ավելի ինչ կապված է այդ ձեռնարկման հետ։ Բայց «Ալխատանքի ազատագրություն» խմբի անդամները ապագիր օրդանը դիտում էին ամենից առաջ որպես դրական ձեռնարկում և դառնում էին, թե ինքնըստինքյան հասկանալի է, որ նրա ղեկավարությունն անբաժանորեն (безраздельно) պիտի պատկանի այնպիսի փորձառու և բոլորի կողմից ճանաչված տեսաբանի ու դրականագետի, որպիսին Պլեխանովն է։

Իսկ Լենինի համար, չնայած նրա ամբողջ հարգանքին դեպի Պլեխանովի ծառայությունները (к заслугам), պարզ էր, որ Պլեխանովի ղեկավարությունը կարող էր լրագիրը հասցնել ռուսական սոցիալ-դեմոկրատական շարժման կենսաանհրաժեշտ խնդիրներից խզվելուն և դարձնել այն ուղուց իրոն պայքարի պրակտիկայից հեռու դառնալ, արտասահմանյան դրակա-նադեմոկրատի մի խմբի արատալիտ, տեսարանող օրդան։

«Ալխատանքի ազատագրություն» խմբի ներկայացուցիչների հետ Լենինի հենց առաջին հանդիպումների ժամանակ հայտնի եղավ, որ նրանց մտադրությունն է լրագրի խմբագրումն ամբողջովին հանձ-

նել Պրեխանովին: Սուր կոնֆլիկտ առաջացավ, որը
Լենինը նկարագրել է իր հիշագրերում «Թե ինչպես
քիչ էր մնացել, որ «Искра»-ն հանդէներ» բնորոշ խո-
րագրի տակ:

Այնուամենայնիվ Լենինին հաջողեց խմբադրու-
թյան բոլոր անդամների համար հարցերի մեծամասն մեջ
հավասար իրավունքներ ձեռք բերել: Բայց արդեն
այդ առաջին բաղխումը պարզորոշ կերպով ցույց
տվեց, թե Լենինին ինչ բարդ իրադրության մեջ պետք
է միջնակից լինել իր պլանն իրադրութեւ, թե ինչ-
պիսի դժվարություններ պետք էր հաղթահարել հենց
իր՝ խմբադրության ներսում: «Արտաքուստ կարծես
առանձին ոչինչ չի պատահել,—գրում էր Լենինը,—
ամբողջ մեքենան պիտի ընթանա, ինչպես որ ընթա-
ցել է,—միայն թե ներսում մի ինչ-որ լար կտրվել է,
և շատ լավ անձնական հարաբերությունների փոխա-
րեն սկսվել են չոր, դործային հարաբերություններ,
հիմնված մշտական հաշիվ վրա՝ ըստ Փորմուլայի
si vis pacem, para bellum (եթե խաղաղություն ես
ուզում, պատրաստ պատերազմի)»¹:

Վերջապես, խմբադրության կազմը մերջնականա-
պես որոշվեց: Մինչև իսկ պայմանագիր էլ գրվեց խմբ-
ադրության ներսում ունենալիք փոխհարաբերու-
թյունների մասին, որին դիմելու կարիքը հետագա-
յում, ճիշտ է, չեղավ: Վերադասութուն էր արված, որ
«Заря» ժուռնալը և «Искра» լրագիրը հրատարակվում
են ուստ սոցիալ-դեմոկրատների մի խմբի ձեռքով
(Լենին, Մարտով, Պոտրեսով), «Աշխատանքի ազա-
տագրություն» խմբի խմբադրական մասնակցությամբ

¹ Լենին, հ. IV, էջ 30:

(Պրեխանով, Աքսելրոդ, Ջասուլիչ): Նախատեսված էր
միջնակի հարցերի լուծման, հոգևածները համաձայնեց-
ման և այլն կարգը: —

Վերջապես, 1900 թվի դեկտեմբերին արտասահմա-
նում լույս տեսավ «Искра» լրագրի առաջին համարը,
«Կայծից բոց կրոնկի» բնաբանով:

«Եվ իսկապես, Լենինի վառած «Искра»-ից (Կայ-
ծից) հետագայում բոնկեց ուսուցիչն մեծ հրդեհի
բոցը, որն իսպառ այրեց աղնվական-կալվածատիրա-
կան ցարական միապետությունը և բուրժուական իշ-
խանությունը»¹:

«Աշխատանքի ազատագրություն» խմբի հետ հա-
մաձայնություն կայացնելով և նրա հետ միատեղ «Ис-
кра»-ի հրատարակմանը ձեռնարկելով, Լենինը բազ-
միցս շեշտում էր.

«Մենք մի առանձին զրական խումբ ենք ներ-
կայացնում մեզին: Մենք ուզում ենք ինքնուրույն
մնալ: Մենք հնարավոր չենք համարում դործը վարել
առանց այնպիսի ուժերի, ինչպես Պրեխանովը և «Աշ-
խատանքի ազատագրություն» խումբը, բայց այստե-
ղից ոչ ոք իրավունք չունի եզրակացնելու, քե մենք
կորցնում ենք մեր ինքնուրույնությունը քեկուզ մի
մասնիկը»²:

Լենինը հարկադրված էր ամենաբարդ ներխուժա-
յրական փոխհարաբերությունների իրադրության մեջ
պաշտպանել իր ինքնուրույնությունը և հակառակն
կերպով ստեղծել լրագրի ուսուցիչն կերպարանը:
Խմբադրության կազմն ամենևին միատարր չէր: «Աշ-

¹ Համկ(ր)Պ պատմություն, համառոտ դասընթաց, Պետքաղ-
հրատ, 1938, էջ 34:

² «Ленинский сборник», I, стр. 62:

խառնաճիւղի ազատագրութիւն» խմբից «Искра»-ի խմբագրութեան մեջ մտնող ամենաաչքի ընկնող անդամը Պլեխանովն էր: Նա այդ ժամանակ սոցիալ-դեմոկրատներէ մեջ ամենաժողովրդական մարդն էր և բացառիկ հեղինակութիւն էր վայելում: «Նրա անձնական ծառայութեանները, — գրում էր Լենինը, — անցյալում ահապէս էին: 20 տարւա ընթացքում, 1883—1903, նա սովել է մեծ քանակութեամբ գերազանց երկեր, առանձնապէս օպորտունիստների, մախիատների, նարոդնիկների դէմ»¹:

Պլեխանովի թեորետիկական ելույթներն «Искра»-ում ընթերցողներին վրա մեծ ազդեցութիւն էին գործում և շատ բաներում նպաստում էին տարրնթացութեանը և տատանումները հաղթահարելուն:

Պլեխանովն «Искра»-ում շատ հոգւովածներ գրել է Լենինի առաջադրութեամբ: Պլեխանովը Լենինի պնդումով զրոյացեց պարտիայի ծրագրի նախագծի մշակմամբ: Լենինի՝ «Искра»-ում բարձրացրած շատ հարցեր Պլեխանովի կողմից ջերմորեն պաշտպանւում էին: Նա ջանջախում էր «էկոնոմիստներին», որոնք Լենինի հոգւովածներին դեմ էին ելնում:

Լենինի հռչակաւոր «Ինչի՞ց սկսել» հոդւածը, որ հանդիսանում էր «Ի՞նչ անել» գրքի սկզբնական կոնսպեկտը, ապադրվեց «Искра»-ի 4-րդ համարում և «էկոնոմիստներին» բանակում մի ամբողջ փոթորիկ առաջացրեց: Պլեխանովը հանդես եկաւ Լենինի հոգւովածի քննադատների դեմ ուղղված մի թունոտ պատասխանով:

«Искра»-ի խմբագրութեան մեջ Պլեխանովն ամեն-

նից ալելի Լենինին էր մոտիկ: «Մի բանի հաւատացած եղեք. — գրում էր նա Լենինին, — ես Ձեզ խորապէս հարգում եմ և կարծում եմ, որ ես և դուք միմյանց 75%-ով ալելի մոտ ենք, քան «կոլեկիայի» մյուս բոլոր անդամներին. մնացյալ 25%-ի չափով տարբերութիւն կա, բայց չէ՞ որ 75-ը 25-ից երեք անգամ սովել է և հանուն համամտութեան հարկաւոր է մոռանալ տարաձայնութեան մասին»¹:

Լենինի և Պլեխանովի տարաձայնութիւնները բղխում էին նրանից, որ Պլեխանովը լուրջ սխալներ ուներ: Պլեխանովը հաշիւ էր առնում, որ պրոլետարիատը կարող է հաղթել ցարիզմին միայն դյուղացիութեան հետ դաշնակցած, հաւատ չունեւ դեպի դյուղացիութեան ունեւցիւն հնարաւորութիւնները, այլ իր բոլոր հույսերը դնում էր լիբերալ բուրժուազիայի վրա: Այդ սխալ հայացքները, որոնք արտահայտված էին դեռ «Աշխատանքի ազատագրութիւն» խմբի ծրագրում, Պլեխանովի ապագա մենչեւիկյան հայացքների սաղմը հանդիսացան:

Պլեխանովի սխալները սուր ընդհարումներ և վեճեր էին առաջացնում «Искра»-ի խմբագրութեան ներսում: Բայց Լենինը Պլեխանովի վրա խիստ ունդուցիւնացնող ազդեցութիւն էր գործում և ջանք էր անում, որ խմբագրութեան ներսում եղած տարաձայնութիւնները չանդրադառնան լրագրի հետեւողականորեն ունեւցիւն գծի վրա: Լենինի ազդեցութեան տակ Պլեխանովը, որն իրեն միշտ անառարկելի հեղինակութիւն էր համարում, ուղղում էր իր շատ ձեւակերպումները և մինչև իսկ գրում էր այնպիսի հոգւոված-

¹ Լենին, հ. XVII, էջ 415—416:

¹ «Ленинский сборник», III, стр. 430:

ներ, որոնցով երբեք հանդես չէր գա առանց Լենինի ներգործութեան:

«Ես մինչև ակաճներս զբաղված եմ,—գրում էր Պլեխանովն Աքսելրոդին,—Ստրուվեի դեմ ուղղված մի հոգևածով, որը նրանք նույնպես պահանջում են»: Այս «նրանք» բառիկը բնորոշ է Պլեխանովի վերաբերմունքի համար դեպի «Искра»-ն, որում նա մասնակցում է, հոգևածներ է դետեղում և միևնույն ժամանակ գտնում է, որ օրվանը—«նրանց» է, որ «նրանք» (այսինքն՝ Լենինը) հարկադրում են հոգևածներ գրել լիբերալների դեմ:

Պլեխանովն ինքն իր այսպիսի վերաբերմունքը դեպի «Искра»-ն բացատրում էր իր խզվածությամբ ուսուցչի պաշարի պրակտիկայից, նրա կենսաանհրաժեշտ կարիքներից:

Նա ինքը գիտակցում էր իր անջատվածությունը: Երբ Լենինն առաջարկեց նրան «Искра»-ում գրել Փաբլիի կոմունայի մասին, Պլեխանովը պատասխանեց՝ «Իսկ Կոմունայի մասին կարելի է գրել, միայն թե Կոմունան ավարտվում է ինչ պատմություն է: Ինձնում ցանկություն կա ընթացիկ իրադրությունների մասին գրելու, իսկ դրա համար հարկավոր է Ձեր ոգով և Ձեր նորություններով համակել»¹:

Պլեխանովի համար այդ չափազանց դժվար էր: Կտրված լինելով ուսական իրականությունից և ուսուցչի պրակտիկայից, նա «Заря» ժուռնալն ակներև կերպով դերադասում էր «Искра»-ից և բազմիցս կրճատվում էր Լենինին «Искра»-ի աշխատանքի նկատմամբ չափից ավելի ուշադիր լինելու համար:

«Заря» ժուռնալը «Искра» լրագրին հակադրվելը ցույց է տալիս, որ Պլեխանովը չէր ըմբռնում լրագրի մարտական քաղաքական դերը:

Մինչդեռ Լենինն ազահոսությամբ վրա էր ընկնում Ռուսաստանից ստացվող ամեն մի հաղորդման, ամեն մի նամակի—ուսուցչի աշխատանքի մասին, բանվորների վերաբերմունքի մասին դեպի «Искра»-ն—Պլեխանովին բանվորների և պարտիական աշխատողների նամակները, ուսուցչի պաշարի պրակտիկաների կենդանի տողերն ըստ էության չէին հուզում:

Լենինի ընկերը և մերձավորագույն օգնականը՝ Նադեժդա Կոնստանտինովնա Կրուպսկայան, վերհիշում էր, թե ինչպես ինքը «Искра»-ի քարտուղար եղած ժամանակ փորձում էր Պլեխանովին ցույց տալ Ռուսաստանից ստացված թղթակցությունները և նամակները: «... Ինձ դարձացնում էր,—գրում է նա,—թե ինչպես է նա անդրադառնում այդ նամակներին. կարծես նա իր ոտքերի տակից հողը կորցնում էր, նրա դեմքի վրա ինչ-որ անստահություն էր հայտնվում, երբեք նա հետո այլևս այդ նամակների և թղթակցությունների մասին չէր խոսում»¹:

Պլեխանովն այսպես էր վերաբերվում «Искра»-ին նրա՝ բանվոր դատակարարի մեջ աճող կապերին, որոնք Լենինն այնքան թանկ էր դնահատում:

✓«Աշխատանքի ազատագրություն» խմբից խմբագրության կազմի մեջ մտնող Երկրորդ անդամը՝ Աքսելրոդը ուսական իրականությունն իրեն բուրրովին աղյուս կերպով էր պատկերացնում: Նա Ռուսաստանից տարադրվել էր 1874 թ., երբ դեռևս մասսայական

¹ «Ленинский сборник», III, стр. 160—161:

¹ Н. К. Крупская, Воспоминания о Ленине, стр. 45, 1933 г.

բանվորական շարժում չկար: Շատ տարիներ էմի-
գրանտական շրջաններում անցկացրած լինելով, նա
չափ հեռավոր պատկերացում ուներ Ռուսաստանում
ստեղծված նոր իրադրություն մասին, ուսուցիչին
պայքարի երեք տասնամյակի ընթացքում աճած մարդ-
կանց մասին:

Աքսելրոզն իր՝ «Искра»-ում աշխատելու առաջին
իսկ օրերում խոստովանելից Լենինին, որ նա, իսկա-
պես, ղեկավարվում է «մեր ընթերցողներին մասին
ունեցած իմ բավական աղետ պատկերացումով, ավել-
լի շուտ՝ իմ վաղեմի փորձից ստացած սպալնորու-
թյունների հիշողությունով»¹:

Բացի դրանից, նա հաճախ հիվանդանում էր և
զբաղված էր լինում անձնական գործերով: «Աքսել-
րոզը բոլորովին չէր աշխատում, — գրում է Լենինը,
«Искра»-ի խմբագրության անդամների աշխատանքի
հանրազումարը տալով, — (0 = զրո հոդվածներ
«Заря»-ում և 3—4 հոդված «Искра»-ի բոլոր 45 հա-
մարներում)»²:

✓ «Աշխատանքի ազատագրություն» խմբի երրորդ
ներկայացուցիչը խմբագրությունում Վ. Ի. Չասու-
լիչն էր, որը ուսուցիչին պայքարի մեջ էր մտել դեռ
60-ական թվականների վերջերին: Նարոդնիկական
խմբակներում մասնակցելով, նա մահափորձ էր կա-
տարել Պետերբուրգի քաղաքապետ Տրեպովի վրա:
Հետագայում Չասուլիչն անցավ մարքսիզմի դիրքերը,
մասնակցեց «Աշխատանքի ազատագրություն» խմբի
հիմնադրման մեջ: Նա ղեկավար դեր էր կատարում

քաղաքական լրագրում և «Искра»-ում գետեղեց մի-
այն յոթը, այն էլ ոչ ղեկավար հոդվածներ: Իսկ մի
փոքրիկ էպիգրոլ խմբագրության մեջ նրա տարած աշ-
խատանքից՝ բնորոշում է նրան որպես կայունությամբ
չափ փոքր չափով օժտված խմբագրի: ✓

«Искра»-ն համառ և հետևողական պայքար էր
մղում տեռորիզմի դեմ: Լենինը և Պլեխանովը մի շարք
հոդվածներում մերկացնում էին և տեռորիզմի գաղա-
փարախոսությունը, և իրենց՝ տեռորիստներին, որպես
մատույցական ուսուցիչին շարժման վատթարագույն
կադմալուծիչներին: Մի անգամ հարկ եղավ, որ Լենի-
նը միջանի օրով բացակայի Լոնդոնից, որտեղ այդ
ժամանակ գտնվում էր խմբագրությունը: «Искра»-ի
հերթական համարը նրա ձեռքով արդեն ամբողջովին
պատրաստված էր: Այդ ժամանակ Չասուլիչն ու
Մարտովը հաղորդում ստացան, որ ի պատասխան
Վիլնյոյում բանվորների նկատմամբ դրժադրած էկ-
զեկուցիայի Գիրշ Լեկերտը կրակել է Վիլնյոյի նահան-
գապետ Փոն-Վալի վրա: Չասուլիչն ու Մարտովը
չզսպեցին իրենց և համարում, որը Լենինն արդեն
հանձնել էր տալագրելու, իրենց կողմից հավելագրում
արին: Եվ ահա 21-րդ համարում լույս տեսավ խմբա-
գրության ծանոթագրությունը հետևյալ բովանդակու-
թյամբ.

«Միանգամայն արժանի և տվյալ պայմաններում
անխուսափելի պատասխան հանդիսացավ Փոն-Վալի
վրա մայիսի 5-ին կատարած մահափորձը: Ուրախա-
գին զգացմունքի դիտակցությունը, թե կստավարու-
թյան կատարած անօրինակ հանցագործությունն ան-
պատիժ չանցավ, մեր մեջ մռայլվում է միայն այն

¹ «Ленинский сборник», III, стр. 106:

² Լենին, Հ. VI, էջ 70:

ապետոսանքով, որ մահապիտոճը լիովին հաջող չի ան-
ջել»¹ :

Այս միջանկի տողը բացահայտ կերպով ցույց էին
տալիս, որ Զասուլիչը դեռևս լրիվ կերպով չէր
ազատվել իր դեպի տեռորիզմն ունեցած համակրանք-
ներից :

Ծանոթագրությունները սուր բողոք առաջացրեց Լե-
նինի և Պլեխանովի կողմից :

«Լեկերաի մասին «Искра»-ում տպված դիտողու-
թյան պատճառով, — գրում էր Լենինը Պլեխանովին, —
ես մի փոքրիկ մարտ ունեցա Բերգի հետ [Յու. Օ.
Մարտով] և Վեկիկայա Դմիտրիևնայի հետ [Վ. Ի.
Զասուլիչ], որոնք երկուսն էլ, ինչպես կարգն է,
ջգայնացան և սկսեցին խոսել տեռորի անխուսափե-
լիություն մասին և որ անհրաժեշտ է, որ մենք (այս
կամ այն կերպ) այդ իմաստով արտահայտվենք»¹ :

«Искра»-ի հետևյալ համարներում լույս տեսավ
Պլեխանովի հոդվածը՝ ուղղված տեռորիզմի դեմ և
Լենինի հանրածանոթ, էսենցիաների և տեռորիստների
խորտակման դործում պատմական դեր կատարած հոդ-
վածը՝ «Ռեզոլուցիոն ավանտյուրիզմի մասին» : Զա-
սուլիչի ծանոթագրությունը, իհարկե, «Искра»-ի դի-
ժը չփոխեց : Բայց նա վառ կերպով բնորոշում է այն
դժվարին իրադրությունը, որում Լենինին վիճակված
էր տանել իր գիծը :

«Աշխատանքի ազատագրություն» խմբից եկած
խմբագրակիցները խանգարում էին Լենինին իրենց
«խնամակալություն» և ի վիճակի չէին սեպագիր գործ-
նական աշխատանք կատարելու :

¹ Լենին, հ. XXVIII, էջ 279 :

✓ Դրանով էլ բացատրվում է, որ մինչդեռ Պլեխա-
նովն ու Աքսելրոդն ապրում էին Շվեյցարիայում,
«Искра»-ի խմբագրությունն ու Լենինը սկզբում գրա-
նելում էին Մյունխենում, իսկ հետո՝ Լոնդոնում :
«Искра»-ի հրատարակման երեք տարվա ընթացքում
խմբագրության անդամներն այնպես էլ ոչ մի անգամ
իրենց լրիվ կազմով չհավաքվեցին միասին :

Այն հարցը, թե խմբագրությունը որտեղ պիտի
լինի և լրագրիչը որտեղ պիտի տպագրվի, բողոքովին
երկրորդական չէր և բաղժիցս վեճերի և ընդհարում-
ների առիթ էր դառնում : Երբ կոնսպիրացիայի պայ-
մանների պատճառով խմբագրությունը ստիպված էր
հեռանալու Մյունխենից, Լենինն ամենայն վճռակա-
նությամբ պնդեց խմբագրությունը Լոնդոն տեղափո-
խելու վրա : Պլեխանովն այդ առթիվ տաղնապ բարձ-
րացրեց : Նա գրում էր Աքսելրոդին .

«Այն տեղից, որտեղ նրանք գտնվում են, բոլորն
էլ պետք է հեռանան. ոստիկանությունը արգեն սկսել
է իր հետախուզությունները : Հիմա հարց է ծագում,
թե ուր տեղափոխվեն նրանք : Ես ահա գրում եմ, որ
զնան ժընե : Դու ևս գրիր : Այդ ահագին աղդեցու-
թյուն կունենա մեր հրատարակությունների ապագայի
վրա : Եթե նրանք զնան Լոնդոն, կամ նույնիսկ
Բրյուսսել, ուրեմն մենք նրանցից էլ ավելի կհեռա-
նանք : Իսկ այդ դժբախտություն է : Շտապում եմ :
Քն Գ. Պ.»¹ :

«Искра»-ի խմբագրությունն այնուամենայնիվ
տեղափոխվեց Լոնդոն : Այն մասին, թե ինչ նշանակու-

¹ Переписка Г. В. Плеханова и П. Б. Аксельрода, т. II,
стр. 169 :

Թյուն պիտի ունենար թե՛ թերթի և թե՛ «Заря» ժուռնալի համար Շվեյցարիա տեղափոխվելը, Պոտրեսովը դրո՞ւմ էր:

Ինչ վերաբերում է «Заря»-ի հանձնման, — դրո՞ւմ էր նա Լենինին 1902 թ. ապրիլի 8-ին, — և նրա ժընե տեղափոխվելուն, ես անպայման դեմ եմ: Այդ ապա-նություն է: Ժուռնալը, թեպետ և նվազ չափով, քան լրագիրը, դարձյալ կարող է հանդիսանալ կազմակերպող, հավաքող սկզբունք: Գ. Վ. [Պլեխանովը] այդ բանն ի վիճակի չէ կատարելու: Այնուհետև այդ նրա չեֆ-խմբագրության ներքո թերթը հետզհետե իր բնույթը կփոխի և կդառնա ավելի արատրակտ, ախա-դեմիկ: Ես այդ մասին դատում եմ ըստ իմ ժընեյան հիշողությունների: Հիշո՞ւմ եք, թե, ինչպես եր նա պլանավորում ժուռնալի առաջին համարը»¹:

Պլեխանովից ու Աքսելրոդից տերիտորիալես հե-ռու լինելը ահաբեկ ժամանակ և էներգիա էր խլում գրադրության և հոգևածների համաձայնեցման հա-մար: Բայց այդ հեռավորությունը վերջին հաշվով Լենինի համար այնուամենայնիվ հեշտացնում էր պարտիայի ստեղծման այն ահաբեկ իդեոլոգիական և կազմակերպչական աշխատանքը, որը նա ծախսել էր «Искра»-ում:

Միասին աշխատելու դժվարությունները կրկնապատկվում էին նաև նրանով, որ խմբագրության «ռուս սոցիալ-դեմոկրատների խմբից» եկած անդամ-ներն ամենևին միակարծիք չէին, որ Լենինն ամենու-վին չէր կարող միշտ էլ հենվել Մարտովի և Պոտրե-սովի վրա:

¹ «Ленинский сборник», IV, стр. 96—97:

✓ Պոտրեսովը, որն «Искра»-ի իննը հոգևածների հեղինակն էր, սահմանափակվում էր միայն աշխատակ-ցությամբ ու խորհրդով և երբեք, Լենինի ասելով, «զուտ խմբագրական աշխատանք չէր կատարում»¹:

«Պոտրեսովը նրա խմբագիրն էր (հին «Искра»-ի — իմը), — դրո՞ւմ էր Լենինը, — բայց ոչ թե նա էր վա-րում հին «Искра»-ն, այլ հին «Искра»-ն էր վարում նրան»²:

Պոտրեսովն աչքի էր ընկնում ծայրահեղ անկայու-նությամբ: Հենց Պոտրեսովի այդ անկայունությանն է նվիրված Նչանավոր լենինյան ֆելետոնը՝ «Սոցիալ-դեմոկրատական հոգյակ», զբված ավելի ուշ, երբ Պոտրեսովի տատանումները նրան մենչեղովի բանակը բերին:

«Освобождение»-ի կողմից, — դրո՞ւմ էր այդ ֆելետոնում Լենինը, — ընկ. Ստարովերը չա-րունակում էր նոր «Искра»-ում գղջալ իր մեղքերը, որ նա (անխեղացիությամբ) դործել է, հին «Искра»-ին մասնակցելով: Ընկ. Ստարովերը չատ նման է Ձե-խովյան «Հոգյակ» պատմվածքի հերոսուհուն: Հո-դյակն սկզբում ապրում էր անտրեպրենյորի հետ և ասում էր. մենք Վանիչկայի հետ լուրջ պիեսներ ենք դնում: Հետո նա ապրում էր փայտավաճառի հետ և ասում էր. մենք Վանիչկայի հետ վրդովված ենք փայտի բարձր տարիֆի դեմ: Վերջապես ապրում էր անասնաբույժի հետ և ասում էր. մենք Կոլիչկայի հետ ձիեր ենք բժշկում: Այսպես էլ ընկ. Ստարովերն է. «Մենք Լենինի հետ» հայհույում էինք Մարտինովին:

¹ Լենին, հ. VI, էջ 71, Հայկուհրատ, 1936 թ.:

² Լենին, հ. XIV, էջ 163:

«Մենք Մարտինովի հետ» հայհոյում ենք Լենինին։ Սիրելի՛ դ՛ իմ սոցիալ-դեմոկրատական հոգեյակ, իսկ ո՞ւմ գրկում ես լինելու դու վաղը»¹։

Պարզ է, որ Պոտրեսովի նման մի մարդ լրագրի քաղաքական գծի որոշման մեջ որևէ դեր չէր կարող խաղալ և չէր էլ խաղում։

Մարտովը «Искра»-ի աշխատանքի մեջ ակտիվ կերպով մասնակցում էր։ «Լրագրագործի արհեստին իմ, այսպես ասած, արյանս մեջ էր»,—լրում էր նա։ Նա ղեկներ արագորեն արձագանդել օրվա չարիքին, և այդ գիծը նրա մեջ վաղից իր Իլյիչը շատ էր զննահատում։ Բայց Մարտովը շատ հեշտուկյամբ ենթարկվում էր զանազան ազդեցությունների և գլորվում ընկնում էր օպորտունիզմի մեջ։

Անկաշուկությունը Մարտովին հասցնում էր մասնաշրջանային աշխատանքի սայթաքումների, ինչպիսին եղավ Գիրչ-Լեկերտի կատարած տեղորոշության ակտի առթիվ արած խմբագրական հավելադրման ինցիդենտը։

Այդպես էր «Искра»-ի խմբագրությունն անձնական կազմը։ Միատեղ աշխատանքի հենց առաջին օրերից պարզ էր, որ խմբագրությունն իրենից չի ներկայացնում մի միասնական համաձայնեցված կոլեկտիվ, որ խմբագրության անդամները տարբեր մոտեցումներ ունեն կարևորագույն քաղաքական պրոբլեմների նկատմամբ և տարբեր վերաբերմունք հենց իր՝ լրագրի նկատմամբ։

Լենինին վիճակված էր ձգտել իր հայացքների հե-

տեղական և անչեղ անցկացմանը շատ բարդ իրադրություն մեջ։

Եթե «Искра»-ն կատարեց իր խնդիրները և պարտիայի իսկական կոլեկտիվ կազմակերպիչը, ուսումնասիրոն մարքսիզմի դրոշմ դարձավ, ապա դա պարտական է նա միայն այն բանին, որ լրագրի փաստական խմբագիրը և ղեկավարը Լենինն էր։ Նա էր որոշում նրա գիծը, նրա դրական գեմքը։ Նա էր գրում ամենից էլ կարևոր քաղաքական և տեսական հարցերին վերաբերող հիմնական հոդվածները և ահագին կազմակերպչական աշխատանք էր կատարում։

¹ Լենին, հատ. VIII, էջ 359, Հայկուհրատ, 1937 թ.։



«ИСКРА»-Ի ԴԵՐԸ ՊԱՐՏԻԱՅԻ ԻԳԵՈՂՈԳԻԱԿԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Պարտիայի ստեղծման ճանապարհին գլխա-
վոր արդեւքը «էկոնոմիստներն» էին:

«Պրոլետարիատի միասնական քաղաքական պար-
տիա ստեղծելու համար հարկավոր էր նախ և առաջ
ջարդել «էկոնոմիստներին»:

Հենց այդ խնդիրները կատարելուն և բանվոր դա-
սակարգի պարտիան կառուցելուն էլ ձեռնամուխ եղավ
Լենինը»¹:

Այն թեորիական դրույթները, որոնք Լենինը զար-
գացնում էր «Искра»-ի մեջ, իրենց հետագա և ամե-
նալրիվ արտահայտութիւնը գտան նրա հռչակավոր
«Ի՞նչ անել» գրքում, որն իդեոլոգիապէս նախապատ-
րաստեց մարքսիստական ուսուցիչին պարտիան:

«Искра»-ի գործունեութիւնը և լենինյան «Ի՞նչ
անել» գիրքն անբաժանելի են իրարից:

¹ ՀամԿ(բ)Պ պատմութիւն, համառոտ դասընթաց, Քաղ-
հրատ, 1938, էջ 43:

«Ի՞նչ անել»,—գրում էր Լենինը «12 տարում»
Ժողովածուի առաջաբանում,—դա խակրայական տակ-
տիկայի, խակրայական 1901 և 1902 թվերի կազմակեր-
պական քաղաքականութեան ամփոփումն է: Իսկ և իսկ
«ամփոփումը», ոչ ավելին և ոչ պակասը: Ով նեղու-
թյուն հանձն առնի ծանոթանալու 1901 և 1902 թվերի
«Искра»-ին, նա անկասկած կհամոզվի դրանում»¹:

«Ի՞նչ անել» գրքի թեորիական հարստութիւնը
«Искра»-ին հնարավորութիւն տվեց լայնորեն ծավա-
լելու պայքարը «էկոնոմիզմի» դեմ:

Ռեւոլուցիոն մարքսիստական պարտիան իդեոլո-
գիորեն նախապատրաստելու համար պետք էր հռչակել
և պաշտպանել այն ճշմարտութիւնը, որ ուսուցիչին
չարժումը միայն այն ժամանակ նպատակին կհասցնի,
եթէ ղեկավար է լինելու սոցիալիստական դիտակցու-
թյամբ: Տարեբային շարժումն առանց սոցիալիզմի—
դա տեղի ունեցող դուրիշ, աննպատակ խարխալի է
նշանակում: Բանվորական շարժումն առանց սոցիա-
լիզմի միշտ մնում է տրեղ-յունիստական, այսին-
քէն՝ այնպիսին, որը կապիտալիստական հասարակու-
թյան շրջանակներից դուրս չի գալիս: Իսկ բանվոր
դասակարգը կոչված է տապալելու կապիտալիստական
կարգը և սոցիալիզմ կառուցելու: Նա, ով ելնում է
սոցիալիստական դադախարստութեան դեմ, ուսու-
ցիչին թեորիայի դեմ, ելնում է ոչ միայն թեորիայի
դեմ, այլև ամբողջ ուսուցիչին շարժման դեմ, որով-
հետեւ «Առանց ուսուցիչին թեորիայի չի կարող լինել
և ուսուցիչին շարժում»²:

Պարտիան իդեոլոգիապէս նախապատրաստելու հա-

¹ Լենին, Հ. XII, էջ 62:

² Լենին, Հ. IV, էջ 380:

մար պետք էր ապացուցել, որ սոցիալիստական դե-
տակցութիւնը տարերայնորեն չի բռնանում-աճում
բանվորական շարժումից, այլ բերվում-մտցվում է
նրա մեջ սոցիալ-դեմոկրատների կողմից, որոնք պետք
է ղեկավարեն մասսաները, և ոչ թե նրանց պոչի հե-
տևից քաշ դան: Իսկ մասսաների ղեկավարներ դառ-
նալու համար պետք է մարքսիստների ցրված ուժերը
համախմբել մի միասնական պարտիայի մեջ: Լենինն
այդ դրոյթները փայլուն կերպով զարգացրել է «Иск-
ра»-ում և «Ինչ անել» դրքում:

«Ինչ անել» պատմական նշանակութիւնը կա-
յանում է նրանում, որ Լենինն իր այդ նշանավոր
դրքում՝

1) Մարքսիստական մտքի պատմութիւն մեջ առա-
ջինն էր, որ մինչև արմատները մերկացրեց օպորտու-
նիզմի իդեալական աղիւնքները, ցույց տալով, որ նրանք
կայանում են ամենից առաջ բանվորական շարժման
տարերայնութիւնի առջև խոնարհւելու մեջ և բանվոր-
ական շարժման մեջ սոցիալիստական գիտակցութիւն
դերն ստորացնելու մեջ:

2) Վեր հանեց թեորիայի, գիտակցականութիւն,
պարտիայի՝ որպէս բանվորական շարժումը ունենու-
ցիոնացնող և ղեկավարող ուժի՝ նշանակութիւնը:

3) Փայլուն կերպով հիմնավորեց մարքսիստական
հիմնական այն դրոյթը, որն ասում է, թե մարք-
սիստական պարտիան բանվորական շարժման միա-
ցումն է սոցիալիզմի հետ:

4) Տվեց մարքսիստական պարտիայի իդեոլոգիա-
կան հիմքերի հանճարեղ մշակումը¹:

¹ Համկ(ը)Պ պատմութիւն, համառոտ դասընթաց, էջ 52,
Պետադհրատ, 1938 թ.:

Լենինի «Ինչ անել» աշխատութիւնը և «Искра»
լենինյան լրագիրը ցուցաբերեցին, որ տարերայնու-
թիւնը երկրպագելը ոչ միայն «էկոնոմիզմի», այլև
առհասարակ ամեն մի օպորտունիզմի հիմունքն է:
Ռուսական «էկոնոմիզմը» այդ կողմից օրիգինալ երե-
վոյթ էր, այլ հանդես էր դալիս միայն որպէս մի-
ջազգային օպորտունիզմի աշխատակութիւնը:

«... Անգլիական Փարլամենտը, Փրանսական մի-
նիստերիալիստները, դերմանական բերնչտայնականե-
րը, ռուսական քննադատները, — դրոյթ էր Լենինը, —
դրանք բոլորը մի ընտանիք են, նրանք բոլորը մի-
մյանց դուրում են, միմյանցից սովորում են և միա-
տեղ դիմում են «դոգմատիկական» մարքսիզմի դեմ»¹:

«Искра»-ի պայքարը «էկոնոմիստների» դեմ
աճում-դառնում էր պայքար միջազգային օպորտունիզ-
մի դեմ: «Искра»-ն համաշխարհային բանվորական
շարժման մեջ միակ լրագիրն էր, որն ամենայն վճռա-
կանութեամբ և անհաշտութեամբ պայքարում էր
օպորտունիզմի դեմ՝ նրա բոլոր արտահայտումներով
միասին: «Հին «Искра»-ն, — դրոյթ էր Լենինը, — իբ-
համար չահեց և՛ ռուսական և՛ արևմտա-ևրոպական
օպորտունիստների պատկաւոր ատելութիւնը»²:

«Искра»-ի էջերում մերկացվեցին եւրոպական
օպորտունիստներ Բերնշտայնը, Ֆոլմարը, Միլլերանը
և այլն:

«Искра»-ն քննադատում էր դերմանական սոցիալ-
դեմոկրատիայի կենտրոնական օրդան «Ֆորմերտի»
խմբագրութիւնը, որը «... Լիբէնշտի մահից հետո

¹ Լենին, հ. IV, էջ 366:

² Լենին, հ. VI, էջ 454:

երևան բերեց բավական զիջող վերաբերմունք դեպի Բերնշտայնը և նրա կողմնակիցները»¹ :

«Искра»-ն ասպացուցում էր, որ «միլիթերանիզմը» բերնշտայնականության պրակտիկան է հանդիսանում, որ «բերնշտայնականությունը» օպորտունիզմ է և որ ունեցողի տնտեսական շահերից հրաժարվելը սոցիալիստներին պիտի դարձնի պրոլետարիատի բուրժուական թշնամիների ակամա աջակիցները»² :

«Искра»-ն անխնա կերպով մերկացնում էր բոլոր նրանց, ովքեր բուրժուական ազդեցությունը տարածում էին պրոլետարիատի վրա :

«Искра»-ի անհաշտությունը, նրա դիժը՝ ուղղված օպորտունիզմի խորտակմանը, և ոչ թե նրա հետ կոմպրոմիսներին մեջ մտնելու նպատակին՝ ջերմ հավանություն դառնում ունեցողին սոցիալ-դեմոկրատների մեջ: «Искра»-ի վարած բանավեճի, անհանդուրժողության և ոչ-ընկերական տոնի առթիվ «էկոնոմիստների» բարձրացրած վայնասունին սոցիալ-դեմոկրատներին շատ տեղական խմբեր արժանի պատասխան էին տալիս: Նրանք «Искра»-ի մեջ տեսնում էին վճռական և անհողորդ մարտնչողի՝ պարտիայի համար: Օրինակ, աքսորված սոցիալ-դեմոկրատների սիրելի խումբը գրում էր խմբագրությունը.

«Մենք կարծում ենք, որ ում համար մոտ է և թանկ պրոլետարիական դորժը, ով իրոք խորապես ըմբռնել է և համակվել ունեցողին մարքսիզմի՝ պրոլետարիական շարժման այդ գիտությունն սկզբունքներով,—նա չի կարող անտարբեր մնալ պրոլետարիա-

տի դանադան այն «բարեկամների» և «ուսուցիչների» հավակնությունների հանդեպ, որոնք ձգտում են մթնաշենել նրա գիտակցությունը և մտցնում են այդ խիստ գիտական թեորիայի մեջ իրենց «ուղղումները» և «պարզաբանումները»...

Եվ մենք չենք էլ կարող կտրուկ չլինել, մենք չենք կարող «կորեկո», զուսպ և օլիմպիկորեն հանդիսա լինել, երբ մեր աչքի առաջ դիպչում են ամենասուրբին...

Ում նյարդայնացնում է այդ բանավեճի սրությունը և կտրականությունը, որտեղից որ նա եկել է, թող այնտեղ էլ դնա... նա հուսալի ընկեր չէ...

Ահա թե ինչու մենք,—աքսորական սոց.-դեմ.-ի մի խումբ, անկեղծորեն ողջունում ենք «Искра»-ի բանավեճն իր ամբողջ սրությամբ, կտրականությամբ և «ամիսնդուրժողությամբ»¹:

Սակայն «Искра»-ի խմբագրության անդամները բոլորովին էլ միահամուռ կերպով չէին սատարում Լենինին նրա՝ օպորտունիզմի դեմ մղած վճռական պայքարում: Մարտովի, Պոտրեսովի և ասենք խմբագրության մյուս անդամների անհետևողական և հաշտ-փողական վերաբերմունքը դեպի օպորտունիստներն այն աստիճանի էր հասնում, որ նրանք չէին առարկում «Искра»-ի էջերը Լենինի դեմ բանավեճ մղելու համար տալուն:

Նեվիլդորովը, անդամ «Բորբա» խմբի, որի դեմ պայքարում էր «Искра»-ն, գրեց մի հոդված՝ «Այսպես ուրեմն, ինչի՞ց սկսել»՝ ուղղված «Искра»-ի չոր-

¹ «Искра» № 18, մարտ 1902 թ.:

² «Искра» № 19, ապրիլ 1902 թ.:

¹ «Искра» № 50, հոկտեմբեր 1903 թ.:

բարդ համարի լենինյան հռչակալուր «Ինչի՞ց սկսել» առաջնորդողի դեմ: Խմբագրությունում այդ հոդվածը քննարկելիս, ինչպես գրում էր Լենինն Աքսելրոդին, «Ձայները հալածաար կերպով բաժանեցին (Ալեքսեյը [Մարտով] և Արս [Էնյեյ-Պոտրեսովը] թեր, Վեյ [Իկա], Դմ [Խորիեյնա Ջաստելիչը] և ես՝ դեմ): Տվեք, խնդրում եմ, ձեր ձայնը: Ես պետք է ապեմ, որ ինձ առանձնապես զայրացնում է այն, որ բոլորը (մինչև իսկ Արսենյեյը [Պոտրեսով]) հոդվածը հայտարարում են «գարչելի», «դավաճանական» (ներա մասին այդպես արտահայտվեց նաև Գ. Վ. -ն [Պլեխանովը]) — և չնայած դրան խոսում են զետեղելո՞ւ մասին: Ըստիս, դա թողտվության և խրախուսման վատթարագույն տակտիկան է... Աստված հետք, թող դնա միսը [ոչեկ] Դեյոյի մեջ»¹:

Լենինն անթույլատրելի էր համարում օպորտունիստական հոդվածի զետեղումը «Искра»-ի մեջ: Բայց նա բաղիվում էր խմբագրության անդամներին անհամակիր վերաբերմունքի հետ, որ նրանք ցույց էին տալիս դեպի նրա՝ «էկոնոմիստների» դեմ վարած անհաշտ և վճռական պայքարը:

Մասնավորապես Պլեխանովը, Մարտովի վկայությամբ, շատ անբավական էր «Փորվերտսի» վրա արած «միջանի հարձակումների անհարմարության պատճառով»:

Եվ չնայած այդ ամենին, Լենինը կարողացավ «Искра»-ն դարձնել մի խիստ հատուկ զենք «էկոնոմիստներին» ջախջախման համար: Ընկեր Ստալինն այդ առթիվ գրում է.

¹ «Ленинский сборник», III, стр. 241:

«Հին «Искра»-ի պայքարը և «պոչականության» թեորիայի փայլուն քննադատությունը, որ տրված է Լենինի «Ի՞նչ անել» բրոշյուրում, ո՛չ միայն ջախջախեցին այսպես կոչված «էկոնոմիզմը», այլև ուսական բանվոր դասակարգի իսկապես ուժեղացիոն շարժման թեորիական հիմունքներն ստեղծեցին:

Առանց այդ պայքարի մտածելն անգամ ավելորդ էր Ռուսաստանում ինքնուրույն բանվորական պարտիա ստեղծելու և ուժեղացիայի մեջ նրա՝ ղեկավար դեր ունենալու մասին»¹:

Սոցիալիզմը բանվորական շարժման հետ միացնելու ճանապարհին արգելք էին հանդիսանում նույնպես նարոդնիկական խմբերի միացորդները, որոնք 1902 թ. միախորվել էին որպես էսերների (սոցիալիստ-ուժեղացիներներ) պարտիա:

Էսերները մարքսիզմի ամենավտիսերիմ թշնամիներն էին: Նրանք արհամարհաբար էին վերաբերվում դեմոկրատական սոցիալիզմի թեորիային և սոցիալիստական իդեոլոգիան նենդափոխում էին մի խայտաբղետ խառնուրդով՝ կաղմված հին դեհիկ նարոդնիկական հայացքներից և արևմտաեվրոպական օպորտունիստների նորագույն հայտնություններից:

Էսերներն իրենց ձևացնում էին «բոլոր աշխատավորների»՝ բանվորների, գյուղացիների և ինտելիգենցիայի պարտիա: Համարելով գյուղացիությունն առաջատար ուժեղացիոն դասակարգ՝ նրանք իրենց հիմնական աշխատանքը կատարում էին գյուղում:

Էսերները գիտակցորեն սքոդում էին դասակար-

¹ Ի. Ստալին, Լենինիզմի հարցերը, Հայկուհի, 1937, էջ 27:

դային պայքարը գյուղացիութեան ներսում, պնդելով, որ չքավորութեան և կուլակութեան շահերն ընդհանուր են: Էսերները հայացքներն արտացոլում էին կուլակութեան շահերը:

Անհատական տեուր զործադրելով՝ էսերները միայն թուլացնում էին մասսայական ռեւոլյուցիոն շարժումը, սովորեցնելով մասսաները պատելով կերպով սպասելու «հերոս»-տեուրիստի հերթական սխաղարծուքները:

«Искра»-ն ցույց տվեց, որ մինչդեռ «էկոնոմիստները» կուրորեն խոնարհվում էին մասսայական շարժման տարերայնութեան առաջ, էսերները խոնարհվում էին մենանդ-ինտելիգենտների առաջ, որոնք իրենց միապետութեան դեմ ունեցած վրդովմունքի ելքը որոնում էին տեուրի մեջ:

«... Արդի տեուրիստները,—գրում էր Լենինը «Искра»-յում, իսկական շուռ տված «էկոնոմիստներ» են, որոնք ընկնում են նույնքան անմիտ, թեպետ և հակադիր ծայրահեղութեան մեջ»¹:

Անհատական տեուրի տակտիկան կազմալուծում էր մասսաների պայքարը: «էկոնոմիստներին» ու էսերներին մերկացնելով՝ «Искра»-ն ձգտում էր մասսայական համաժողովրդական պայքար բարձրացնել միապետութեան դեմ՝ բանվոր դասակարգի ղեկավարութեամբ:

Լենինը, էսերները դեմ դուրս դալով, գրում էր, որ նրանք «... նրա համար են կրում իրենց կրկնակի մականունը, որովհետև նրանց սոցիալիզմը ամենևին

ռեւոլյուցիոն չէ, իսկ նրանց ռեւոլյուցիոնականութիւնը սոցիալիզմի հետ ընդհանուր ոչինչ չունի»¹:

«Искра»-ն անխնա պատերազմ հայտարարեց էսերներին, մերկացնելով նրանց դեմադողիկ ծրագիրը և ավանդուրիստական տակտիկան:

«Искра»-ն ցույց տվեց, որ էսերները պարտիան «տանում է ռուսական պրոլետարիատը դեպի քաղաքական և դադարաբական ստրկացում՝ ունա բուրժուական դեմոկրատիայի ձեռքով»² և կոչ էր անում բոլոր սոցիալ-դեմոկրատներին վճռական պայքար մղել էսերներին դեմ:

«Искра»-ի էջերում Լենինը մշակեց պրոլետարիատի պայքարի կարևորագույն տեսական և տակտիկական պրոբլեմները:

Պրոլետարիատի հեղեմոնիայի դադարաբար դրված էր «Искра»-ի ամբողջ գործունեութեան հիմքում:

«Искра»-յի խմբագրութեանն ուղղած հայտարարութեան մեջ Լենինը գրում էր այն մասին, որ պրոլետարիատը պետք է «...միավորի իր դրոշի տակ երկրի բոլոր դեմոկրատական տարրերը և կործանված սերունդների ամբողջ շարքի պայքարն ավարտի առելի ռեժիմի վրա վերջնական հաղթանակ տանելով»³:

Լենինը պայքարում էր նրանց դեմ, ովքեր փորձում էին հեղեմոնիան դիմել լիբերալ բուրժուազիային: Նա «Искра»-ի էջերում ցույց էր տալիս միապետութեան դեմ բարձրացվող բողոքի արտահայտութիւններ բնակչութեան ամենաբազմազան խավերի կողմից,

¹ Լենին, հ. V, էջ 150:

¹ «Пролетарская революция» № 1, 1939, стр. 26.

² Լենին, հ. V, էջ 132:

³ Լենին, հ. IV, էջ 41:

որոնց պրոլետարիատը պետք է կազմակերպեր իր դեկալարության տակ:

«Искра»-ն բանվոր դասակարգի մեջ դաստիարակում էր իր՝ որպես գաղիք ուղղության հեղեմոնի դերի ըմբռնումը:

«Искра»-ն, — գրում էին բանվորներն այդ լրագրի խմբագրությանը, — առաջինը ցույց տվեց մեզ՝ բանվորներին, որ մենք պետք է հետաքրքրվենք ոչ թե միայն բանվորական շարժումով, այլ նաև ամբողջ ժողովրդի և հասարակության կյանքով ու շարժումով: «Искра»-ն առաջինը լսելի ձայնով ասաց, որ Ռուսաստանում ուղղության հեղեմոնի մեջ կմասնակցեն բացի բանվորներին՝ նաև դյուղացիները և հասարակությունը: Մենք՝ բանվորներս, չենք կարող չարտահայտել խմբագրությանը մեր սրտապին շնորհակալությունը նրա համար, որ նա մեզ դուրս բերեց մտքերի և հասկացողությունների նեղ շրջանից...»¹:

Սակայն խմբագրության մեջ Լենինն այս հարցի առթիվ էլ դիմադրության էր հանդիպում: Խմբագրության անդամները բավական հեռու էին պրոլետարիատի հեղեմոնիայի գաղափարից: Այդ առանձնապես վառ կերպով արտահայտվեց այն դիրքից, որ նրանք բռնեցին հետխորհրդական ժամանակաշրջանում, առաջին ուսական ուղղության տարիներում:

«Սոցալիստականներն այն մասին, թե Պլեխանովը «նույնպես կանգնած էր» պրոլետարիատի հեղեմոնիայի կողմը, թյուրիմացության վրա են հիմնված: Պլեխանովը կոկետություն էր անում պրոլետարիատի հեղեմոնիայի իդեալի հետ և դեմ չէր այդ իդեալն խոս-

քով ընդունելուն, — այդ ճիշտ է, բայց գործնականում նա կանգնած էր այդ իդեալի հույսի դեմ: Պրոլետարիատի հեղեմոնիան նշանակում է պրոլետարիատի ղեկավար դեր բուրժուական ուղղության մեջ պրոլետարիատի ու դյուղացիության դաշինքի քաղաքականությունում հանդերձ, լիբերալ բուրժուազիային մեկուսացնելու քաղաքականությունում հանդերձ, մինչև Պլեխանովը կանգնած էր, ինչպես հայտնի է, ընդդեմ լիբերալ բուրժուազիային մեկուսացնելու քաղաքականության, լիբերալ բուրժուազիայի հետ համաձայնելու քաղաքականության կողմը, ընդդեմ պրոլետարիատի ու դյուղացիության դաշինքի քաղաքականության»¹:

Տարածայնությունները, որ ծագում էին մի այն պիտի կարևորագույն հարցի առթիվ, ինչպիսին պրոլետարիատի՝ ուղղության մեջ ունենալիք դերի հարցն է, խոր հետեանքներ ունեցան: Այդ տարածայնություններն արտահայտում էին այն երկու հակադիր հոսանքները ուսական սոցիալ-դեմոկրատիայի ներսում, որոնք արդեն սկսում էին գոյանալ որպես բուլ-շևիզմ և մենչևիզմ:

Դեպի պրոլետարիատի հեղեմոնիայի հարցը եղած տարբեր վերաբերմունքից բխում էին շատ այլ տարածայնություններ, առաջին հերթին տարածայնություններ պրոլետարիատի և դյուղացիության դաշինքի և դեպի լիբերալ բուրժուազիան ունենալիք վերաբերմունքի հարցի շուրջը:

Բանակցությունները Ստրուվեի և Տուգան-Բարանովսկու հետ, որոնք պսկովյան խորհրդակցության ժամանակ ոչ մի հետեանք չույն, շարունակվեցին

¹ «Искра» № 14, հունվար 1902 թ.:

¹ Համկ(Բ) Պ պատմություն, համառոտ դասընթաց, էջ 94, Պետքազհատ, 1938 թ.:

1900 թ. վերջերին Մյունխենում: Ստրովեն աներկ-միտ կերպով պահանջում էր փոխել վերաբերմունքը դեպի լիբերալները և հայտարարեց, որ այն օրգանում, որտեղ նրան «այնպես անինքնադատալիստում են», նա չի կարող մասնակցել: Նա իր կողմից լրագրում մասնակցելու համար սլաքման առաջադրեց, որ «Искра»-ի խմբագրություն աշխատանքի վրա վերահսկողություն լինի իր ներկայացուցչի միջոցով, որը մշտապես պետք է գտնվի Մյունխենից ոչ ավելի, քան 12 ժամվա հեռավորության վրա:

Լենինը մոտականորեն դեմ դուրս եկավ Ստրովենի հետ այս սլաքմաններով համաձայնության դա-լուն, քանի որ փաստորեն այդ կնշանակեր «Искра»-ի խմբագրությունը լիբերալ բուրժուազիային ենթար-կել, և ոչ թե լիբերալներին օգտադործել ռեկուլցիոն սոցիալ-դեմոկրատիայի շահերի համար: Լենինը նաև դեմ դուրս եկավ Ստրովենի առաջարկին՝ «Современное обозрение» երրորդ համատեղ հրատարակությունը ստեղծելու մասին:

Ստրովեն պնդում էր, որ «Современное обозре-ние»-ն որպես թե պետք է միայն լրացներ «Искра»-ն և «Заря»-ն: Իսկ Լենինը մերկացրեց Ստրովենի այդ խաղի էությունը: «Մեզ ողողելու են այս տեսակի նյութերով, մենք վաղվղելու ենք Հուգայի [Ստրովեն] հանձնարարությունները կատարելու համար, որը «Սովր [եմենսյե] Օբ [ոդրենիե-ում]... դործը տիրա-կալելով (хозяйничание), հիանալի լիբերալ կարյերա կանի և կփորձի ոչ միայն ծանրակշիռ «Заря»-ն, այլև «Искра»-ն հետ մղել»¹:

¹ «Ленинский сборник», III, стр. 129.

Ընդունելով, որ լիբերալներին կարելի է օգտա-դործել, Լենինը պարտադիր էր համարում մնալ հան-րեն մերկացնել նրանց անհետևողականությունը: Իսկ խմբագրություն մյուս անդամները ձեռք էին տալիս դե-պի համաձայնողություն, ձգտելով դաշինքի լիբերալ-ներին հետ, ինչ դնով ուղում է լինի: Պլեխանովը, պնդելով Ստրովենի հետ համաձայնության դալու-վրա, գրում էր Աքսելրոդին.

«Կարգացի ես Պետրովի [Լենինի] նամակը և Ձեր երեքը (երկուսը քոնը [Պ. Բ. Աքսելրոդինը] և մեկը Վ. [Վ. Ի. Ջասուլիչինը]), և կարծում եմ, որ պետք է համաձայնվել սլաքմանդրի սլաքմաններին. այժմ այլ ելք չկա. իսկ հետո կտեսնենք: Ճիշտ է, որ պետք է սակարկել «Искра»-ին նյութ տալու համար, բայց եթե նա (Simon [Պ. Բ. Ստրովեն]) համաձայն չէ, խզել այնուամենայնիվ չի հարկավոր»¹:

Ջասուլիչը ևս այդպիսի տեսակետի վրա էր կան-դնած: «Ըստիս,—գրում էր նա Լենինին և Պոտրեսո-վին,—պետք է հայտարարություն բաց թողնել, մեղ-մացներով այն արտահայտությունները, որոնք փակում են դուռը Ստրովենի առաջ: Հրավիրել նրան գրելու ներքին հարցերի մասին, իսկ Տուգ [ան-Բարանովսկուն] ձգնաժամի մասին»²:

Լենինին բավական դժվարություն հաջողվեց հասնել այն բանին, որ փաստորեն չկայանա Ստրո-վենի հետ համաձայնության դալը:

Ճիշտ է, Լենինի առարկումներին հակառակ՝ խոր-հրդակցության հետևանքով Ստրովենի խոստացվեց

¹ «Ленинский сборник», III, стр. 130.

² Сборник «Социал-демократическое движение в России», т. I, стр. 74, 1928 г.

«Կոմա Վիտտեի հուշերը» հրատարակել նրա առաջաբանով: Բայց դա արդեն բոլորովին այն է՝, ինչպիսիք պարսկային սպառնում էր «Искра»-ի խմբագրությունը՝ լիբերալների հետ հեռու դնացող համաձայնությունը՝ ձգտելով:

Լենինը հատուկ հոգովածով դուրս եկավ Ստրուվեի «Կոմա Վիտտեի հուշերի» առաջաբանին դեմ, որում մանրամասն կերպով հայացքներ դարձացրեց սոցիալ-դեմոկրատիայի՝ դեպի լիբերալներն ունենալիք վերաբերմունքի մասին: Այդ հոգովածը խմբագրությունը բոլոր անդամների ձեռքում էլ եղավ: Նրանց դիտողությունները վառ կերպով ցույց են տալիս նրանց տարբեր մոտեցումները դեպի լիբերալ բուրժուազիան և այն դիմադրությունը, որը Լենինը ստիպված էր հաղթահարելու:

«Իսկ Պետրովի [Վ. Ի. Լենինի] հոգովածը, իմ կարծիքով, կպահանջեր արմատական փոփոխում...», — գրում էր Ա. Բախչևը Պլեխանովին: Սակայն, լավ իմանալով լենինյան անհաշտությունը, նա ավելացնում էր. «Բայց սնդեղ չի կարելի»¹:

Պլեխանովն իր հերթին ձգտում էր փոխելու լենինյան հոգովածի ամբողջ տոնը, որը, նրա կարծիքով, կարող էր խրոնոսցնել լիբերալներին:

«Մենք չէ որ պետք է, — գրում էր նա Լենինին, — վերաբերվենք լիբերալներին որպես հնարավոր դաշնակիցների, իսկ Ձեր տոնը, պետք է խոստովանել, ամենևին դաշնակցի տոն չէ»²:

Հարկադրված լինելով հաշիվ նստելու խմբագրու-

¹ Переписка Г. В. Плеханова и П. Б. Аксельрода, т. II, стр. 157.

² «Ленинский сборник», III, стр. 204.

թյան անդամների առանձին դիտողությունների հետ՝ Լենինը համաձայնեց մեղմացնել մի քանի ձևակերպումներ, բայց կտրականորեն հրաժարվեց փոխել հոգովածի տոնն ամբողջությամբ: Պարտիական դրականագետը ոչ թե արձանագրել է, այլ մարտիկ, որը չի կարող անկիրք կերպով դրել բանվորական շարժման հետ կենսաանհրաժեշտորեն կապված հարցերի մասին:

«Եթե ինձնում «դրդամունք» չլիներ հեղինակի դեմ, — պատասխանեց Լենինը Պլեխանովին, — ես այդպես չէի էլ դրի: Իսկ քանի որ «դրդամունք» կա (հասկանալի ոչ միայն մեզ, այլև առաջաբանի ամեն մի սոցիալ-դեմոկրատ ընթերցողի համար), ես այն արդեն ծածկել չեմ կարող և այստեղ արդեն խորամանկություն բանեցնելու տեղը չէ»¹:

Եվ «Искра»-ի էջերում Լենինը շարունակում էր սուր կերպով քննադատել լիբերալներին նրանց թերատություն (половинчатость) և միապետություն առաջ քննելու համար: Նա հեռու դիտողներն պաշտպանում էր այն հայացքը, որ ոչ թե լիբերալ բուրժուազիան, այլ դյուղացիությունն է հանդիսանում պրոլետարիատի դաշնակիցը նրա՝ միապետություն դեմ մղած պայքարում:

«Искра»-ում դյուղացիական հարցին վերաբերող բոլոր ղեկավարող հոգովածները, որոնք հիմնավորում էին պրոլետարիատի և դյուղացիության սերտ դաշինքի անհրաժեշտությունը, գրվում էին Լենինի ձեռքով: Նա համառորեն ձգտում էր, որ սոցիալ-դեմոկրատներն ակտիվ աշխատանք կատարեն դյուղացիների մեջ, տարածեն նրանց մեջ իսկրայական դրականությունը և մերկացնեն էսերների պարտիան:

¹ «Ленинский сборник», III, стр. 216.

Լենինյան վերաբերմունքը դեպի գյուղացիութ-
յունն ընդունում էին խմբագրության ամենեւին ոչ
բոլոր անդամները: «Օտրեզկաների» (Հողատորներ-
ի), այսինքն 1861 թվի ռեֆորմի հետեւանքով գյու-
ղացիներին կտրված հողերի վերադարձման լողունքը
Լենինը համարում էր նեղ և առաջադրում էր այն մի-
այն որպէս պայքարի առաջին փուլի պահանջ:

Իսկ Աքսելրոզին այս լողունքը, նրա սեփական
խոստովանությամբ, վանում էր իր «ուտայիզմով»:

Այնինչ օտրեզկաների կոնֆիսկացիան Լենինը հա-
մարում էր միայն առաջին քայլը: Հատկապէս գյու-
ղացիներին համար գրված իր «Գյուղական չքավորու-
թյանը» բրոշյուրում Լենինը ցույց տվեց, թե օտ-
րեզկաների կոնֆիսկացիային ինչ պիտի հետեւի,—
«Իսկ մեր վերջին քայլը թե՛ քաղաքում և թե՛ գյու-
ղում մեկն է լինելու. կլսենք բոլոր հողերը, բոլոր
գործարանները կալվածատերերից և բուրժուազիայից
և կկառուցենք սոցիալիստական հասարակութիւն»¹:

Պարագրության ներսում ընդհարումը շատ սուր
կերպով բորբոքվեց հողի ազգայնացման հարցի
չուրջը:

Արդեն այն ժամանակ Լենինը կողմնակից էր հո-
ղի ազգայնացման: Նա դրում էր, որ «...Սկզբունքո-
րեն մենք լիովին բաժանում ենք այդ պահանջը: Մի
սրոշ ռևոլուցիոն մոմենտում մենք, հասկանալի է,
չենք հրաժարվի այն առաջադրելուց»²:

Լենինի «Ռուսական սոցիալ-դեմոկրատիայի ազ-
բարային ծրագիրը» հոդվածը սովորականի պէս եղավ
խմբագրության բոլոր անդամների ձեռքում: Մարտո-

վը, Ձառուլիչը և Աքսելրոզը խիստ կերպով առարկում
էին Լենինյան առաջարկները դեմ:

Սակայն Լենինը չէր կարող համաձայնել նրանց
«ուղղումների» հետ:

Պլեխանովը, դեմ դուրս գալով ազգայնացման,
ծրագրի իր ներկայացրած նախագծի ազդարարին մասի
մեջ ընդունում էր հողի հետզման հնարավորութիւն-
նը գյուղացիության կողմից: Լենինը վճռականորեն
մերժում էր այդ «իծուն-բարեմիտ և բուրժուական
միջոցը ևս»:

Այսպէս Լենինին վիճակվում էր ամենաբարդ ներ-
խմբադրական իրադրության մեջ պաշտպանել իր հա-
յացքները, «Искра»-ի էջերում զարգացնելով նոր սի-
պի պարտիայի տակտիկայի հիմունքները:

«Искра»-ի կարեւորագույն դործը պարտիայի
ծրագրի նախագծի մշակումն էր: Բանվորական պար-
տիայի ծրագիրը, ինչպէս հայտնի է, բանվոր դասա-
կարգի պայքարի նպատակների ու խնդիրների դիտա-
կանորեն ձևակերպված համառոտ շարադրանքն է:
Ծրագիրը որոշում է ինչպէս պրոլետարիատի ռևոլու-
ցիոն շարժման վերջնական նպատակը, այնպէս և այն
պահանջները, որոնց համար պայքարում է պարտիան
դեպի վերջնական նպատակը տանող ճանապարհին:
Ուստի և ծրագրի նախագծի մշակումը չէր կարող
առաջնակարգ նշանակութիւն չունենալ...

Պարտիայի ծրագրի վերաբերյալ Լենինի և Պլեխա-
նովի վեճերը մասամբ որոշեցին ապագա տարաձայնու-
թյունները բոլշևիկների և մենշևիկների միջև¹:

Պլեխանովի ներկայացրած ծրագրի նախագիծը չէր

¹ Լենին, Հ. V, էջ 307:

² «Ленинский сборник», III, стр. 352.

¹ Համկ(ր)Պ պատմութիւն, համառոտ դասընթաց, էջ 52—53:
Պետրոզհատ, 1938 թ.:

առանձնացնում պրոլետարիատի առանձին դերն առաջիկա ուղղուցիայի մեջ, Պլեխանովի ձևակերպումները լուծում էին պրոլետարիատի դերը «Համայն աշխատավոր և շահագործվող մասսայի» ընդհանուր դժգոհության մեջ: Մինչդեռ բանվոր զատակարգը միայն իր հատուկ պատմական դերն ընթերցելով է, որ ընդունակ կլինե՞ր բոլոր աշխատավորներին միավորել պայքարի մեջ և նրանց ազատագրման հասցնել:

«Մեզանում Ռուսաստանում, — գրում էր Լենինը, քննադատելով ծրագրի նախագիծը, — «աշխատավոր և շահագործվող մասսայի» դիվիզիոն տանջանքները ոչ մի ժողովրդական շարժում չէին առաջացնում, մինչև որ «մի բուռը» ֆաբրիկա-գործարանային բանվորներ սկսեցին պայքարը, դասակարգային պայքարը: Եվ միայն այդ «մի բուռը» է ապահովում պայքարի վարումը, շարունակումը և ընդլայնումը»¹:

Ծրագրի նախագծի Պլեխանովի դրած վարիանտում պրոլետարիատի դիկտատուրայի հարցը «բաց էր թողնված», որ ուղղուցիոն մարքսիզմի հիմնական բովանդակությունն ամլացնում էր: Լենինը ցույց տվեց, թե ինչ է նշանակում պրոլետարիատի դիկտատուրային վերաբերող այդպիսի կետի բացակայությունը, և կարողացավ այն մտցնել տալ ծրագրի նախագծի մեջ:

Լենինը սուր քննադատություն էնթադրեց ծրագրի Պլեխանովի ներկայացրած նախագծի ամբողջ բնույթը՝ ակադեմիկ լինելը, վերացականությունը, կարեւորագույն ձևակերպումների ճապարկությունը և հասավ ծրագրի վճռական վերակերպմանը (переделка):

«Искра»-ի ծրագրի նախագիծը խիստ տարբերվում էր նախկին սոցիալ-դեմոկրատական ծրագրերից: II Խոտերնացիոնալի պարտիաներից ոչ մեկի ծրագրի մեջ պրոլետարիատի դիկտատուրայի հարցը չկար դրված: Այդ ծրագրներում լուրջամբ զանց էր առնված (обходился) նաև պրոլետարիատի դաշնակիցների հարցը, բացակայում էր պարտիայի՝ աղքատ բային հարցին վերաբերող պահանջների բաժինը: Ռուսական սոցիալ-դեմոկրատիայի ծրագիրը նոր տեղի պարտիայի ծրագիր էր:

«Պրոլետարիատի դիկտատուրայի հարցը, — գրում էր Լենինը, — այդ ծրագրում դրված է պարզ և որոշակի, ընդամենը դրված է հատկապես Բերնշտայնի դեմ, օպորտունիզմի դեմ մղվող պայքարի կապակցությամբ»¹:

Խմբագրությունն ներսում տարածայնությունները դեռ երբեք այնպիսի սրություն չէին հասել, ինչպես ծրագրի քննարկման ժամանակ:

Առանձին հոգվածների քննարկման ժամանակ Լենինը երբեմն հնարավոր էր համարում այս կամ այն զիջումն անել: Բայց, ծրագիրը մշակելիս, նա պայքարում էր ոչ միայն սկզբունքային դրույթների համար, այլև տառացիորեն ամեն մի բառի համար, պարտիայի այդ հիմնական դոկտրինայի լեզվի և ոճի համար:

Քննադատելով Պլեխանովի ծրագրի նախագիծը՝ Լենինն ընդգծեց ծրագրի բովանդակության կապը լեզվի բնույթի հետ, որից օգտվել էր նրա հեղինակը: «Պա ուղղուցիոն պարտիայի լեզուն չէ, այլ «Русские ведомости»-ի լեզուն է», — գրում էր Լենինը և համա-

¹ «Ленинский сборник», II, стр. 133.

¹ Լենին, 4. XXV, էջ 431:

ուրեն ձգտում էր մշակելու իսկապես մարքտիստական ծրագիր, դրված ուսուցչին պարտիայի մարտական լեզվով:

Պարագրուժյան ներսում տեղի ունեցող սուր պայքարը պարտիական կազմակերպություններին հայտնի էր: «Искра»-ի ընթերցողներն իրենց առաջ տեսնում էին մի հետևողական ուսուցչին օրգան, նրանք անգամ չէին կասկածում, թե ինչպիսի ճիշդի և պայքարի գնով էր հաջողվում Լենինին իրականացնել լրագրի ուղղությունը:



ՆՈՐ ՏԻՊԻ ԼՐԱԳԻՐ

«Искра»-ի յուրաքանչյուր համարը մի լուրջ մոտձանք էր (вклад) մարքսիզմի ուսուցչին թեորիայի գանձարանը և հզոր զարկ էր տալիս պարտիական աշխատանքին Ռուսաստանում: Պրոպագանդիստն ու ագիտատորը լրագրում դնում էին սուր, օրվա չարիքին վերաբերող նյութ, կազմակերպիչն ստանում էր պարզ գիրեկտիվ, թե ինչ անել:

Որպես օրինակ պատմենք «Искра»-ի 1902 թվի փետրվարի 1-ի չարքային մի համարի մասին (№ 16):

Դեռ լրագրի հրատարակումը նախապատրաստելիս Լենինը դրում էր, որ ապագա օրգանում «... պետք է շատ տեղ հատկացվի տեսական խնդիրներին, այսինքն՝ և՛ սոցիալ-դեմոկրատիզմի ընդհանուր թեորիային և՛ նրա կիրառմանը ուսական իրականություն մեջ»¹: «Искра»-ն հենց այդ ոգով էլ տարվում էր: Հոգվածները և դիտողությունները սոցիալ-դեմոկրատ ընթերցողին օգնում էին որոշակի հայացքներ մշակելու

¹ Լենին, Վ. IV, էջ 8:

քոլոր հիմնական հարցերի վերաբերմամբ: Այդ կողմից առանձին դեր էին խաղում լենինյան հոգվածները և ամենից առաջ լենինյան առաջնորդները:

Լենինի «Մեր շարժման կենսաանհրաժեշտ խնդիրները», «Ինչի՞ց սկսել», «Զրույց է կոնոմիդի պաշտպանների հետ» և այլ հոգվածները հստակ կերպով որոշում էին ռևոլյուցիոն մարքսիստների խնդիրները, «էկոնոմիստներին» ջախջախման համար անհրաժեշտ գործնական քայլերը, անջատ կադմակերպութիւնները միասնական պարտիայի մեջ համախմբելու առաջիկա աշխատանքը:

«Բանվոր դասակարգը և դյուղացիութիւնը», «Ռևոլյուցիոն ավանտյուրիզմը», «Վոլդար սոցիալիզմը և նարոդնիկութիւնը» հոգվածները և շատ ուրիշներն անխնա կերպով մերկացնում էին մարքսիզմի ամենամոխերիմ թշնամիներ՝ նարոդնիկների հետնորդներին (էպիգոններին)՝ էսերներին և ռևոլյուցիոն էին պրոլետարիատին ճիշտ կերպով վերաբերվել յուր դաշնակցին՝ դյուղացիութիւնը:

Լենինի կողմից տասնյակներով նշանավոր հոգվածներ էին նախաձեռնում կյանքի կոնկրետ իրադարձութիւններին, դեպքերին. «Զինական պատերազմը», «183 ռուսնորդներին զինվոր քշելը», «Պայքար սովյաշների դեմ», «Դեմոնստրացիաների սկիզբը» և շատ ուրիշները:

✓ Լենինը «Искра»-ում մոտ 50 հոգված գրեց: Նրանցից յուրաքանչյուրն ահագին նշանակութիւն ունեցավ մարքսիստական ռևոլյուցիոն պարտիայի, նոր տիպի պարտիայի իդեոլոգիական նախապատրաստման համար:

Ահա մենք դիտում ենք «Искра»-ի մի համարը.

նա սկսվում է Լենինի «Քաղաքական ազիտացիան և «դասակարգային տեսակետը» առաջնորդողով: Լենինի շատ լրագրական հոգվածները համար բնորոշ սկիզբ ունի այդ հոգվածը: Լենինը վերջնում է օրվա չարիք հանդիսացող մի վիստ և սկսում է հոգվածն այս ֆրագով. «Միսենք օրինակից»: Եվ հետո՝

«Ընթերցողները, երևի, հիշում են, թե ինչ ազմուկ բարձրացրեց ազնվականութիւն Օրյոլի նահանգական պարագլուխ (предводитель) Մ. Ա. Ստախովիչի՝ միտիոներական համադրումարում տրամ գեկուցումն օրենքի կողմից խղնի ազատութիւնն ընդունելու անհրաժեշտութիւն մասին»:

Լենինը ծաղրում է ռեակցիոն մամուլը, որը «ազմուկ բարձրացրեց» և հարձակվեց Օրյոլի ազնվականներին վրա, որոնք Ստախովիչին կրկին դեմոնստրատիվ կերպով իրենց պարագլուխ ընտրեցին:

«Ստախովիչը, — հավատացնում է «Московские ведомости»-ն, — «ոչ այնքան ազնվականութիւն պարագլուխ է, որքան Միշա Ստախովիչ, խնդակյաց մեկը, հասարակութիւն հողին, ճոռոմախոս ոմն...»: Է՛լ ավելի վատ ձեզ համար, պարոնայք, մահակի պաշտպաններ, — գրում է Լենինը: — Եթե արդեն խնդակյաց կալածատներն անգամ սկսեցին խոսել խղճի ազատութիւն մասին, ուրեմն իսկապես թիմ չկա այն գարշելի արարքներին, որ գործում են մեր տերտերները մեր ոստիկանութիւն հետ միասին»:

Լենինը ցույց է տալիս, թե ինչու ռեակցիոն լրագրերը Ստախովիչի ելույթը բացատրում են նրա թեթեամտութիւնը. նրանք այդ բանը դիտակցաբար են անում, չցանկանալով «իրենց համար ատելի լիբերալիզմի վերլուծութիւն մեջ կիրառել դասակարգային

տեսակետը»։ Բայց հոգիածի դիտավոր նպատակը ոչ թե սեհարյուրյակային մամուլի մերկացումն է, այլ ռեդուցիտն մարքսիստների կողմից դեպի լիբերալները որոշ վերաբերմունք հաստատելը։ «Московские ведомости»-ն «Искра»-ին հարգալից էր միայն որպես օրինակ, միայն համեմատության համար, և հենց այդտեղ էլ Լենինն անցնում է «Искра»-ի հետ պայքարող սոցիալ-դեմոկրատների ղանադան խմբերի՝ լիբերալ շարժման վրա ունեցած հայացքների վերլուծմանը։

Այդ առաջնորդողում Լենինը ցույց է տալիս, թե ինչպես այդ բոլոր Մարտինովները և Նադեժդինները չեն ըմբռնում ««կոմունիստական Մանիֆեստի»—միջազգային սոց.—դեմոկրատիայի այդ «ավետարանի» հիմնական դրույթները»։ Լենինը ցույց է տալիս, թե ինչ վնաս են հասցնում օպորտունիստները, սահմանափակելով քաղաքական ազդեցության թափը և բովանդակությունը։

«Էկոնոմիստների» և էսերների դեմ մղվող այդ սուր պայքարի ժամանակաշրջանում Լենինի հոգվածների մեծ մասը պոլեմիկական բնույթ էր կրում։ Բայց բանալեմ մղելով, Լենինը մանրամասնորեն և հանդամանորեն գործնական ծրագիր էր զարգացնում, ցույց էր տալիս, թե ինչ պիտի անեն սոցիալ-դեմոկրատները։ Նրանց պարտականությունն է,—գրում էր նա,—«սրաշտպանել ամեն մի լիբերալ և դեմոկրատական բողոք, բղետլիս լինի դա դեմսոյոյականների և ներք. գործերի մին.—յան բաղխումից թե ազնվականների և ոտտիկանական ուղղափառության դերատեսչության բաղխումից, կամ սոստիստիկների և պոմպազուրների, դուռլացիների և «դեմսոյոյականների», աղան-

դավորների և ուրյադնիկների բաղխումից և այլն և այլն... «Դասակարգային տեսակետը սրահանջում է, որ սրոյետարիատն ամեն մի դեմոկրատական շարժում մղի դեպի առաջ»։

Այդ նշանավոր հոգվածը վերջանում է հետևյալ բառերով, որոնք չուտով լողունդ դարձան. «Պրոլետարիատի պարտիան պետք է դիտենա որսալ ամեն մի լիբերալի հենց այն մոմենտում, երբ նա պատրաստվել է մի վերջուկ առաջ շարժվելու, և ստիպի նրան մեկ արշին առաջ շարժվելու։ Իսկ եթե նա դեմ կառնի, այն ժամանակ մենք կշարժվենք առաջ առանց նրան և նրա վրայով»։

Մի առանձին փաստի նկարագրությունով սկսվող և առաջին հայացքից մի կոնկրետ դեպքի վերլուծմանը նախընթաց լրագրական հոգվածն ըստ էության միամբողջ ծրագիր էր հանդիսանում, մի պարզորոշ դիրեկտիվ։ Նա պարունակում էր մարքսիստների՝ դեպի լիբերալ բուրժուազիան ունենալիք վերաբերմունքի հարցի խորը թեորետիկական մշակումը։

Լրագիրը, կարծես թե, կարճ ժամանակ է ապրում։ Նա արձագանդում է ընթացիկ, օրվա չարիք հանդիսացող փաստերին, որպեսզի վաղը լուսաբանի նոր, երեկ դեռևս անհայտ իրադարձություններ։ Բայց լենինյան հոգվածներում կոնկրետ փաստերը և իրադարձությունները լուսաբանվում էին խորք մարքսիստական վերլուծության միջոցով,—և ընթացիկ լրագրական հոգվածն ստանում էր աչքի ընկնող թեորեիկական նշանակություն։

«Искра»-ում առաջնորդողից հետո միշտ դալիս էր երկրորդ հոգվածը, մեծ մասամբ միջազգային հար-

ցերին, իսկ երբեմն էլ Ռուսաստանի ներքին կյանքի նոր երևույթներին նվիրված:

№ 16-ում առաջնորդողից հետո զետեղված է Պ. Սմիդովիչի «Գործադրկությունը Պետերբուրգում» տեսությունը: Նա կառուցված է հարուստ փաստական նյութի վրա և նվիրված է ծավալվող արդյունաբերական ճգնաժամին:

«Искра»-ի յուրաքանչյուր համարը պարունակում էր «Մեր հասարակական կյանքից» բաժին: Դա լրագրի կենտրոնական բաժիններից մեկն էր: Նա սովորաբար պարունակում էր 10—15 փոքրիկ թղթակցություններ ամենաբազմազան թեմաների շուրջը:

«Искра»-ի լայն թեմատիկան բոլորովին նոր երեւույթ էր բանվորական մամուլում: «Էկոնոմիստները», որոնք զտնում էին, որ քաղաքական պայքարը բուրժուազիայի դործն է, և ոչ թե պրոլետարիատի դործը, իրենց հրատարակությունները լցնում էին միայն բանվորների տնտեսական դրության նկարագրությամբ. նրանք սահմանափակում էին իրենց ընթերցողների մտահորիզոնը ֆարրիկային բալի շրջանակներում: Իսկ «Искра»-ն ընթերցողին դուրս էր բերում տեղական շահերի նեղ շրջանից, նա գրում էր ոչ միայն բանվորների կյանքի մասին, այլև միապետության դեմ բարձրացվող քաղաքական բողոքի բոլոր արտահայտումների մասին, դատարարակեղծ բանվոր դատակարգն ապագա դեմոկրատական ունույթի մեջ ունենալիք իր հեգեմոն գերի ըմբռնման ոգով:

Լենինը ձգտում էր, որ «Искра»-ն արձագանդեր քաղաքական կյանքի բոլոր նշանակելի երևույթներին, որպեսզի լրագրի հարուցած թեմաները լինեն բազմակողմանի և բազմազան: Դեռ «Искра»-ի առաջին հա-

մարի նախապատրաստման ժամանակ Լենինը դանդաղ-վում էր, թե «լրագրի համար ստացված թղթակցական նյութին արդեն չափ է,—ափսոս միայն, որ գերակշռում է նեղ-բանվորականը, դործադուլ հա դործադուլ, և բանվորների դրության նկարագրությունը: Ընդհանուր առմամբ ներքին հարցերին վերաբերող ոչինչ»¹:

Հատուկ նամակներում և մինչև իսկ «փոստարկում» «Искра»-ի խմբագրությունը բազմիցս շեշտում էր, որ լրագիրն իրեն նպատակ էր դնում «լուսաբանել ուսական կյանքի բոլոր երևույթները սոցիալ-դեմոկրատական հայեցակետից ելնելով, ուստի և նա չահադրված է ստանալու թղթակցություններ ոչ միայն «պրոլետարական» կյանքից»²: Եվ «Искра»-ի բանվոր ընթերցողը նորապես (по-новому) սկսում էր խմատալորել իր գերը քաղաքական պայքարում:

«Հետաքրքրությամբ կարդում ենք ամբողջ «Искра»-ն,—գրում էր մի բանվոր խմբագրությանը,—բայց անհնարին է նկարագրել, թե ինչպիսի հետաքրքրություն է համակում մեզ, երբ կարդում ենք «Հասարակական կյանքից» հոդվածները: Ինչո՞վ բացատրել այդ... Գարդալով «Հասարակական կյանքից» հոդվածները, մարդ խմանում է, որ հասարակությունը ևս ապրում է և իր պատճառներն ունի դժգոհ լինելու և շատերն այդ հասարակությունից ներկա կարգերի նկատմամբ բացահայտ օպոդիցիայում են կանգնած. որ նա մի ինչ-որ պայքար էլ է մղում, բայց խուլ և անխտաճ պայքար այն պատճառով, որ իր ոտքերի տակ ամուր հող չունի: Իսկ «Искра»-ն նրանց հենարան մատնանշեց հանձինս բանվորների, իսկ վերջին-

¹ «Ленинский сборник», III, стр. 61.

² «Искра» № 13, գեկտեմբեր, 1901 թ.:

ներիս՝ օժանդակութիւն։ Եւ այդ հոգւածները կարգաւոր՝ չի կարելի ամբողջ հոլթյամբ չհետաքրքրվել, որովհետեւ չափազանց լաւ համոզվում ես, որ այդ կարգն աղբյուրի համապարփակ դժգոհութեան ճշմանը երկար դիմանալ չի կարող»¹։

«Искра»-ն մեծ վարպետութեամբ ցույց էր տալիս այդ համապարփակ դժգոհութիւնը. «Մեր հասարակական կյանքից» բաժնում տպագրվում էին նյութեր ամենաբարդադան իրադարձութիւնների և փաստերի մասին. 183 ուսանող քչված են զինվոր ուսանողական շարժման մեջ մասնակցելու համար. սեկտանտները հալածանքի են ենթարկվում իրենց կրօնական համոզմունքների համար. ցարական կառավարութիւնը ճրնչում է Ռուսաստանում բնակվող ժողովուրդներին, ջարդեր է կազմակերպում. դրող Մաքսիմ Գորկին հեռացվում է Գիտութիւնների Ակադեմիայից. ուսուցչական միջավայրը ներս են սողտակել պահնորդարանի (охранка) դորժակայները. զինվորը դանդաղում է ցարական կազարմայի անտանելի կամայականութիւններից. գեմատվոյականները մի թերատ, վախլուկ վճիռ են կայացրել և այլն։

Յուրաքանչյուր իրադարձութեան նշանակութիւնը մանրամասն կերպով պարզարանվում էր, իսկ առանձին տարանջատ (разрозненные) փաստերը «Искра»-ի էջերում կապվում էին ընդհանուր ցարական ռեժիմի սխառմի հետ։ Եւ բանվորները շնորհակալութիւն էին հայտնում «Искра»-ին այն բանի համար, որ նա գրում էր «ուսական ամբողջ դորժի մասին, որը կուպկներով դնահատել և ժամերով որոշել չի կարելի»։

¹ «Искра» № 14, հունվար, 1902 թ.։

Դա քաղաքական բաղձակողմանի դաստիարակութեան մի հիանալի դպրոց էր։

«Մեր հասարակական կյանքից» բաժինը միայն սոցիալ-դեմոկրատական ընթերցողին չէր, որ հասցեագրվում էր։ Նմաբադրութիւնն աշխատում էր օգտագործել լրագրերը նաև նրա համար, որպեսզի անվճարականներին հրի, վախլուկներին կշտամբի, դեմոկրատական շարժման առանձին խալերին ցույց տա, որ նրանց ուժը միայն բանվոր դասակարգի հետ դաշնակցելու մեջ է։ Ռեդուցիոն պայքարի տարբեր հտապնեւում սոցիալ-դեմոկրատներին՝ դեպի լիբերալներն ունենալիք վերաբերմունքի մասին լենինը գրում էր.

«... 1900—1902 թվերին (զարթեցնում էինք), 1902—1904 թվերին (արթնացածներին սահմանադատում էինք) և 1905 թվին (պայքարում էինք արթնացած... դաւաճաններին դեմ)»¹։

«Մեր հասարակական կյանքից» բաժինը ծառայում էր նաև քնածներին արթնացնելու և հրելու խնդրին։ Զետեղելով հաղորդումներ լիբերալների ձեռքով սարքվող դեմստվային ժողովների, բանկետների մասին՝ «Искра»-ն այդ հաղորդումներն ուղեկցում էր համապատասխան մեկնութիւններով, ծաղրում էր լիբերալների անվճարականութիւնը, թերատութիւնը, նրանց համար որպես օրինակ մատնանշելով բանվորներին հետեղական ուսուցիչի դորժութիւնները։

Ամենից ավելի ակտուալ հարցերի շուրջը «Искра»-ն ամբողջ կամպանիաներ էր անցկացնում։ Այդպես եղավ մասնավորապես 183 ուսանողներին զինվոր քշելու առթիւ բարձրացրած բողոքի հարցում։ Լենինի

¹ Լենին, հ. VIII, էջ 403, Հայկուհրատ, 1937 թ.։

դրած առաջնորդողում տրվում էր ուսանողական շարժման նշանակության և հեռանկարներին խորը վերլուծությունը։ Այնուհետև միջանի համարներում շարունակ զետեղվում էին մանրամասն թղթակցություններ Պետերբուրգից և Մոսկվայից ուսանողական խառնակությունների մասին։ Իվերջո՝ այդ թեմայի վրա տպագրվեց մի տեսություն, որին նյութ էին ծառայել Ռուսաստանի զանազան տեղերից ստացված ամենի քան հարյուր նամակներ։

«Искра»-ն ուշագրի կերպով հետևում էր իրադրությունների զարգացման ընթացքին, զինվոր քըշված ուսանողներին «ուղեկցելով» դորանոցի դռներից էլ այն կողմը։ Օրինակ, Պսկովում աշխատող Լեպելինակին դրեց «Искра»-ին այն մասին, թե ինչ ուսուցիչներին էին ենթարկվում տեղական գունդն ուղարկված ուսանողները։

1902 թվի ամառը, երբ Պոլտավայի, Սարկովի և մերձվոլգյան նահանգներում ծավալվեց դյուդացիական շարժումը, «Искра»-ն դյուդացիական կյանքին վերաբերող հազորդումները առանձնացրեց մի հատուկ բաժնում՝ «Գյուղից» վերնագրով։ 22-րդ համարից սկսած՝ «Искра»-ն այդ բաժնում շատ նյութեր էր տպագրում դյուդում տեղի ունեցող ուսուցիչներին շարժման աճման մասին։

Գյուդացիները դրախում էին կարվածատրական հողերը, այրում էին կարվածները, ջերմորեն արձագանգում էին ուսուցիչներին կոչերին։ Շատ տեղական սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններ «Искра»-ի ակտիվության տակ ակտեցին դյուդացիության մեջ ընդհատակյա գրականություն տարածել։ Պոլտավայի նահանգում տասը հոգի դյուդացիներ պատահ-

խանառվում էր ենթարկվեցին իրենց մոտ սոցիալ-դեմոկրատական դրականություն և մասնավորապես «Искра» պահելու համար։ Մի հատուկ ժանդարմական ուսումնասիրող Պոլտավա՝ պարզելու համար, թե ինչպես է սոցիալիստական ուսմունքը մուտք գործել դյուդացիական միջավայրը, որտեղից և ինչ կազմակերպությունների միջոցով էին դյուդ հասցվում արդենված բրոշյուրները և կոչերը, ինչով է բացատրվում ուսուցիչներն պրոպագանդի հաջողությունը։

«Искра»-ն բազմաթիվ օրինակներով ցույց էր տալիս, թե ինչպես է աճում դյուդացիության դասակարգային առեւթյան զգացմունքը դեպի կարվածատերերը։ Ուշագրի կերպով ուսումնասիրելով ուսուցիչներին պաշարի ամեն մի արտահայտությունը դյուդում, «Искра»-ն ձեռքից առիթ բաց չէր թողնում մի ամբողջ անգամ ցույց տալու լիբերալների թերատությունը և երկչոտությունը։ Կուրսիկի նահանգի մի իսկ արվարձանում՝ Նիկոլայիվկայում, հաղորդում էր «Искра»-ն 22-րդ համարում, «դյուդացիներից մեկը մի ուսուցիչին բրոշյուր էր ստացել»։ Բրոշյուրը շատ խոսք ու գրույց առաջացրեց։ Գյուդ եկավ իսպրավինիկը (չրջանային ոստիկանապետը)՝ ոստիկանների մի հորդայով։ «Հանցավոր» դրբույկը դրավեց։ Այն ժամանակ դյուդացիները մեծ բազմությամբ դիմեցին դեպի այն խրճիթը, որտեղ իսպրավինիկը կանգ էր առել, պահանջելով վերադարձնել դրբույկը։

«Պարոնայք լիբերալ բուրժուաներ»։ Սալար նիկոլայիվցիները փորձ արին պաշտպանելու մամուլի ազատությունը։

Ընդունակ էք արդյոք դուք մի այդպիսի փորձ անելու—հարցնում է «Искра»-ն։

Անընդալ զոյության դժվարին պայմաններում «Искра»-ն բաժնական արագ էր անդրադառնում իրադարձություններին: Շատ անգամ խմբագրական նշումները հաղորդում էին, որ համարն արդեն չարված էր, երբ ստացվեց այս-էնչ հաղորդումը, որին խմբագրութունը չի կարող անհապաղ չարձադանդել: Այդպես եղավ, օրինակ, ցարական կառավարության կողմից սովի կապակցությամբ ձեռք առած միջոցառումներին վերաբերող հաղորդումն ստանալիս: Խմբագրութունն այդ հաղորդումն ուղեկցեց մի բնորոշ կոչով. ««Искра»-ն իր էջերն առաջարկում է մերկացուցիչ կամպանիա սկսելու համար կառավարության վարելիք «պարենալոռման կամպանիայի» դեմ»:

«Մեր հասարակական կյանքից» բաժնում կարելի է հանդիպել և՛ թղթակցությունների և՛ ուրվագծերի, այլև այն բանի, ինչ որ ժամանակակից մամուլում ընդունված է անվանել ֆելետոն և նոթեր: Մեծ տեղ էր հատկացվում հավաստի վաստաթղթերին, որոնք մի ուրեք հոգվածից ավելի վառ կերպով ցույց էին տալիս միապետության կամայականութունը և բթամտությունը:

«Искра»-ն տպագրում էր նաև ընթերցողների նամակները, որոնք ցույց էին տալիս, թե ինչպես է արթնանում զիտակցությունը ժողովրդի ամենահետամնաց, դեռևս ուղղուցիտ շարժման մեջ չներգրավված խավերի մեջ: Այդ անպաճույճ նամակներն անվանելի ուժով ճշմարտացի լուսարանում էին այն բարդ պրոցեսները, որ տեղի էին ունենում մասսաների զիտակցության մեջ:

«Искра»-ն ուշադիր կերպով հետևում էր բոլոր ռուսական, ոչ միայն մայրաքաղաքային, այլև պրո-

վինցիալ լրագրերին: Նրա խմբագրական գրադրության մեջ կարելի է գտնել շատ նամակներ՝ ուղղված Ռուսաստանում աշխատող ընկերներին, խնդրելով ուղարկել տեղական լրագրեր, ժուռնալներ, ժողովածուներ և դանադան հիմնարկությունների հաշվետվություններ: Այդ նյութերն ուսումնասիրվում էին և բաժնական լայն կերպով օգտագործվում «Искра»-ի էջերում:

«Искра»-ի № 16-ի «Մեր հասարակական կյանքից» բաժինը բացվում է մի կծու ֆելետոնով՝ «Մեծության վերափոխումը», կառուցված լեզույ մամուլի նյութերի վրա:

«Россия» լրագրում տպվեց մի ֆելետոն Օբմանովների ազնվական ընտանիքի տոհմագրության և հիմար ազնվական տղայի՝ Նիկա-Միլոշայի մասին: Ֆելետոնի հեղինակ Ամֆիտատրովը և լրագրի հրատարակիչն աքսորվեցին, ինքը լրագրերը փակվեց:

«Ռուսական և արտասահմանյան հասարակությունը», գրում էր այդ առթիվ «Искра»-ն, — այդ բանը հասկացավ այն խմատով, որ Նիկոլայ II-ն ի դեմս ազնվականի տղա Նիկա-Միլոշայի ճանաչել է իրեն և «Բարձրագույն» հրամայել է հանցավորներին խստիվ պատժել: Դուրս էր դալիս, որ մեր ինքնակալն ինքն էլ է ընդունում, որ իր պատկերը լավ է նկարված: Եվ այդ հիշել էր տալիս Պուշկինի հայտնի էպիգրամը, որ վերջանում է այս խոսքերով.

В полученнй оплеухи
Расписался мой дурак...»¹

¹ — Ապտակ ստանալը
Ստորագրեց իմ հիմարը...»:

«Искра»-ն ծաղրում է օտարերկրյա թերթերում լույս տեսած բացատրությունը, որպես թե «Россия» լրագրի փակման ինիցիատիվը պատկանում է ոչ թե ցարին, այլ ռուսականությանը։

«Հիշալի անձան է. իսկ և իսկ այն անեկդոտի պես, որ, եթե չենք սխալվում, մի ժամանակ պատմված էր «Նարոդնայա Վոլյայի թերթիկներին» մեկի մեջ. երկու մարդ անց են կենում զորոգուլոյի մոտով, ըստվորում նրանցից մեկը, շարունակելով դրանից առաջ սկսած խոսակցությունը, բացականչում է. «Դե հո դա հիմարներին հիմարն է»։—Գորոգուլոյն անմիջապես բռնում է նրա օձիքից և քարչ է տալիս քաղաքամաս։—Ինչո՞ւ։—Մեծությունը վիրավորելու համար։ Դուք ասում եք—նա հիմար է։—Բայց մի՞թե ես թաղավորի մասին ասացի։—Էլի ճառի՞ր։ Մենք շատ լավ դիտենք, թե մեզնում հիմարների հիմարն ով է։

Ռուսականությունն ուզում է իր տիրոջ պատվը պաշտպանի և ինքն ամենաաներկմիտ կերպով վիրավորում է «Մեծությունը»։ Ահա՛ անմիտ եռանդը։

Նման ֆելետոններ և կենդանի ուրվանկարներ պատահում են համարյա «Искра»-ի ամեն մի համարում։

«Մեծությունը վիրավորումը» ֆելետոնի ներքևում «Искра»-ի № 16-ում տպագրված են երկու նշումներ զուբատովչինայի մասին։ Նրանցից մեկը պատմում է, թե ինչպես ժանդարմական դնդապետ Զուբատովը պահնորդարանի ոտեղծած «Բանվորական» ընկերության ժողովում 150 օրինակ «Искра» է բաժանել, որի մեջ հոգված կար տպագրված այդ ընկերության մասին։

«Զուբատովն այդպիսով նպաստում է մեր լրագրի տարածմանը, — գրում էր «Искра»-ն, — դրա համար

մենք նրանից շատ շնորհակալ ենք։ Է՛լ ավելի շնորհակալ ենք նրանից նրա համար, որ նա այդ դեպքի ժամանակ հասարակությունը հայտնել է մեր լրագրի ի՞ր ենթադրած խմբագիրների անունները։ Ռեդուցիոններենի համար միշտ էլ կարևոր է լիմանալ, թե ժանդարմի կապաճները որ կողմն են ուղղված։ Բայց ո՞վ կարող էր կարծել, որ մոսկովյան «մեծ» խուզարկուն ալեքսան շատախոս և անդադսնապահ կարող է լինել, որ իր կապաճները կպատմի հասարակությանը»։

Երկրորդ նշումը հասցեագրված էր այն պրոֆեսորներին, որոնք Զուբատովի կողմից հրավիրված էին բանվորների հետ զրուցելու համար։ «Искра»-ն հաղորդում է, որ պրիվատ-դոցենտ Դենը երբ տեսավ, որ «բանվորական ընկերությունը» կազմակերպված է օխրանկայի ձեռքով, հրաժարվեց այդ գործին մասնակցելուց։ Եվ այդտեղ՝ խմբագրությունը դիտողությունը. «Տեսնենք մյուս պրոֆեսորներն էլ սղամարդություն կունենա՞ն դրանից հետո իրենց աշխատակցությունը շարունակել Զուբատովի հետ։ Միայն ռուսականական շայկայի հետ որևէ չիում ունենալուց հրաժարվելով է, որ բանվոր դասակարգի համար լեզալ աշխատանք կատարել ցանկացող մարդիկ կարող են ստիպել կառավարությունը թեկուզ մի փոքր աղատություն տալ աղնիվ լեզալ ինքնագործունեությունը»։

Նման «դիտողություններ խմբագրության կողմից» կամ հոգվածների վերջավորումներ հաճախ պատահում են «Искра»-ի՝ լիբերալ բուրժուազիայի և ինտելիգենցիայի շարժմանը նվիրված նյութերում։

Նույն տոնը պահպանված է նաև Օդեսայից ստացված մի մեծ թղթակցության մեջ, որում ման-

բամասն նկարագրված է նարոդնիկ Լեվիտսկու ձեռքով կազմակերպված արտեղենների անդամների ժողովը: Կուլակային չահերի այդ արտահայտիչն առիթ էր բաց թողնում մի ավելորդ անգամ իր հավատարիմ հպատակային զգացմունքներն արտահայտել միապետությանը և այդ իսկ զգացմունքներն էլ նա ներշնչում էր արտեղենների անդամներին: Թղթակցությանը գլխավոր կերպով նկարում է Լեվիտսկու կերպարանքը նրա «չափավորության» և «փոքր գործերի» թեորիայով, նրա դեմիդներով՝ «հարյուր կոպեկը մի ոտբլի է», «հավիկը հատիկ-հատիկ է կտցում» և այլն: Թղթակցությանը նկարագրում է նույնպես «ոչ հեռու նստած զոչաղ պրիստավին», որ լսում էր այդ ճոռոմաբանությունները «ակնհայտնի խրախուսանքով»:

Նարոդնիկների գուբատովյան օրինակով արտեղեններ կազմակերպող հետնորդների ծառայության գերը պարզված է: Եվ ճշմարիտ որ կործանիչ կերպով է հնչում այդ թղթակցության վերջավորումը. «Վերջապես, Շչեգրինի խոսքերով ասած՝ «նորից բացվեցին հասարակաց տան դռները» և մենք նորից լսեցինք պ. Լեվիտսկու հորդորները՝ միշտ կանգնած լինել օրենքի հողի վրա: Ապա հետևեցին առաջարկներ՝ շնորհակալություն հայտնել քաղաքապետին շենքի համար, պ. Լեվիտսկուն՝ նախագահելու համար, պ. Վիտտեին՝ «արտեղեններին ցույց տալու» նյութական օժանդակության և օրենսդրական պաշտպանության համար»: Վայրկենապես հոգաբարձու-ինտելիգենտներից մեկի ձեռքով համապատասխան հեռադիր կազմվեց, փող հավաքվեց: Ակնհայտ է, որ պ. Լեվիտսկին արդեն բավական չափով կարողացել է արտելի

անդամների մեջ դարգացնել հավատարիմ-հպատակային ճորտություն ունի»:

Այդ է ոչնչացնող, կծու հեղնական տոնը «Искра»-ի այն նշումներում, որոնցում խոսվում է լիբերալների ստորաքարչության մասին ցարիզմի հանդեպ:

Այնուհետև «Искра»-ի մեր դիտած համարում ամբողջությամբ արտատարված է «Հայրենակցությունների և կազմակերպությունների միավորման Մոսկվայի գործադիր կոմիտեի» նամակը բանվորներին: Նամակը հաղորդում էր Մոսկվայի ուսանողական կազմակերպությունների գործունեության մասին և ցույց էր տալիս ուսանողների կողմից բանվորական շարժման մեջ մասնակցելու աճող ձգտումը:

Հետևյալ նշումը—«Ինչպես է ցարական կառավարությունը հոգ տանում ժողովրդական աշխատանքության մասին»—նվիրված է աշխատանքության տների և աշխատանքային տների հոգաբարձության որոշմանը, որի վրա «Ինքը թագուհին բարեհաճեց դրել. «համաձայն եմ»:

Հաճախ «Искра»-ում բերվում էին ցարական դուկումենտներ: Նրանց համար մեծ խորագրական մեկնություններ էին պահանջվում, —այնքան պերճ կերպով էին խոսում նրանք իրենց մասին: Եվ տվյալ դեպքում մի քանի ցիտատներ՝ բերված «Правительственный вестник»-ից, որում մի աղապիսի դուկումենտ կար տարադրված, լիովին բացահայտում էին այն դերը, որը ցարական կառավարությունը հատկացնում էր «աշխատանքային տներին»: Ահա այդ ցիտատներից մեկը.

Այդպիսի մի տուն Չենտոխովում «կարող է ծա-

ուայել խափանելու համար ամեն տեսակի սոցիալ-դեմոկրատական ուսմունքներ, որոնք այնտեղ տարածվում են Պրոստիայից և Ավստրիայից եկած բանվորներին միջոցով: Հիշյալ ուսմունքների ծայրահեղութուններին առանձնապես համակրական վերաբերմունք է ցույց տալիս պրոլետարիատը, որի միջավայրում էլ առաջանում է քաղաքականապես անբարեհույս մի տարր: Տվյալ տեղում աշխատատեղեր, չքավորներին ապաստան և սնունդ հալթալթելով... այդպիսով հիանդիսանա տարածվող հիշատակված վնասակար ուսմունքների խափանմանը նպաստող մի հիմնարկություն...»:

«Искра»-ին մնում էր միայն «ամբողջ հոգով շնորհակալություն հայտնել «Правительственный вестник»-ից այս խրատական դոկումենտի հրապարակման համար»:

«Искра»-ի № 16-ում նշումների մի ամբողջ սերիա նախկինում է հոգևորականությունը. «Վարչապետի արքեպիսկոպոս Պոպելը լեհական սոցիալիստների դեմ պայքարելիս», «Եկեղեցու հեղ սպասալորները», «Խնչի՞ մասին է ցավում հոգևորականությունը», «Աեմի-նարիստները պայքարը լրտեսության դեմ»: Դրանք բոլորը պատկերում են եկեղեցու դերը ուղղություն շարժման դեմ մղվող պայքարում և տերտերների ընդհանուր բարոյական կերպարանքը:

Այդ նշումները հիմնավոր կերպով հաստատված են փաստաթղթերով, նրանցում վարպետորեն օգտագործված են արխիվերենների և արքեպիսկոպոսների շրջաբերականները, նամակները:

Սոցիալիստական պրոպագանդի վտանդին վերաբերող մի շրջաբերական՝ ուղղված հոռմա-կաթոլիկա-

կան հոգևորականությունը, այդ վտանդը խափանելու համար հանձնարարում էր «խնամքով շարադրել և արժատացնել հավատացյալների մտքերում եկեղեցու առողջ ուսմունքներ իշխանություն, սեփականություն, ամուսնություն, Գրիստոսին և սրբերին նմանվելու մասին, վերադարձ համաձայնություն և սիրո մասին հավատացյալների մեջ, ճակատի քրտնքով հաց աշխատելու անհրաժեշտություն մասին: Այն վայրերում, որտեղ շարադրողների խորհուրդներն առավելագույն հաջողություն են ունենում, այսինքն՝ մեծ քաղաքներում և գործարանային կենտրոններում, հոգևորականությունը պետք է առանձին եռանդով դիմադրի չարիքին...»:

«Искра»-ն այդ առթիվ նշում էր.

«Աշխատեցե՛ք, պարոններ, աշխատեցե՛ք: Ձեր ջանքերը ձեր կամքին հակառակ մեր դադարարների պրոպագանդին ձն ծառայում»:

Եկեղեցական հրատարակություններից վերցրած քաղվածքներն ուրիշ նշումների մեջ էլ օգտագործվում են մերկացումներ անելու նպատակի համար:

Այդ համարում մի թղթակցություն նախկինում է ուսանողական շարժման: Նրան որպես հիմք վերցված է խարկովի համալսարանի ուկրաին հոգևածը, որն առարկում է ուսանողական կազմակերպությունների ստեղծման դեմ: Ռեկտորը բախական անկեղծ է: Նա վախենում է, որ երիտասարդությունը սկսելու է դադարել քաղաքականությունից, որ զանազան քաղաքական պարտիաներ կօգտագործեն ուսանողական կազմակերպություններն իրենց շահերի համար: Այդ առթիվ «Искра»-ն, որ բազմիցս դրել էր ուսանողական

չարժաման նշանակության մասին, մի անգամ էս չեւտում է .

«Ինքնակալությունը ոչ մի իրական (և ոչ կարեկատուրային) կազմակերպություն չի կարող տալ ուսանողներին, քանի դեռ «հասունացած» մարդկանց աղատությունից զուրկ լինելը սպառնում է այդ կազմակերպությունները դարձնել «քաղաքական դժգոհության օդանցք» : Իսկ դրանից հետևում է, որ ուսանողական շարժումը մեծ քաղաքական նշանակություն ունի, «Ժամանակակից կարգի քայքայման տարր» հանդիսանալով, ինչպես վկայում է Պետերբուրգի ուսանողների բանաձևը՝ ընդունած նոյեմբերի 13-ի հավաքություն» :

«Искра»-ի № 16-ի «Մեր հասարակական կյանքից» բաժինը վերջանում է ցարական պրովինցիայի բարձրի ուրվանկարով :

«... Լուկյանովսկի դավառի զեմսովային պես Լեյ Պուչկինը... իր մոտ կանչեց Կերեյուշևի դյուդի տանուտեր Երմոչկինին՝ հասարակական շտեմարանները լցնելու գործով : Այդ ժամանակ պարոն «զեմսովոյականի» մոտ հյուրեր կային, ուստի և «նրանք չէին ընդունում»... Վերջապես, արդեն երեկոյան «բարձր բարեձնադությունը» «բարեհաճեցին դուրս գալ», ճաշին հյուրերի հետ միասին կենսատու հեղուկով իրեն լավ պնդելով... բոունցքի մի հարվածով վայր գլորեց դյուդացուն... Նա այնպես հարվածեց դյուդապետի երեսին, որ փչրեց նրա երկու ատամը : Տանուտերը ներքին գործերի մինիստրին դանդառ ուղարկեց : Հարցապնդումին... Պուչկինը պատասխանեց, որ տանուտերը հարբած էր և «հանդուգն», որ նա ինքն ընկալ հատակի վրա և «ինքը կոտրեց իր ատամները» :

Վայրենության այդ դեպքի մասին թղթակցությունը ոչ մի լրագրում չտպվեց . ցենզուրային օրենքով արգելվում էր դրել «ոստիկանության և զեմսովային պետերի շարահղությունների մասին, ինչպիսիք էլ լինեն նրանք» :

Ահա մի այլ զեմսովային պետի ֆիգուր, «Искра»-ի նույն այդ համարում ուրվանկարված .

«... Նա իր մեջ համատեղած ունի զոգոյան հերոսների համարյա բոլոր հատկությունները . սլյուշկինյան ազահությունը երբեմն փոխարկվում է Պետուխի բարեհոգությամբ, Նոդդերյովի անամոթխածությունը և լրբությունը երբեմն տեղի է տալիս չիչիկովյան նրբավարության և այլն, և այդ ամենը, իհարկե, ոչ առանց օգուտի նրա գերամեծար անձնավորության համար...»

Նա լուռ կարդում ու վերջացնում է խնդրադիրը . լուռ պատառ-պատառ է անում այն և նույնպես լուռ ամբողջ թափով խնդրարկուի «մոութին» մի ուժգին ապտակ է հասցնում : Գեղջուկը երբում է, իսկ հարվածները կարկտի պես տեղում են նրա արևառ զեմքին... Հասնելով այն բանին, որ գեղջուկի կերպարանքն ամբողջովին կապույտ լեղակ դարձավ, Ս. Ս.-ը նրան դուրս է հրում և նրա հետևից մի կատաղի «սրիկա» չարտում :

«Искра»-ի թեկուզ միայն մի համարի «Մեր հասարակական կյանքից» բաժնի նշումներն իրենց ամբողջությամբ վերցրած տալիս էին Ռուսաստանի կյանքի բավական բազմակողմանի պատկերը և օգնում էին ընթերցողին ըմբռնելու տարբեր իրադրությունները և երևույթները :

«Искра»-ի հետևյալ մեծ բաժինն էր «Բանվորա-

կան շարժման խրոնիկան և նամակներ փաբրիկաներից և գործարաններից»։ Այդ բաժնում առատ նյութ էր տպագրվում բանվոր դասակարգի դրուժյան մասին Ռուսաստանում ։

Արդեն առաջին համարում «Искра»-ն իր հետ կապված բանվորներին անվանում է «թղթակից-բանվոր»։ Խմբագրությունն արդեն այն ժամանակ այդ տերմիններին այն հաստիք լիարժեք էր տալիս, որը պահպանվեց բոլշևիկյան մամուլի ամբողջ պատմության ընթացքում, որպես ցուցանիշ պարտիայի թերթի՝ մասսաների հետ ունեցած անքակտելի կապի։ Արտասահմանում հրատարակվող անդեզալ լրագրի համար բանվորներին հետ անմիջական կապեր հաստատելը մի բացառիկ դժվար գործ էր։ Սովորաբար թղթակցությունները հասցվում էին «Искра»-ի գործակալներին՝ պրոֆեսիոնալ ռեդակցիոներներին ձեռքը, և արդեն նրանց միջոցով ուղարկվում էին խմբագրություն։

Լենինը չափազանց բարձր էր գնահատում նամակները և չէր դադարում հիշեցնել «Искра»-ի գործակալներին, որ նրանք լայնացնեն իրենց կապերը բանվորներին հետ։

«Արդեն շատ ուրախացրեց Ձեր հաղորդումը բանվորներին հետ ունեցած զրույցի մասին, — գրում էր Լենինը Ռադչենկոյին։ — ... Անպատճառ հաղորդեցե՞ք այդ ձեր բանվորներին և հաղորդեցե՞ք նրանց մեր խնդիրը, որ նրանք իրանք էլ գրեն մեզ ոչ միայն տպագրելու համար, այլ նաև այնպես, մտքերի փոխանակության համար, որպեսզի չկորցնենք մեր կապը միմյանց հետ և մեր փոխադարձ լմբանումը»¹։

¹ Լենին, Հ. XXVIII, էջ 142։

«Բանվորական թղթակցությունները Պիտերից շատ հարկավոր են։ Ի սեր աստծու, ամենաեռանդուն կերպով ճարեցե՛ք նրանցից, — հիշեցնում էր Լենինը, — մանավանդ գործադրություն մասին, հետո գրականություն գործած տպավորության մասին»¹։

Թղթակցությունների ամենամեծ քանակն ստացվում էր Մոսկվայից, կենտրոնական-արդյունաբերական շրջաններից, Պետերբուրգից և Անդրկովկասից։ Ռուսաստանի տեքստիլ կենտրոններում մեծ հաջողություն աշխատում էր «Искра»-ի գործակալ Իվան Վասիլյևիչ Բաբուշկինը, որն իր շուրջը կադրակերպել էր տասնյակ բանվորներ։

«Քանի որ Իվան Վասիլյևիչն ազատ է, — գրում էր Լենինը, — «Искра»-ն զուտ-բանվորական թղթակցությունների պակասություն չի կրում։ Աչքի անցրե՛ք «Искра»-ի առաջին 20 համարները, այդ բոլոր թղթակցությունները Շուլյայից, Իվանով-Վոդնենսկից, Օրենբուրգ-Չուլսկոյից և Ռուսաստանի կենտրոնի այլ տեղերից են. դրանք համարյա բոլորն էլ անցել են Իվան Վասիլյևիչի ձեռքով, որն աշխատում է ամենասերտ կապ հաստատել «Искра»-ի և բանվորների միջև»²։

«Искра»-ի յուրաքանչյուր համարում տպագրվում էր 5-ից մինչև 10 նամակ։ Թվեր էին բերվում կոպեկանոց աշխատավարձերի մասին, տուգանքների գումարներ, անմարդկային չահագործման փաստեր, ինքնամոլ վարպետների աղգանուներ։ Այդ ամենը նկարագրվում էր ականատես բանվորների ձեռքով։

Չկար և ոչ մի նշում, որում այս կամ այն ձևով

¹ Լենին, Հ. XXVIII, էջ 171։

² Լենին, Հ. XIV, էջ 396—397։

չանցկացվեր այն միտքը, որ տնտեսական ճնշումը, որին ենթարկվում է բանվորը, հետևանք է քաղաքական իրավադրկության:

Բանվորներն ուղարկում էին խմբադրությանը նաև իսկական մաստաթղթեր, որոնք ստալին էին Ֆարբրիկաներում և գործարաններում տիրող սանձարձակ շահագործման պատկերը:

Բազմաթիվ նամակներ վերադառնում էին բանվորներին դատակարարչային գիտակցության արթնացման և աճման մասին: Նրանք ցույց էին տալիս, թե ինչպես օրեցօր ընկնում էր «էկոնոմիստներին» աղղեցությունը:

Սմբադրությունը գիտեր վարպետներն օգտագործել բոլոր ստացվող նամակները: Նրանցով զբաղվում էր անձամբ Լենինը: Միևնույն հարցը շոշափող նամակները, կամ որոնք նվիրված էին արդյունաբերության որևէ մի ճյուղին, ամփոփվում էին մի հոգևածի կամ տեսության մեջ:

«Искра»-ում չկային չոր ու ցամաք, անհետաքրքրական, կրկնվող նշումներ: Նրանցից ամեն մեկը նշում էր որևէ մի նոր դետալ, շնչում էր հեղինակների անկեղծությունը, անմիջականությունը, որոնք ամեն քայլափոխում առաջին անգամ էին գրել ձեռք առնում:

Ազահաբար խորաթափանցելով Ռուսաստանից ստացված թղթակցությունների ընթերցանություն մեջ՝ Լենինը խիստ կերպով նախատում էր այն կոմիտեները, որոնք ուղարկում էին «կոկադ-սանրած» նամակներ, այնպես խմբադրված, որ չէր զգացվում նամակի հեղինակը, նրա տրամադրությունները:

«Искра»-ի № 16-ում «Բանվորական շարժման խրոնիկան և նամակներ Ֆարբրիկաներից և գործա-

ընեններից» բաժինը բացվում էր մի բանվորի նամակով «գործարանային ինքնակալներ» խորագրով:

«Թանգազին ընկերներ»:-Գրում էր բանվորի թղթակցը:—Այս փոքրիկ թղթակցության մեջ ես կաշխատեմ գոնե մասամբ հրապարակ հանել մեր անմիջական պետերի ալյանդակ վակիտանալիաները, որոնք օրհնքի պաշտպանություն են բերում ամեն քայլափոխում ոչ միայն ցանկանում են կադմալուծել մեր համերաշխությունը, այլև բարոյալքող աղղեցություն են գործում անդիտակից բանվորներին վրա...»:

Այնուհետև նկարագրվում են միքանի «գործարանային ինքնակալներ»: Մեխանիկ Գ. Դեյչմանը, որը կատարված աշխատանքի համար նշանակում է խելքին փչած գինը, իսկ եթե որևէ մի բանվոր համարձակվի առարկել, կատաղածի նման բղավում է. «Ձեք ուղում վերցնել ինչ-որ ես տալիս եմ, ուրեմն վազկեցեք հաշվանիդ»: Բերվում է մի բանվորի աղգանուն, որին Դեյչմանը գործարանից դուրս է վռնել:

Այնուհետև նկարագրվում են վազոնի վարպետ Պոլիպովսկին, գործարանի վերակացու Յակովլևը՝ «նախկին օղևվաճառ և գարեջրատուն պահող, կենդանի ապրանքի հետ միասին»: Բերվում են նրանց բերտ վերաբերմունքի վաստեր դեպի բանվորները: Նամակը վերջանում է կոչով:

«Հավաքվե՛ք ավելի միաբան, և այն Ժամանակ մեզ պաշարող ամբողջ շնանոցը չփոթություն և երկյուղի մեջ ցրվի կպա ամեն կողմ»:

Տարված են ևս 4 հատ փոքրիկ թղթակցություններ: Կրեմենչուկից դրում են այն մասին, որ բանվորների բաց թողած պրոկլամացիան, որում գրված են գործարանատերերին ուղղած պահանջներ, աղղեց.

Փարբիկանտը զիջեց— բարձրացրեց աշխատավարձը, արձակեց կապալառուին: Ուրախից ստացված երեք նամակներ հաղորդում են գործարաններում տեղի ունեցած անկարգությունների մասին, որոնք ճնշվեցին դինվորական ուժի միջոցով:

Մի «Բանվորի» մեծ «նամակը» նկարագրում է դրությունը Բաթումում: Այդ ժամանակ Բաթումում, ինչպես հայտնի է, աշխատում էր ընկեր Ստալինը: Նա կազմակերպեց առաջավոր բանվորներին, լայն ռևոլուցիոն գործունեություն ծավալեց Բաթումի այն պրոլետարների մասսայի մեջ, որոնք մինչև այդ բոլորովին ընդդրված չէին սոցիալ-դեմոկրատական պրոպագանդի մեջ: Բաթումի բանվորի՝ «Искра»-ում բերված նամակն ընկեր Ստալինի ահադին աշխատանքի ուղղակի հետևանքն էր:

Նամակը նկարագրում է բանվորների մղձավանջախն դրությունը.

«Բաղաքում կա 8 հազարից ավելի բանվոր:

Մեզանում, ինչպես և Կովկասի բոլոր գործարաններում, բացի Բագվից, գործարանային տեսչություն **չկա...**¹ Այստեղ գործարանատերերի կամայականությամբ լիակատար աղատություն է տրված. նրանք ինչ ուզում են՝ անում են, առանց ոչ ոքից և ոչնչից վախենալու և հանդիսանում են բանվորների կյանքի և առողջության լիակատար տեր ու տնօրենը, իսկ բան-

¹ Այստեղի վերաբերյալ խմբագրությունը ծանոթագրություն է տալիս.

«Հենց նոր հաղորդում ստացվեց Թիֆլիսի նահանգում Փարբիկային տեսչություն մտցնելու մասին, դրա հետ կառավարությունը բացելիքաց խոստովանվեց, որ Թիֆլիսի բանվորների գործադուլները զրոյացին նրան տեսչություն մտցնելու»:

վորները նրանց ստրուկներն են»: Հեղինակը նկարագրում է հանուրդներին, տուգանքներին, բանվորներին կողոպտելու սխտեմը և վերջացնում է նամակը այս խոսքերով.

«Այժմ մենք վատտակում ենք միայն մի հացի ու ջրի փող, միայն որպեսզի սովից չմեռնենք, որդեազիլի միճակի լինենք ստեղծելու ոչ մեզ, այլ ուրիշներին համար հարստություններ... Ծանր է այսպես ապրելը, և ակամա հարց է ծագում՝ ինչո՞ւ ենք մենք այսպես տառապում. մեր կյանքը դուրի է ամեն ուրախությունից. նա միայն մի անընդհատ ճանապարհ է դեպի դեմքման: Ուրեմն՝ արդյոք մեզ համար ավելի լավ չէ՞ մեռնել ոչ թե դադարահների մոտ, ոչ թե որպես ստրուկներ, այլ մեռնել պայքարելով ազատության համար, լավ ապագայի համար...»:

«Искра»-ն ջերմորեն պաշտպանում էր Բաթումի պրոլետարների շարժումը և ուշադրությամբ հետևում էր նրան: Լրագիրը միջանի թղթակցություններ նախրեց Բաթումի գործադուլին և ցույցին՝ կազմակերպված ընկեր Ստալինի ձեռքով 1902 թվի մարտ ամսին: Խմբագրությունը նշում էր Օդոբգեթի գալառում տեղի ունեցած դուռադուլական շարժման խոշոր նշանակությունը, որը «ապացնում է բոլորին գյուղացիների համերաշխությամբ և նրանց մեծ տոկունությամբ»:

«Искра»-ի № 37-ը 1903 թ. ապրիլին մի հատուկ հոդված նվիրեց Բաթումի ցույցի տարեդարձին.

«Մարտի 8-ին վերջացավ Բաթումում անցյալ տարի տեղի ունեցած անկարգությունների գործի քննությունը: Շնորհիվ փայլուն պաշտպանության, ցարական ծառաներն անգամ հարկադրված եղան արդարացնել բանվորներին: Մարտի 9-ին, անցյալ տարվա անկար-

գությունների տարեդարձին, բանվորները մի վիթխարի ցույց կազմակերպեցին: Բանվորները չորս պարզած դրոշակներով շրջեցին ամբողջ քաղաքը երգերով և «կեցցե՛ քաղաքական աղատությունը» աղաղակներով. ճանապարհին պրոկլամացիաներ էին ցրվում և ատրճանակ էին կրակում. կոտրատեցին տեղական մարդատյաց «Черноморский вестник» լրագրի ապակիները: Դրանից հետո բանվորները, թվով ավելի քան 3·000 հոգի, գլխակցին Ղեպի կայարան. կանգնեցրին շարժվող դնացքը, որով գնում էին օկրուգային դատարանի ամբողջ կազմը և բանվորների պաշտպաններից երկուսը. պաշտպաններին սրտաչարժ օլացիա արին. դնացքը կանդնած մնաց յոթ րոպե: Իշխանությունները վերջնականապես չզկլկեցին: Ոստիկանությունը և զորքը վաղուց էին ամբոխի հետևից, բայց ոչինչ չէին կարողանում անել: Նրանք չէին համարձակվում մճուկան միջոցների դիմել, որովհետև բանվորների ահադին մեծամասնությունը ղեկաված էր և նրանց կողմից նախատեսվում էր կատաղի դիմադրություն: Եվ վերջիվերջո բանվորները կծկեցին դրոշակները և խաղաղ կերպով ցրվեցին, տոնելով չզկլկած իշխանության վրա տարած իրենց հաղթանակը»¹:

✓ Բանվորական շարժման խրոնիկայից և Փարբիկաներից ու ստացվող նամակներից հետո «Искра»-ում միշտ դետեղվում էր «Պարտիայից» բաժինը: Այդ բաժնի նյութերը մերկացնում էին սոցիալ-դեմոկրատների մեջ եղած՝ ուսուցիտն մարքսիզմին թշնամի օպորտունիստական հոսանքները և օգնում էին համա-



Ի. Վ. ՍՏԱՆԻՆ (1900 թ.)

¹ «Искра» № 37, ապրիլ 1903 թ.:

խմբելու տեղական կոմիտեներն իսկրայական դրոշի շուրջը:

«Պարտիայից» բաժնում քննադատության էին ենթարկվում այն կոմիտեների ղեկավարները, որոնցում զործում էին «էկոնոմիստները», սուր կերպով քննադատվում էին «Рабочая мысль» և «Рабочее дело» թերթերի ելույթները, բանավեճ էր վարվում սոցիալ-դեմոկրատիայի օպորտունիստական էմիգրատական առանձին խմբերի դեմ: Այդտեղ էլ մերկացվեցին Բուկուրի համագումարի և «էկոնոմիստների» խորհրդակցությունների բանաձևերը:

Այդ նյութերի տոնը վճռական էր և անհաշտ: Բայց որքան խիստ կերպով էր դուրս գալիս «Искра»-ն պարտիայի միացման լենինյան պլանի բոլոր գիտակից հակառակորդների դեմ, այնքան նա համբերատար և զգալուն կերպով էր վերաբերվում այն սոցիալ-դեմոկրատներին, որոնք դեռևս չէին կարողացել ինքնուրույն կերպով ըմբռնել իսկրայական տակտիկան: «Պարտիայից» բաժնում «Գրադրություն ընթերցողի հետ» ուղերթիկի տակ հաճախ տպվում էին առանձին պարտիական աշխատողների տարակուսական հարցերը պարունակող նամակներ: Այդ հարցերին միշտ մանրամասն պատասխան էր տրվում:

«Պարտիայից» բաժինը սխառմատիկ կերպով ընդհանրացնում էր պարտիական աշխատանքի փորձը: Լենինը բազմիցս մատնանշում էր, որ ուսուցիչն մարքսիստները կադմակեդական աշխատանքի մեջ չառ հետ են մնացել, որ նրանց զործունեությունը հիշեցնում է անհմուտ արհեստավորի աշխատանքը: Եվ «Искра»-ն իրեն նպատակ դրեց պարտիական աշ-

խատանքի փորձի փոխանակում կազմակերպել և տեղական կոմիտեներն աշխատել սովորեցնել:

Այդ նույն բաժնում սիստեմատիկ կերպով տըպվում էին տեղական կոմիտեների դործունեությունը հաշվետվություններ կամ աշխատանքի տեսություններ: Հատուկ հոգիվածներում ընդհանրացվում էր մայրամեկյան հաշվառություններ և այլ մեծ կապալանիաներ կազմակերպելու փորձը: Արտատպվում էին առանձին կոմիտեների տարածած ամենահաջող թուղթիկները և պրոկլամացիաները: Խմբադրությունն այդ նյութերն ուղեկցում էր, օրինակ, այսպիսի դիտողություններով.

«Բերում ենք զինվորականների մեջ սոցիալ-դեմոկրատական ագիտացիա մղելու առաջին փորձը հանդիսացող այդ պրոկլամացիայի (հեղափոխական տալա-գրված) տեքստը: Մենք մեր կողմից հանձնարարում ենք ընկերներին հաջող արդյունք ստանալ փորձից օգտվել»¹:

Սոստավորապես նույնպիսի դիտողություններով տպվում էին նաև դանադան պարապմունքների ծրագրերը պրոպագանդիստական խմբակների համար և շատ այլ նյութեր:

Այդ բաժնում մեծ տեղ էր բռնում պարտիական խորհրդիկան, որ համառոտակի հաղորդում էր կոմիտեներին վճիռների և դործողությունների, նոր պարտիական հրատարակությունների մասին և այլն:

Շատ նյութեր «Պարտիայից» բաժնում տպագրվում էին երիտասարդ սոցիալ-դեմոկրատներին մեջ պրոֆեսսիոնալ ռևոլուցիոններին դեմ մշակելու ակնհայտին նպատակով: Եվ այդ հասկանալի է. պարտիան դեռ

նոր էր կազմավորվում, շարժման մեջ էին ներքաշվում նոր մարդիկ, որոնք հաճախ ընդհատակյա աշխատանքի ամենատարրական ունակություններ (навык) անդամ չունեին:

«Искра»-ն սովորեցնում էր սոցիալ-դեմոկրատներին կոնսպիրացիայի եղանակները, սովորեցնում էր ընդհատակի տեխնիկա: Ահա մի բնորոշ օրինակ.

«Մեր ներկայացուցիչներից մեկը, — հաղորդում էր «Искра»-ն, — խնդրում է մեզ դեմոկրատ հետևյալ կոչը...» Այնուհետև դալիս էր կոչի տեքստը.

«Վերջին ժամանակ դարձյալ հայտնի եղան միջանի տխուր դեպքեր, երբ խուզարկությունները և ձերբակալումները հետևանք են եղել ռևոլուցիոններների կամ ռևոլուցիոն դործունեությունները համակողմ անձնավորությունների անփութություն»¹:

Այդ յուրահատուկ կոչում տրվում են նաև մի շարք դործնական խորհուրդներ՝ դրադրություն մեջ զգուշություն պահպանելու անհրաժեշտության մասին, շեֆից օգտվելու կարևորագույն կանոնների մասին և այլն:

Նման խորհուրդներն օգնում էին սոցիալ-դեմոկրատական երիտասարդությունն աճելու-դառնալու ոչ միայն անվահեղությունամբ և անձնվիրությունամբ վառված, այլև պրոֆեսսիոնալ-ընդհատակյա դործչի համար պարտադիր ունակություններով զինված ռևոլուցիոններին:

«Խնչպես պետք է պահել իրեն դատարանում», «Խնչ պատասխանել հարցաքննության ժամանակ», —

¹ «Искра» № 9, հոկտեմբեր 1901 թ.:

¹ «Искра» № 13, դեկտեմբեր 1901 թ.:

այդ նպատակին ծառայող այսպիսի շատ այլ թեմաներ
ևս լուսարանեց «Искра»-ն իր էջերում:

«Искра»-ի № 16-ում «Պարտիայից» բաժինն ամ-
բողովին լցված է իր դրադրությամբ՝ ընթերցողներին
հետ: Խմբագրությունը երկու տարակուսական նամակ
էր ատացել:

Մի նամակի հեղինակը խնդրում էր, որ «Искра»-ն
նորից հարց բարձրացնի ագիտացիայի մասին: Նա
հարց է տալիս, արդյոք ձեռք է հասկացել նախորդ
համարներից մեկում զետեղված հոդվածը, թե թեր-
թիկները և բրոշյուրներն այժմ հաճողությամբ փո-
խարինվում են լրագրերով:

Մյուս նամակում խնդրվում է պարզել, թե ինչ
նկատի ունի խմբագրությունը, երբ ասում է, թե
անհրաժեշտ է ոստիկանությանը հակահարված տալ
ցույցերի ժամանակ: Ռեկուզիտներն էլ մեջ այժմ
ձայներ են լսվում, թե ցույցերը պետք է կատարվեն
գլխավոր: Արդյոք այդ նկատի ունի խմբագրությունը
«հակահարված» ասելով:

Երկու նամակում էլ ակտուալ հարցեր են դրված:
«Искра»-ն արդեն քանիցս զրել էր դրանց մասին:
Բայց ընթերցողների նամակները վիճարկում են, որ ոչ
բոլորն են հասկացել ագիտացիայի բնույթը և ցույցե-
րի դերը նոր պայմաններում, և խմբագրությունը նո-
րից ամեն ինչ հանդամանորեն պարզաբանում է: «Գրա-
կանության մի այնպիսի ձև, ինչպիսին պրոկլամա-
ցիան է,—պատասխանում է նա ընթերցողներին,—
ուշնչով չի կարելի փոխարինել և այն միշտ էլ անպայ-
ման պետք կլինի»:

«Искра»-ն դատապարտում է այն մարդկանց,
որոնք փոխանակ համառոտական լրագրին եռանդուն

կերպով օգնելու, ընդհատակյա դրականության ինչ-որ
նոր, արհեստական ձևեր են հնարում:

«...Լիովին ընդունելով քաղաքական դրականու-
թյան ամեն տեսակները՝ թե՛ հին, թե՛ նոր, միայն թե
դա լինի լավ քաղաքական դրականություն, մենք մեր
կողմից խորհուրդ կտայինք աշխատել ոչ թե թուղթիկ
թերթիկներին և հանրամատչելի բրոշյուրներին միջին
տիպը մոգոնելու վրա, այլ աշխատել իրոք պարբե-
րական անվանիքով արժանի (այսինքն՝ ամսական ոչ
թե մեկ անգամ, այլ ամսվադր երկու—չորս անգամ
դուրս եկող) և համա-ռուսական ուղղությամբ օրգանի
վրա»:

Չափազանց հետաքրքրական է «Искра»-ի պատաս-
խանը ցույցի ժամանակ ոստիկանությանը հակահար-
ված տալու հարցին: Խմբագրությունն այստեղ համո-
րեն զուգակցում է միանգամայն կոնկրետ դործնական
խորհուրդները մարքսիստական տակտիկայի ընդհա-
նուր սկզբունքային դրույթներին պարզաբանման հետ:

«Հակահարված նախապատրաստել—այդ նշանա-
կում է՝ ցուցարարների մի որոշ մասը կազմակերպել
այնպես, որ նա կարողանա ոստիկանության հետ ընդ-
հարկելիս ամբոխի վրա ազդել, հետ պահելով նրան
ինչպես խառնիխուռը փախուստից, այնպես էլ կատա-
ղի բռնկումներից, որոնք կարող են արյունահեղու-
թյունն անխուսափելի դարձնել, և հենց զբաղվելով
տասնապատկելով լախտի, ձեռնախայտերի և այլն նշա-
նակութունը որպես ինքնապաշտպանության զենքե-
րի»:

Սակայն «Искра»-ն հենց այդտեղ էլ նախադրու-
յացում է վաղաժամ գլխավոր դիմադրությունից:

«Մենք կարող էինք կոչել վերջինիս դիմելու մի-

այդ նպատակին ծառայող այսպիսի շատ այլ թեմաներ
ևս լուսարանեց «Искра»-ն իր էջերում :

«Искра»-ի № 16-ում «Պարտիայից» բաժինն ամ-
բողջովին լցված է իր դրադրությամբ՝ ընթերցողներին
հետ : Խմբագրությունը երկու տարակուսական նամակ
էր ատացել :

Մի նամակի հեղինակը խնդրում էր, որ «Искра»-ն
նորից հարց բարձրացնի ազիտացիայի մասին : Նա
հարց է տալիս, արդյոք ճիշտ է հասկացել նախորդ
համարներից մեկում դետեղված հոդվածը, թե թեր-
թիկները և բրոշյուրներն այժմ հաջողությամբ փո-
խարինվում են լրագրերով :

Մյուս նամակում խնդրվում է պարզել, թե ինչ
նկատի ունի խմբագրությունը, երբ ասում է, թե
անհրաժեշտ է ոստիկանությանը հակահարված տալ
ցույցերի ժամանակ . «Ռեկուլցիոներներին մեջ այժմ
ձայներ են լսվում, թե ցույցերը պետք է կատարվեն
գլխավոր : Արդյոք ա՞յդ նկատի ունի խմբագրությունը
«հակահարված» ասելով» :

Երկու նամակում էլ ակտուալ հարցեր են դրված :
«Искра»-ն արդեն քանիցս դրել էր դրանց մասին :
Բայց ընթերցողներին նամակները վիճարկում են, որ ոչ
բոլորն են հասկացել ազիտացիայի բնույթը և ցույցե-
րի դերը նոր պայմաններում, և խմբագրությունը նո-
րից ամեն ինչ հանգամանորեն պարզաբանում է : «Գրա-
կանության մի այնպիսի ձև, ինչպիսին պրոկլամա-
ցիան է, — պատասխանում է նա ընթերցողներին, —
ուշանով չի կարելի փոխարինել և այն միշտ էլ անպայ-
ման պետք կլինի» :

«Искра»-ն դատապարտում է այն մարդկանց,
որոնք փոխանակ համառուսական լրագրին եռանդուն

կերպով օղնելու, ընդհատակյա դրականության ինչ-որ
նոր, արհեստական ձևեր են հնարում .

«... Լիովին ընդունելով քաղաքական դրականու-
թյան ամեն տեսակները՝ թե՛ հին, թե՛ նոր, միայն թե
դա լինի լավ քաղաքական դրականություն, մենք մեր
կողմից խորհուրդ կտայինք աշխատել ոչ թե թուլացիկ
թերթիկների և հանրամատչելի բրոշյուրներին միջին
տիպը մոգոնելու վրա, այլ աշխատել իրոք պարբե-
րական անվանվելու արժանի (այսինքն՝ ամսական ոչ
թե մեկ անգամ, այլ ամսվադը երկու — չորս անգամ
դուրս եկող) և համա-ռուսական ռեկուլցիոն օրգանի
վրա» :

Չափազանց հետաքրքրական է «Искра»-ի պատաս-
խանը ցույցի ժամանակ ոստիկանությանը հակահար-
ված տալու հարցին : Խմբագրությունն այստեղ հաստ-
տեն դուրսկցում է միանգամայն կոնկրետ դարձնական
խորհուրդները մարքսիստական տակտիկայի ընդհա-
նուր սկզբունքային դրույթներին պարզաբանման հետ .

«Հակահարված նախապատրաստել — այդ նշանա-
կում է՝ ցուցարարներին մի որոշ մասը կազմակերպել
այնպես, որ նա կարողանա ոստիկանության հետ ընդ-
հարկելիս ամբոխի վրա աղբել, հետ պահելով նրան
ինչպես խառնիխուռը փախուստից, այնպես էլ կատա-
ղի բռնկումներից, որոնք կարող են արյունահեղու-
թյունն անխուսափելի դարձնել, և հենց դրանով էլ
տանապաղատելով լախտի, ձեռնապայտերի և այլն նշա-
նակությունը որպես ինքնապաշտպանության զենքե-
րի» :

Սակայն «Искра»-ն հենց այդտեղ էլ նախազգու-
շացնում է վաղաժամ գլխավոր դիմադրությունից .

«Մենք կարող էինք կոչել վերջինիս գլխավոր մի-

այն այն դեպքում, եթե համոզված լինեինք, որ դըստը վրում ենք անմիջականորեն «ռևոլյուցիայի նախօրյակին», որ ժողովրդի կազմակերպված նակատամարտը զորքերի հետ պիտի վերածվի ժողովրդական ապստամբության»:

Սա է «Искра»-ի գրադրության ոճն իր ընթերցողների հետ:

Յուրաքանչյուր համարի վերջում գետեղվում էին «Ռևոլյուցիոն պայքարի խրոնիկա» և «Փաստարկ»:

«Искра»-ի № 16-ի «Ռևոլյուցիոն պայքարի խրոնիկան» հաղորդում էր ռևոլյուցիոնների ձերբակալումները, ցարական կառավարության ռեպրեսիաների մասին, օրինակ՝

«Պետերբուրգում ծովային պինդորական դպրոցի մի կադետի մոտ գտան «Искра» և դպրոցից հեռացրին»:

«Ն.-Նովոգորոդում ձերբակալությունները շարունակվում են: Վերցված են. դերձակ Օրլովը, դասնոց և կամավոր զինվոր Մոխեյսևները և դժագրող Մատվեյևը: Կամավոր զինվորների մոտ խուզարկություններ են կատարվում: Նրանց արգելված է մասնավոր բնակարաններում ապրել»:

Ամեն մի համարում հինգ-վեց այսպիսի նշումներ էին գետեղվում: Երբեմն ձեռք դրված փաստաթղթերի շնորհիվ խմբագրությունը ծանուցում էր պատրաստվող ձերբակալումների մասին, հաղորդում էր պրովոկատորների ազդանունները և այլ տեղեկություններ, որոնք օգնում էին սոցիալ-դեմոկրատներին կողմնորոշվելու:

«Փաստարկը» անլեզալ լրագրում միշտ էլ մի առանձին դեր է խաղում: Նա օգնում է կապեր հաս-

տատելու, հայտնում է հանձնարարություններ, հիշեցնում է առաջադրանքի մասին, իսկ երբեմն ուղղակի խրախուսման ողջույն է հղում: «Искра»-ի «Փաստարկը» հենց այդպիսի բնույթ էր կրում: № 16-ից վերցրած մի քանի տող կարող են ցույց տալ այդ համեստ, լեզալ լրագրի համար համարյա աննշան բաժնի նշանակութունն ընդհատակյա հրատարակության համար:

«307 ն: Ձեզնից ոչ նամակ և ոչ թղթակցություն չենք ստացել. համարյա բոլոր թերթիկները (բացի թեյի թերթիկներից) չեն ստացվել. չատ խնդրում ենք ուղարկել այն, ինչ որ ունեք: Խնդրում ենք ձեր համակրանքին ավելի ռեալ արտահայտություն տալ: Նամակագրության անկանոնությունը մնաս է բերում թե՛ մեզ և թե՛ ձեզ: Արդյոք ձեր նոր ընկերը չի՞ կարող իր հայրենի քաղաքի մասին որևէ բան հաղորդել: Լ. Ս. 2-ից համառոտ հաղորդում ստացանք ձեր մասին. հաջողություն ենք ցանկանում ձեզ: Մի մոռացե՛ք մեզ»:

Այս է լենինյան «Искра»-ի շարքային համարը:

«ИСКРА»-Ի ՊԱՅՔԱՐԸ ՊԱՐՏԻԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՀԱՄԱԽՄԲՄԱՆ ՀԱՄԱՐ

«Искра»-ի բոլոր նյութերը, ընդհանուր առաջնորդողների առաջին տողերից մինչև «Փոստարկը», ենթարկված էին մի միակ նպատակի՝ պարտիայի համար բանվորական մասսաների մեջ սոցիալիստական գիտակցությունն արմատավորելու համար մղվող պայքարին: «Искра»-ում ամեն ինչ շնչում էր իսկական պարտիականությամբ, սիրով՝ դեպի ռևոլյուցիոն գործը, ատելությամբ՝ դեպի բանվորական չարժման թշնամիները:

Այդ խտրոսն մտածված և վարպետորեն անցկացվող գիծ էր: Ինչի մասին էլ որ գրեք «Искра»-ն, նա միշտ հենվում էր իրական վաստերի վրա, միշտ խորապես խմատավորում էր նրանք և թեորիապես լուսարանում:

Գտնվելով արտասահմանում՝ Լենինը և ոչ մի բուպե չէր կտրվում ռուսական իրականությունից: Նա հսկայական դրադրություն էր վարում, ժամերով

հարցումիորձ էր անում Ռուսաստանից ժամանած ընկերներին, ուշադրությամբ ուսումնասիրում էր ռուսական և օտարերկրյա պարբերական մամուլը:

Թե՛ իր անձնական նամակներում և թե՛ «Искра»-ի էջերից Լենինը գիտում էր բոլոր թղթակիցներին՝ խնդրելով տեղեկություններ ուղարկել Ռուսաստանից: Թեթի արդեն երկրորդ համարում խմբագրությունը խնդրում էր.

«1) Հաղորդել բոլոր և ամեն տեսակ թերթիկներն ու պրոկլամացիաները, հնարավորին չափ մանրամասնություններ ավելացնելով նրանց տարածման մասին, ինչպես և՛ բոլոր տեղական հրատարակություններն ու ձեռքից ձեռք անցնող ձեռագրերը, 2) անհապաղ հաղորդել հասարակական հետաքրքրություն ներկայացնող ամեն մի անցուղարձի մասին, այսուհետև երբեք չհետաձգելով մինչև մանրամասնությունների ստացումը կամ առանձին նկարագրությունների կազմումը և այլն, երբեք չբաշխելով հաղորդելու մերկ ու հում փաստը. 3) հաղորդել ոչ միայն անմիջական ղեկավարություններից, այլև ուրիշ տեղերից ստացված պատմածներով կամ տեղեկություններով հայտնի դարձածը, որպեսզի խմբագրությունը կարողանա ժամանակին միջոցներ ձեռնարկել՝ իր գործակալներն ուղարկելու և այլն. 4) դառնել մի միջոց, որով խմբագրությունը կարողանար հաղորդակցել յուրաքանչյուր թղթակցի հետ, 5) խմբագրությանը հաղորդելու համար հավաքել բոլոր տեղական հետաքրքրական հրատարակությունները և տեղական լրագրերի առանձին համարները, 6) կանխադաշմանել, որ լիակատար ճշտությամբ ցանկություն հայտնվի, որպեսզի նյութը

Հրապարակվի այս-ինչ ու այն-ինչ պայմաններով, կամ առանց որևէ փոփոխության և այլն»¹։

Լենինի կողմից «Искра»-ում բարձրացված բոլոր հարցերը բղխում էին սոցիալ-դեմոկրատական շարժման գործնական կարիքներից, իսկ շատ թեմաներ այս կամ այն չափով «թելադրվում էին» Ռուսաստանից։

«Ռուսաստանից դրո՞ւմ են,—հայտնում էր Լենինը Պլեխանովին,—որ հասարակությունը սարսափելի կերպով հրապուրվում է Բերդյայևով։ Ահա՛ թե ում է հարկավոր ջարդաբուրդ անել ո՛չ միայն հատկապես փիլիսոփայական բնագավառում»²։

Եվ այստեղ նկատելի է Լենինին հետաքրքրող թեմաների ուղղակի կապը Ռուսաստանում եղած կոնկրետ իրադրություն հետ։

Հրաչալի խմանալով ռուսական իրականությունը, Լենինն, այնուամենայնիվ, պարտադիր էր համարում ստուգել իրեն, խորհրդակցելով տեղական սոցիալ-դեմոկրատական կոմիտեների շարքային աշխատողների հետ։ Մասնաշաղկապ տարածման համար առանձնապես նախանշված շատ փաստաթղթերի նախադժերն ուղարկվում էին տեղական կոմիտեների քննարկմանը, և Լենինն դիպուկ կերպով էր վերաբերվում ստացված բոլոր դեմոկրատություններին։

Ո՛չ նման տեսակի նամակների առաջման դժվարությունները, ո՛չ էլ ժամանակը, որ պահանջվում էր կոմիտեների կողմից դրանք քննարկելու համար, չէին կանգնեցնում Լենինին։

«Շուտով կուղարկենք մայիսյան թերթիկի նախադիժը,—գրում էր Լենինի հանձնարարությունը Ն. Կ.

Կրուպսկայան Մոսկվա։—Այն իսկույն ևեթ քննարկեք... Գնացեք Նիժնի, Տուլա, Տվեր, քննարկման գրեք, պատասխան ստացեք, համաձայն են արդյոք ընդունել, և եթե այո, ապա քանի՞ օրինակ ուղարկել, թող հասցեները տան՝ ուղարկելու համար։ Նույնպես Տամբովը և Վորոնեժը։ Պատասխանն անհրաժեշտ է ստանալ մինչև մարտի 1-ը։ Այդ անսլաքման արեք։ Այսպես ուրեմն, ձեր հոգացողությունն են ենթակա Նիժնին, Տուլան, Տվերը, Տամբովը, Վորոնեժը։ Եթե կարող եք այլ տեղեր էլ թափանցել,—թափանցեցե՛ք։ Անհապաղ պատասխանե՛ք՝ ձեռնամուխ լինո՞ւմ էք այդ անելուն...»¹։

Իսկրայական նյութերի նախնական քննարկումը, ձգտումը՝ ունենդրելու այն ամենին, ինչ կատարվում է Ռուսաստանում, և սովորելու պարտիական ստորին աշխատողներից—այս ամենը վառ կերպով պատկերում է աշխատանքի լենինյան ոճը։

Թե մինչ որ աստիճան էր Լենինը, նույնիսկ լինելով էմիգրացիայում, ամուր կապված ռուսական իրականության հետ, վկայում է «Искра»-ի գործակալներից մեկի մի նամակը, որը գրված է 1902 թ. փետրվարին։

Նամակի հեղինակը խոսակցել էր մի խումբ բանվորների հետ։ Բանվորները զանդատվել էին «Искра»-ի անկանոն ստացման համար։

«Իսկ «Рабочая мысль»-ը, թեպետև կա, բայց այն արդեն գրեթե ոչ ոքի չի հետաքրքրում։ Այդ խոսակցության միջոցին ինձ վիճակվեց լսել, եթե ոչ տառացի, ապա գեթ «ի՞նչ անել»—գրքի ոգով առված

¹ «Искра» № 2, փետրվար 1901 թ.։

² «Ленинский сборник», III, стр. 226.

¹ «Красный архив», т. I, стр. 150, 1934 г.

ցիտատներ: Նայում և ուրախանում եմ Լենինով: Ահա՛,—մտածում եմ, թե ինչ է նա արել: Ինձ համար սրբող էր, որ ինձ հետ զբուցող ընկերները նրան կարգացել են, և իմ ունեցումներն ղեկը ինչի՞ համար էր, հետո մատնանշում եմ միջանի սկզբունքային տեղեր, կոնկրետ կերպով շարադրում եմ համառոտական աշխատանքի սլանը, այնպես, ինչպես հանձնարարում է Լենինը, ընդամենը հիշատակեցի. «Դուք ահա կարգացել եք «Ի՞նչ անելը»:—«Ի՞նչ: Մենք այդպիսի բոլոր չենք կարգացել, մի դույն, ընկերներից մե՞կը»:—Ո՛չ ոք,—միաձայն պատասխանեցին,—մենք չենք հանդիպել...»: Ես ապշած էի: Իմ առաջ նստած էին... մարդիկ, որոնք ծարավի էին ունեցիտների պրոֆեսիային: Ես երջանիկ էի Լենինով, որն աշխարհիս ծայրին, բարիկազված ալիքներով, թռչառնով, սահմանադեբով, մաքսատներով և ինքնակալության այլ ատրիբուտներով՝ տեսնում է, թե մեղանում ովքեր են աշխատում արհեստանոցում, ինչ է նրանց պեսք և ինչ է լինելու նրանց բանը»¹:

«Искра»-ի անըսկտելի կապը պրոլետարիատի շարժման հետ — լենինյան լրագրի կառուցողական գիծն է:

«Искра»-ն իր ընթերցողների հետ խոսում էր մի այնպիսի լեզվով, որը սուր կերպով տարբերվում էր «էկոնոմիստների» կողմից հրապարակվող լրագրերի ու թերթիկների լեզվից: Կեղծ ըմբռնող ժողովրդակալություն ձեռք բերելու հետևից ընկնելով՝ «էկոնոմիստները», հենց այնպես, ինչպես որ նարոդնիկները, դիմում էին «ժողովրդականացման» էժանազին հնարք-

ների, դիմամբ դորժածում էին «ժողովրդական խոսքեր», ինչպես, օրինակ, «ընդոնց» («ИХНИЙ»), «ըմեն» («КАЖИННЫЙ») և այլն: Այդ լրագրերն ընթերցողին լուրջ, գործնական բաներ չէին ասում, այլ խեղատակում էին, դռնակացնելով քննարկվող հարցերը: Դրանից վրդովված՝ Լենինն ասում էր.

«ժողովրդականացումը... չափ է հեռու դռնակացումից, ժողովրդականություն խաղալուց»:

Իսկական ժողովրդականացողը պետք է ամենից առաջ հարգի իր ընթերցողին: Եվ «Искра»-ն տարվում էր հենց այդ ոգով:

«ժողովրդական դրողը,—գրում էր Լենինը,—չի ենթադրում չխորհող, չցանկացող կամ խորհել չկարողացող ընթերցող,—ընդհակառակը, նա ենթադրում է չդարգացած ընթերցողի՝ գլխով աշխատելու լուրջ մտադրությունը և օգնում է նրան այն դարձնելու լուրջ ու դժվարին աշխատանք, առաջ է տանում նրան, օգնելով նրան կատարելու առաջին քայլերը և սովորեցնելով այնուհետև ինքնուրույն կերպով առաջ դնալ: Վուզար դրողը ենթադրում է չխորհող և խորհելու անընդունակ ընթերցող, նա նրան առաջ չի մղում դեպի լուրջ գիտության առաջին հիմունքները, այլ աշխուժակորեն պարզեցրած, շուրջ կատակների ու սրախոսությունների ձևով հրամցնում է նրան որոշ ուսմունքի «պատրաստի» բոլոր եղրակացությունները, այնպես որ ընթերցողին հարկ չկա ծամելու, այլ միայն կուլ տալ է պետք այդ շեղան»¹:

Կատակ-սրախոսությունների հենց այդպիսի էժան-

¹ Ленин, О журнале «Свобода». (Հրատարակված է «Правда»-յում 1936 թ. հունվարի 21-ին):

¹ Рубинштейн и Стопалов, «Искра», стр. 30—31, 1926 г.

նազին տոն էին մշակում «էկոնոմիստները» օրդաննե-
րը: Նրանք զրպարտաբար հայտարարում էին, որ
«Искра»-ն մատչելի է իբր թե միայն լինոնլիզենանե-
րին, որ նա ժողովրդական չէ, որ նրան չեն կարող և
չպետք է կարդան բանվորները: Հենց «ժողովրդական
լրագիր» ստեղծելու լողունդի տակ էլ Լենինին թշնա-
մական ամեն հնարավոր խմբերը մործում էին լրա-
գրեր հրատարակել ի հակադէմ «Искра»-ին:

«Искра»-ին չվարանցրին այդ հարձակումները:
Նա առաջ էր տարվում իսկական լենինյան ժողովրդա-
կանության ոգով:

Վերջնիկը «Искра»-ի ամենատեսերիմ թշնամի-
ները՝ «էկոնոմիստները» հարկադրված էին այնուա-
մենայնիվ «նշել «Искра»-ի՝ անշեղալ հրատարակու-
թյունների մեջ այնքան հազվագյուտ օրինակելի դրա-
կան լեզուն, նրա լույս տեսնելու կանոնավորութունը
և թարմ ու հետաքրքրական նյութի առատությունը»¹:

Հարկավ, «Искра»-ն նկատի չէր առնված լայն մաս-
սաների համար: Ուժերի ժողովման ժամանակաշրջա-
նում, պարտիայի կազմակերպման ժամանակաշրջանում
խոսք էլ չէր կարող լինել այդպիսի լրագրի մասին:
«Искра»-ի ընթերցողներն առաջավոր բանվորներն
էին, որոնք բանվոր դասակարգի մասսայական պայ-
քարի ընթացքում աճել-դարձել էին առաջնորդներ ու
ղեկավարներ, որոնք արդեն հասունացել էին մարք-
սիզմի մեծ ուսմունքով զինվելու համար:

Այդ բանվոր ընթերցողները միանգամից դնահա-
տեցին «Искра»-ն: Ո՛չ միայն նրա դժի մեջ, այլև
նյութը տալու տոնի մեջ նրանք տեսան այն նորը, որը

տարբերում էր «Искра»-ին բոլոր մյուս հրատարակու-
թյուններից:

««Искра»-ն հենց նրա համար էլ ինձ դուր եկավ,
որ նա բանվորին քաղաքացի է համարում, իսկ այդ,
ա՛հ, ինչպե՛ս կարեոր է»¹—գրում էր «Искра»-ում
նրա մի ընթերցող բանվոր:

Այս խոսքերում լենինյան ժողովրդականության
էություն դիպուկ բնութագրումն է, նրանք շատ լավ
են բացատրում «Искра»-ի արագ տարածման պատ-
ճառները մեկը:

«Искра»-ն լայն կամպանիա ծավալեց պարտիայի
կառուցման լենինյան պլանի հիմունքով ուղղված
մարքսիստներին համախմբելու համար:

Լրագիրը չուտով դեկավարության կենտրոն դար-
ձավ տեղական կազմակերպությունների և տասնյակ
պրոֆեսիոնալ ուղղվածություններին՝ «Искра»-ի գործա-
կալները համար, որոնք նրա առաջադրանքներով վա-
րում էին պարտիական աշխատանքը:

Ուսաստանում կատարվող ուղղված սոցիալ-
դեմոկրատական աշխատանքի բոլոր թելերը, ուսա-
կան պրակտիկ-ուղղվածությունների ողջ դեկավարու-
թյունը կենտրոնացած էր Լենինի ձեռքում: Միքանի
օրով նրա մոտ՝ Մյունխենի դնալով, Պլեխանովը տա-
ռացիորեն ցնցված էր այն եռուն գործունեությամբ,
որ ծավալել էր Վլադիմիր Իլյին:

Այդ ճանապարհորդության տպավորության տակ
Արևելքում դրած նամակում Պլեխանովը մորմոքվում
է այն առթիվ, որ Լենինը շատ է ծանրաբեռնված,
ախոսում է, որ «զուտ վարչական աշխատանքը խան-

¹ «Искра» № 12, դեկտեմբեր, 1901 թ.:

¹ «Искра» № 14, հունվար, 1902 թ.:

դարձած է նրան»։ Բայց դրա հետ մեկտեղ Պլեխանովը հետաքրքրություն երևան չի բերում դեպի «Искра»-ի աշխատանքի այդ կարևորագույն կողմը։

«Искра»-ի անխոնջ քարտուղարը Ն. Կ. Կրուսոպկինյան էր։ Նրա վրա էր ընկած մասնատներին հետ կապեր հաստատելու միջոցների աշխատանքը։ Նրա ձեռքով էր անցնում ամբողջ դրագրությունը։

«Искра»-ի խմբագրական փոստը լուկ մասնակիտընեն էր կապված լրագրային նյութի հետ։ Հիմնականում դա դրագրություն էր պարտիական աշխատանքի գործնական հարցերի վերաբերյալ։ Խմբագրության կողմից ուղարկվող նամակներում կարելի է գտնել և՛ «Искра»-ի գործակալի՝ այս կամ այն կետերը շրջելու առաջարկ, և՛ հին ծածկագիրը փոխելու վերաբերյալ հաղորդում, և՛ իր մասին երկար ժամանակ տեղեկություն չտված աշխատողի գտնվելու տեղի մասին հարցում, և՛ խնդրանք՝ «լավ պատվորտ ճարել մի 44 տարեկան, իսրայալ տիկնոջ համար», և՛ այս կամ այն կոմիտեի վարձագծի վերաբերյալ ցուցում և այլն և այլն ։

Բոլոր նամակները գնում էին ծածկագրված ձևով։ Այդ շատ ժամանակ էր խլում, պահանջում էր հսկայական ջանադրություն և ակուրատություն։ Ահա մի փոքր հատված այն նամակից, որ խմբագրության կողմից ուղարկվել էր Ռուսաստան.

«Դիմոչկային շտապեցրեք գնալ Կարոլինայի մոտ, նրա ներկայությունն այնտեղ այժմ անհրաժեշտ է։ Ռոբերտը հարավում կապեր ունի և նա ինչ-որ բան է սարքում. անհրաժեշտ է Օսիպին՝ Օդեսա ուղարկել մորթուց կոֆտոչկա։ Մորթին այնտեղ մոզա չէ, վաղուց է, ինչ այն ոչ ոք չի տեսել, այնտեղ թաղավո-

րում են ամեն տեսակի «բորբիտները»։ Նրանց բոլորին հարկավոր է բուռը հավաքել»¹։

Երբ պարզվում է, որ Դիմոչկան—դա Սմիդովիչն է, որ Կարոլինան—դա Խարկովի կոմիտեն է, որ Ռոբերտը—դա «Рабочее дело»-ն է, իսկ մեկին ու մորթուց կոֆտոչկան—դա «Искра»-ն է,—մեր առաջ «Искра»-ի խմբագրությունից ուղարկված նամակի սեղմ տողերի մեջ վառ կերպով վերապտեղվում է համառ և անհաշտ պայքարի, քրտնաջան կադմակերպական աշխատանքի մի կտորը, որ կատարում էր լենինյան լրագիրը։

Այդ աշխատանքի պայմաններն անհավատարիտեն ծանր էին։

Առաջին իսկ օրերից «Искра»-ն վերցված էր ոստիկանական հսկողության տակ։ Արդեն «Искра»-ի առաջին համարը լույս տեսնելուց մի քանի օր հետո պահանդարանի գործակալական հաղորդագրությունները հայտնում էին, որ Պետերբուրգում շրջում է «Искра»-ի պրոսպեկտը (ծրագիրը), որն ապացուցում է քաղաքական պայքարի դիմելու անհրաժեշտությունը։ «Սպասում են Վլադիմիր Ուլյանովի վերադարձին, որը այդ տեսական ֆորմուլը պիտի միա ու արյուն դարձնի։ Այժմ թե լավ կլինեք, որ ճանկեինք նրան...»²։

Պահանջարանը ճիշտ էր գնահատում այն դերը, որ խաղում էր Լենինն «Искра»-ում։ Նա հրաշալի հասկանում էր, որ պրակտիկ աշխատանքի ամբողջ ծանրությունը, քաղաքական պայքարի ողջ ղեկավարությունն ընկած էին Վլադիմիր Ուլյանովի վրա։

¹ «Красный архив», т. I, стр. 151, 1934 г.

² Նույն տեղում, էջ 140։

«Ոււլյանսկից ավելի խոշոր դեմք ունեցողայի մեջ այժմ ոչ ոք չկա»,—գրում էր ցարական պահանքող Ջուբատովը, նախաձայնողապետելով Լենինի սպանությունը:

Այն ժամանակի ոստիկանական բաղմամբով փաստաթղթերը ցույց են տալիս, թե ինչպիսի նշանակություն էր տալիս պահանքողարանը Լենինի աշխատանքին, թե ինչպիսի միջոցներ էր ձեռնարկում խավանելու համար նրա ունեցողի դործունեությունը: Ոստիկանությունը դեպարտամենտը հատուկ դրազրություն էր վարում արդարադատություն չվեցարական դեպարտամենտի հետ Լենինի «հանցագործ գործունեություն» մասին:

Նույնիսկ գտնվելով արտասահմանում, «Искра»-ն պետք է տպագրվեր կոնսպիրատիվ կերպով, իսկ խմբագրությունը ստիպված էր իր ամբողջ աշխատանքում հաշվի նստել ոստիկանության անընդհատ մեքենայությունների հետ:

Կոնսպիրացիայի նպատակով լրագիրը մի որոշ ժամանակ տպագրվում էր Լալայիգում, թեպետև խմբագրությունը գտնվում էր Մյունխենում:

«Սեփական տպարան չկար,—հիշում է «Искра»-ի նախկին սրբազրիչը,—և չարում էին դերմանացի գրաչարները, որոնք թեպետև ջոկում էին խոսքերը, բայց ուսներեն ոչինչ չէին հատկանում: Հարկ էր լինում բոլոր հոգվածները, ամբողջ նյութը տպագրել դրամեքենայի վրա, կաղմելով սյունակներն այն ձևով, ինչպես պետք էր տպագրել, դրաչարները նույնիսկ տողադարձներն էլ չէին կարողանում անել: Ուստի և խիստ շատ էր նախնական սև աշխատանքը»¹:

Պահպանվել են Լենինի այն թղթերը, որոնք աչքի են ընկնում թերթի էջում և սյունակում տեղ գտած նյութերի քանակին վերաբերող հաշվարկումներով: Շատ ժամանակ էր դնում տառերի այդ հաշվարկումներին վրա, շատ ուժ էր ծախսվում թույլ տրված սխալների ուղղման վրա: Լենինը հաճախ ստիպված էր լինում Մյունխենից Լալայիգ մեկնել՝ սխալներն անձամբ ուղղելու համար: «Մենք բավականաչափ սխալ ենք հաշվարկել հաղարամոր տառերը և այժմ շատերը դուրս ենք գցում»¹—գանդատվում էր Լենինը խմբագրություն անդամներին:

Չնայած այն բանին, որ ուսանական լրագիրը չարվում էր դերմանացի՝ ուսներեն լեզուն չիմացող դրաչարների ձեռքով, «Искра»-ն միշտ անթերի կերպով պահպանում էր: Լենինը մեծ նշանակություն էր տալիս լրագրի բացթողման տեխնիկական կողմին և առանձնապես սրբազրությունը: Նա ինքն էր կատարում ամեն մի համարի սրբազրությունը և դեպքը բաց չէր թողնում, որպեսզի ինքն ստուգի նրան օգնող սրբազրիչի աշխատանքը:

Լույս տեսնելով սկզբում ամիսը մեկ անգամ, իսկ հետո երկու շաբաթը մեկ անգամ, «Искра»-ն տպագրվում էր նուրբ, բայց ամուր թղթի վրա, ավելի մանր չրիֆտով, քան սովորական պետիտը, 6—8 հազ. օրինակ տիրաժով:

Ամենևին էլ ամբողջ տիրաժը չէր, որ հաջորդվում էր բարեհաջող կերպով Ռուսաստանի ղեկը սահմանի վրայով: Իսկրայական հրատարակությունների առաջին տարանպոստը սահմանի վրա ամբողջությամբ ըն-

¹ «Пролетарская революция» № 3 (26), стр. 134, 1924 г.

¹ «Ленинский сборник», III, стр. 122.

կամ ցարական ոստիկանության ձեռքը: «Искра»-ի առաջին համարի 6.472 օրինակներ ընթերցողին չհասան:

Լրագիրը տարածելու համար պահանջվում էր լավ աշխատող համառուսական պարտիական տրանսպորտ, հարկավոր էին փորձված մարդիկ, որոնք կարողանային գլուխ բերել այդ դժվարին գործը: Եվ Լենինը ստիպված եղավ ամեն ինչ կազմակերպել ի նորո:

Առաջին շրջանում «Искра»-ն Ռուսաստան էր փոխադրվում այսպես կոչված «ճամպրուկային ճանապարհով»: Լրագրերը տեղավորվում էին կրկնակի հատակ ունեցող ճամպրուկների մեջ և հատուկ մարդու հետ, իսկ ամենից ավելի հաճախ պատահ գերալիստիկ ուղարկվում էին Ռուսաստան: Այդ եղանակը ծայրաստիճան անհարմար էր. չէր կարելի միանշանակ շատ գրականություն փոխադրել, հաճախ նա տարվում էր ոչ թե այնտեղ, որտեղ նրա ամենից ավելի կարիքը կար, այլ այնտեղ, որտեղ մեկնում էր ճամպրուկի «տերը»: Միջին հաշվով այն հինգ ճամպրուկը, որ հաջողվում էր ամեն ամիս Ռուսաստան գցել, մի կաթիլ ջուր էր ծովում:

Ավելի հարմար չէին նաև «Искра»-ից կարված «գրահները», որ հաղցնում էին Ռուսաստան զնացողներին:

Այդ պատճառով էլ «Искра»-ի խմբագրությունն առաջին իսկ օրերից հաստատորեն լծվեց կանոնավոր, ամուր սարքի դցած տրանսպորտի կազմակերպմանը: Չնայած մեծ դժվարություններին, չնայած ձախողումներին ու անհաջողություններին՝ Լենինը կարողացավ կարգավորել լրագրի տարածումը: «Ի՞նչ

ճանապարհներ առնա, որ չեն փորձված, — ապում է «Искра»-ի խմբագրության՝ ՌՄԴԲՊ II համադրումարին տված հաշվետվության մեջ: — Ռումինիան, Պարսկաստանը, Ալեքսանդրիան, Արևանդեղսիլը, Ֆինլանդիան, Ծովային ուղիները»:

Օգտագործելով մաքսանեղներին, նավատիրներին, հարյուրավոր վերստերով իրենց անլեզու բեռը տեղափոխելով ձիերով, նավակներով, «Искра»-ի գործակալները մերթ այստեղ, մերթ այնտեղ սահմանն էին անցկացնում խկրայական հրատարակչությունների մեծածավալ հակերը:

Մեծ հետաքրքրություն էր ցուցաբերում Լենինը «Искра»-ի տպագրության կազմակերպմանը՝ անմիջականորեն Ռուսաստանում: Այդ հնարավորություն էր տալիս ավելացնելու տիրաժը և պաշտպանում էր լրագրի տարածումը սահմանի վրա տեղի ունեցող ամեն տեսակի պատահականություններից: Լենինն անձամբ ուսումնասիրում էր նորագույն տպագրական տեխնիկան, խորհրդակցում էր պրակտիկների հետ և եկավ այն եղրակացություն, որ լավագույն ձևը — դա «Искра»-ի մատրիցաների Ռուսաստան ուղարկելն է:

Տեղերում տպարաններ ստեղծելն այն քանակի չրիֆտով, որը բավականանար «Искра»-ի վերահրատարակչությանը, բարդ և ռիսկի գործ էր: Բացի դրանից, տեղայնական տեղեկանքները, որ հատկանշական էին այն կոմիտեների համար, որտեղ գործում էին «էկոնոմիստները», կարող էին հասցնել այն բանին, որ տպարանները կօգտագործվեին «Искра»-ին հակադրված տեղական օրգանների տպագրման համար:

Իսկ «Искра»-ի մատրիցաները՝ Ռուսաստան տե-

դատիոնները համեմատաբար ավելի պակաս զգալարին գործ էր: Երբեմն նրանք ուղարկվում էին փոստով՝ օտարերկրյա գրքերի և ակբաների փաթեթի անվան տակ:

Հրաշալի իսկրաշական տպարան հիմնեց Բազմում ընկեր Ստալինի հանձնարարությունները նրա մեծամոր բարեկամ Լադո Կեցխովելին: Որպեսզի հենց ինքը լավ ուսումնասիրի տպագրական տեխնիկան, նա ծառայություն մտավ Թիֆլիսի տպարաններից մեկում և համառ աշխատանքով արագորեն հասավ անհրաժեշտ արդյունքների: Հենց այդ տպարանում նրան հաջողվեց տպել միջանի պրոկլամացիաներ և բրոշյուրներ: 1900 թվին Կեցխովելին Բադու մեկնեց ընկեր Ստալինի հանձնարարությունները կատարելու համար:

Աշխատելով Բազմում, Լադո Կեցխովելին կապ հաստատեց Լենինի հետ և նրա առաջադրանքով սկսեց բազմացնել «Искра»-ն և այլ իսկրաշական հրատարակություններ: Թիֆլիսի նահանգական ժամդարմարակություններ: Թիֆլիսի նահանգական ժամդարմարակունքը, որ Կեցխովելուն բռնելու համար Բադու էր ուղարկել հատուկ գործակալներ, չնայած բոլոր ջանքերին, հարկադրված էր խոստովանել 1902 թ. մարտի 30-ին, որ «բոլոր պրոկլամացիաները, վրացական ընդհատակյա ժուռնալ «Բրժժա»-ն («Պաշար».—խմբ.), որը հայտնվել է անցած տարվա վերջին, և նույնիսկ հենց ինքը «Искра» լրագիրը տպագրվում են Բադու քաղաքում...

Ինչ վերաբերում է այն հարցին, թե Բազմում որտեղ է հենց տեղափոխված տպարանը, ապա այդ առթիվ ոչ մի հաստատ բան դեռևս չի կարելի ասել¹:

Բազմի տպարանը պարտիայի լաբորատորիա տալ-

ան էր՝ իսկական տպագրական մեքենայով, չրիֆտի և թղթի նշանակելի պաշարով:

Բազմի տպարանը վիթխարի օգնություն ցույց տվեց լենինյան իդեաների տարածմանը Ռուսաստանում: Հարայալին շատ քաղաքներում տարածվում էր Բազմում վերատպվող «Искра»-ն:

Քիչնեով նույնպես ստեղծված էր տպարան, որը խմբագրություն հանձնարարությամբ տպագրում էր «Искра»-ի առանձին օրինակները, բրոշյուրներ և պրոկլամացիաներ:

«Искра»-ի տարածման ժամանակ առաջին պահերին խմբագրությունը ստիպված եղավ բաղաժնի տեղական կոմիտեների մեծամասնություն կողմից դեպի նրան ցուցաբերվող թշնամական վերաբերմունքի հետ: Այդ կոմիտեներում բուն դրած «էկոնոմիստները» ամեն կերպ արգելակում էին «Искра»-ի տարածմանը և խանդարում էին նրա գործակալների աշխատանքին: Նրանք իրենց անդամներին արգելում էին նամակագրություն ունենալ «Искра»-ի խմբագրության հետ, զրպարտական լուրեր էին բաց թողնում, որ իբր թե խմբագրությունը ցանկանում է հրամանատարություն անել պարտիական կազմակերպություններին: Նրանք չարաչափում էին այն բանի վրա, որ լրագրի միջոցով պարտիա ստեղծելու լենինյան պլանը հակասում էր սոցիալ-դեմոկրատիայի սովորական պրակտիկային:

Պետերբուրգում «Искра»-ն երկար ժամանակ տարածվում էր անմիջականորեն խմբագրության միջանի գործակալների միջոցով և ընկնում էր բանվորների ձեռքը, չրջանցելով «Искра»-ին թշնամաբար վերաբերվող կոմիտեներ: Նույնը վիճակվեց և Լենինի «Խոչ

¹ «Ладо Кецховели», ժողովածու, էջ 71, 1938 թ.:

անել» աշխատութեանը, որը փորձում էին կասեցնել Պետերբուրգի կոմիտեի «էկոնոմիստները»:

Է՛լ ավելի հեռուն գնաց Օդեսայի կոմիտեն: Նա պահանջեց, որ «Искра»-ի ներկայացուցիչը չհամարձակվի ինքնուրույն կապեր հաստատել բանվորներին հետ: Ինքը կոմիտեն սահմանափակվեց լրագրի միայն 30 օրինակ տարածելով:

«Искра»-ի խմբագրութեան՝ պարտիայի II համագումարին տված հաշվետվութեան մեջ ուղղակի ասվում է, որ սկզբնական շրջանում կոմիտեները շատ դեպքերում «Искра»-ի ձեռնարկութեան վրա նայում էին որպես իրենց բոլորովին խորթ գործի վրա:

«էկոնոմիստները» մշակում էին տնայնագործութեան տրագիդիաներ և անտեսում էին համապարտիական աշխատանքը: Համապարտիական օրգանի և համապարտիական տրանսպորտի կարգավորման օգնելու փոխարեն նրանք դերադասում էին ստեղծել իրենց տեղական լրագրերն, իրենց տրանսպորտը և այլն:

«Искра»-ի հակառակորդները, ինչպես արդեն նշված է, փորձում էին ստեղծել համառուսական քաղաքական օրգանին հակադրված տեղական լրագրեր: Այդ պատճառաբանվում էր դրեթե միշտ միանման՝ օրգաններն իբր թե լույս է տեսնելու որպես մատչելի հրատարակութուն: Լենինը խիստ կերպով հանդես էր դալիս ընդդեմ այդպիսի տեղական օրգանների:

Պետերբուրգում նույնիսկ «Искра»-ին աջակցող մի խումբ սոցիալ-դեմոկրատների մոտ միտք ծաղեց հրատարակել մի լրագիր, որը նրանք պատկերացնում էին որպես «Искра»-ի մատչելի հրատարակութուն: «Искра»-ի խմբագրությունն այդ առթիվ Պետերբուրգ ուղարկեց մի խիստ նամակ:

«Այդ մի չտեսնված բան է: Մի ամբողջ տարվա կատաղի ջանքերից հետո նոր-նոր միայն հաջողվում է այդ վիթխարի և ամենակենսաանհրաժեշտ խնդրի համար Ռուսաստանում ղեկավարներին ու կադմակերպիչներին շտարի խմբավորում սկսել... և հանկարծ կրկին քարուքանդ անել գործը և վերադառնալ վաղեմի տնայնագործութեանը...»

«Հանուն այն բանի, որ փոխանակ պայքարելու այն նեղմտութեան դեմ, որն ստիպում է պիտեբրցուն մոռանալ Մոսկվայի մասին, մոսկվացուն Պիտերի մասին, կիևցուն ամենի մասին, բացի կիևից, փոխանակ մարդկանց սովորեցնելու (նրանց) տարիներով է հարկավոր սովորեցնել դրան, եթե մենք ուզում ենք հիմնել այդ կոչմանն արժանի քաղաքական պարտիա) համառուսական գործը վարելը, — փոխանակ դրան կրկին խրախուսել տնայնագործական աշխատանքը, տեղական նեղմտությունը և դարգացնել փոխանակ համառուսականի — ինչ-որ պոչխոնյան սոց. — դեմոկրատիա...»

Մի թե մեկ պահասում են ֆարրիկաներից և գործարաններից ստացվող նամակները, այլ ոչ թե քաղաքական մերկացումները, քաղաքական խմբագրությունները, քաղաքական ընդհանրացումները»¹:

Պահասում էր, հարկավ, ուսուցիչն պայքարի փաստերը ճիշտ կերպով ընդհանրացնելու կարողությունը հենց, հստակ լոգունքներ տալու կարողությունը, իսկ այդ մասնատված տեղական օրգանների ու-

¹ «Красная летопись» № 4(15), стр. 221, 1925 г.

Ժից վեր էր: Այստեղից էլ բղխում է այն խառուժյու-
նը, որով լենինյան «Искра»-ն հանդես էր գալիս ընդ-
դեմ տեղական օրգաններ ստեղծելու ոչնչով չարդա-
բացվող մտադրություններին:

Գնահատելով սոցիալ-դեմոկրատական խմբերի ու
խմբակների մեծամասնության վիճակը՝ Լենինը, բնա-
կանաբար, նրանց լրացրելու տեսնում էր ոչ թե
պարտիայի ստեղծման ու համախմբման գեղքը, այլ
ընդհակառակը, մի արդելակ, որ խանգարում էր
պարտիայի համար այնքան կործանարար տնայնագոր-
ծակալության հաղթահարմանը:

✓ Լենինի կողմից բողոքովին այլ վերաբերմունքի
էին հանդիպում այն լրագրերը, որոնք հետևողականո-
րեն պաշտպանում էին «Искра»-ի հայացքները,
պայքարում էին համառոտական ուղուցիտն դուր-
ծի համար: Այդպիսին էր «Բրձոլա» լրագիրը, որի
առաջին համարը լույս տեսավ 1901 թ. սեպտեմբերին:

Ընկեր Ստալինը և նրա զինակիցներն այդ լրա-
գիրը պայքարի հյուր գեներ դարձրին սոցիալ-դեմոկրա-
տիայի մասնատվածության դեմ, այն օգտավորձեցին
Անդրկովկասում պրոֆեսիոնալ ուղուցիտներին
ամուր կազմակերպութուն ստեղծելու համար: «Բըր-
ձոլայի» էջերում նրանք առաջ էին քաշում ուղուցիտն
պայքարի նույն այն խնդիրները, ինչը և լենինյան
«Искра»-ն:

✓ «Բրձոլան» վճռական պայքար էր մղում օպոր-
տունիստների դեմ, պրոպագանդա էր անում գիտա-
կան մարքսիզմի իդեաները, պահպանելով այդ իդեա-
նների անաղարտությունը Բերնշտայնի տիպի ունիվերսա-
լիստներից և նրա ուսանական ու վրացական բարեկամ-

ներից: Լրագիրն իր խնդիրը տեսնում էր քաղաքական
բանվորական պարտիա ստեղծելու համար մղած պայ-
քարում: «Բրձոլայի» ծրագիրը—դա «Искра»-ի ծրա-
գիրն է: «Բրձոլայի» խմբագրությունը լրագիրը վա-
րելու լենինյան մեթոդները փոխադրում էր Կովկասի
պայմանների մեջ:

«Վրացական թերթը,—գրում էր «Բրձոլան»,—
պետք է միաժամանակ համապարտիական և ռադոնա-
կան ու տեղական օրգանների դեր խաղա: Որով-
հետև վրացական բանվոր ընթերցողների մեծամաս-
նությունը չի կարող ազատ օգտվել ռուսական լրա-
գրից, վրացական լրագրի գեղավարներն իրենց իրա-
վունք չեն համարում չլուսաբանված թողնել այն բո-
լոր հարցերը, որոնք քննարկում է և պետք է քննար-
կի համապարտիական ուսանական լրագիրը: Այսպիսով,
վրացական թերթը պարտավոր է ընթերցողին ծանո-
թացնել բոլոր սկզբունքային-թեորիական և տակտիկա-
կան հարցերին: Դրա հետ մեկտեղ նա պարտավոր է
գլխավորել տեղական շարժումը և ինչպես հարկն է լու-
սաբանել ամեն մի իրադարձություն, չարագրանված
չթողնելով և ոչ մի փաստ և պատասխանելով այն բո-
լոր հարցերին, որոնք հուզում են տեղական բանվոր-
ներին: Վրացական լրագիրը պետք է վապի և միավո-
րի վրացական և ուսանական պայքարող բանվորներին:
Լրագիրը պետք է ընթերցողներին հաղորդի նրանց
անհրաժեշտ բոլոր երևույթների մասին՝ տեղական,
ուսանական և արտասահմանյան կյանքից»¹:

✓ «Искра»-ն ջերմորեն ողջունեց այդ մարտական
օրգանը: «Искра»-ի № 13-ում՝ 1901 թ. դեկտեմբերի

¹ «Лето Кецховели», Ժողովածու, էջ 19—20, 1938 թ.:

20-ին, «Ռուսական սվինի հարյուր տարին Վրաստանում» հոդվածում խմբագրությունը մատնանշեց, որ

«... տեղական բանվորական կազմակերպությունը հարյուրամյակը նշանակուից լույս ընծայելով առաջին ուսուցիչին վրացական պարբերական հրատարակությունը «Պայքար» անունով: Այդ օրվանը ենթադրվում է լույս ընծայել ըստ նյութի կուտակման՝ բուրժուազիայի և ժողովրդավարության դեմ տեղական բանվորական կազմակերպության մղած պայքարից վերցրած փաստերի ձևով: Առաջին համարն իր մեջ պարունակում էր սկզբունքային բնույթի մեթոդներ, պրոկլամացիաներ և Կովկասում (առանձնապես Թիֆլիսում) տեղի ունեցած դժբաղդները խրոնոլոգիան»:

✓ «Բրձոլայի» առաջին համարի մասին հիշատակվեց «Искра»-ի № 25-ում ևս 1902 թ. սեպտեմբերի 28-ին (15-ին), «Թիֆլիս» խորագրով դիտողության մեջ:

«Նրան եկավ—վրացերեն լեզվով—մի լրագիր («Պայքար») և մեքանի թարգմանված բրոշյուրներ: Հրաշալի գրված պրոկլամացիաները լույս տեսան ուսաներեն, վրացերեն և հայերեն լեզուներով և լցրին Թիֆլիսի բոլոր թաղամասերը»:

1901 թ. սկզբին առանձին հրատարակության ձևով լույս տեսավ «Բրձոլայի թերթիկը»: Նրա մեջ տպագրվեցին Կովկասի տարբեր քաղաքներում տեղի ունեցած բանվորական շարժման մասին թղթակցությունները: «Բրձոլայի թերթիկը» № 2-ում տպագրված են տասն աղբյուրի թղթակցություններ:

Կովկասյան իսկրայականների ուղարկված աշխատանքն ամենաաշխույժ արձագանք գտավ «Искра»-ի էջերում:

Լենինյան «Искра»-ն № 40-ում՝ 1903 թ. մայիսի

28-ին (15-ին) նշում է նաև կովկասյան իսկրայականների մայիսյան կյան թերթիկը: «Պարտիական կյանքից» բաժնում տպագրված է:

«Կովկասում մայիսի 1-ից առաջ մեծ քանակությամբ տարածված էր «Կովկասյան Սոցիալ-Դեմոկրատական Բանվորական Միություն» պրոկլամացիան, որը կազմակերպված է պարտիայի երեք կոմիտեների (Բազու—Բաթում—Թիֆլիս) միաձուլումից: Պրոկլամացիան դիմում է, իմիջի այլոց, կովկասյան դուռնացիներին, հրավիրելով նրանց «դուրս գալ խղճուկ դուռնացիներից և մայիսի 1-ին քաղաք դալ: Պրոկլամացիան բացատրում է դուռնացիներին, որ նրանց փրկությունը պրոլետարական շարժմանը միանալու մեջն է»:

Ստալինյան «Բրձոլա» լրագիրը, այնպես, ինչպես և լենինյան «Искра»-ն, նոր տիպի լրագրեր էին, բոլշևիկյան պարտիականության մարտնչող լրագրեր:

«Искра»-ի կողմից հասցված դիպուկ հարվածները խախտեցին «էկոնոմիստներին» աղդեցությունը բանվորների մեջ: «Искра»-ն հետաքրքրութուն առաջացրեց դեպի թեորիան, և տասնյակ բանվորներ սերտում էին նրա հոդվածները, գինվելով իսկական մարքսիստական հայացքներով: Թշնամաբար տրամադրված կոմիտեների գլխի վրայով, նրանց դեմ մղած պայքարում «Искра»-ն իր կողմը գրավեց սոցիալ-դեմոկրատների համակրանքը:

Անջատվածությունն ու տեղայնությունը հաղթահարելու, պարտիայի կազմակերպական միավորումը նախապատրաստելու համար՝ Լենինը դեռևս մինչև «Искра»-ի հրատարակության սկիզբը համախմբեց մի խումբ հրաշալի ուսուցիչներին, որոնց ուսերին

չուտով ընկավ տեղերում հսկայական կազմակերպչական աշխատանք տանելը:

Մոսկվայում Վիթխայի աշխատանք կատարեց Նիկոլայ Էրնեստովիչ Բաումանը, որը «հենց սկզբից մասնակցել է «Искра»-ի կազմակերպութան մեջ, լինելով գործի գլխավոր պրակտիկ ղեկավարներից մեկը»¹:

Մոսկվայի այն ժամանակի գուրբատովչչինայի ամբողջ էր: Սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները ջանջախափած էին:

Այդ ծանր պայմաններում Բաումանը հատուկ խումբ կազմակերպեց «Искра»-ն ֆարքիկաներում ու գործարաններում տարածելու համար, սկսեց կապեր հաստատել բանվորների հետ և համախմբել խեղրայական կազմակերպությունը: Սչխատելով Մոսկվայում, Բաումանը միաժամանակ կատարում էր Լենինի հանձնարարությունները մյուս քաղաքների հետ կապ պահպանելու ուղղությամբ:

Ամրապնդելով կազմակերպությունը Մոսկվայում, Բաումանը շտապում է հաղորդել խմբագրությունը, որ նա կարող է «առանց նշանակելի ձեռնարկների գրականություն հայթայթել Նիժնին, Կազանին, Սամարային, Սարատովին, Աստրախանին, Վյատկայի նահ., Տամբովին, Կենտրոնական ռալոնին, Յարոսլավլին, Կոստրոմային, Վորոնեժին, Տվերին, Օրյոլին: Այս բոլոր կետերի հետ հաստատված են հայթայթման եղանակները...»: «Աստիճանաբար ես հույս ունեմ, — գրում էր Բաումանը, — պատշաճ բարձրություն վրա դնել թղթակցական մասը հիշատակված քաղաքներում,

¹ Լենին, Հատ. VIII, էջ 510, Հայկուհրատ, 1937 թ.:

ներառյալ այստեղ նաև Տուլան, Կարուգան և այլ քաղաքներ»¹:

Չուբատովյան գործակալները Բաումանին կրնական հետապնդում էին: Փրկվելով ոստիկանական շնորհից, նա փորձեց անցնել Կիև, բայց ճանապարհին ձերբակալվեց:

Պահնորդարանը հրաշալի գիտեր Բաումանի դերը: Պահնորդարանի օտարերկրյա բաժնի ղեկավար Ռատայիվը 1902 թ. փետրվարի 21-ին գրում էր, որ «Բաումանն ամենալուրջ գործիչներից մեկն է և ընդամենը շատ գործնական մարդ: Նրա ձերբակալումը դժվար հատուցյող կորուստ է «Искра»-ի ռեդակցիոն կազմակերպություն համար»²:

1902 թ. մերջերին, Լենինի առաջադրանքով, Պետերբուրգ ժամանեց Բարուչկինը: Այստեղ «Искра»-ի դերքերը դեռևս խիստ թույլ էին: Դեռևս մեծ ազդեցություն էին վայելում «էկոնոմիստները»: Առաջավոր բանվորները նրանց հեղինակար «դոչիներ» («ВЫШИ-БАЛОВЕЦ») էին անվանում: Դժվարին խնդիր էր դրված՝ «նախնի» Պետերբուրգը: Բարուչկինն այն գլուխ բերեց փայլուն կերպով: 1903 թ. հունվարին Լենինը հատուկ նամակում՝ գրված Բարուչկինին, որն աշխատում էր «Նովիցկայա» մականունով, բարձր գնահատական տվեց «Искра»-ի պետերբուրգյան գործակալի գործունեությանը:

«Ողջունում ենք Նովիցկայայի եռանդուն գործունեությունը և կրկին անգամ խնդրում ենք շարունակել

¹ Доклады социал-демократических комитетов II съезду РСДРП, стр. 26 и 27, 1930 г.

² «Николай Эрнестович Бауман», էջ 44, հոգվածների գողվածու, 1937 թ.:

նույն այդ մարտական ուղով, թույլ չտալով ոչ մի փոքրագույն տատանում: Պատերա՞զմ ղոչիններին և թող սատանան տանի բոլոր հաշտեցնողներին, «անըմբռնելի հայացքների» տեր մարդկանց և ալարկոտներին: Այլեւի՞ր լայլ է փոքրիկ ձուկը, քան մեծ բլուրը: Այլեւի՞ր լայլ է ունենալ երկու-երեք եռանդուն և միանգամայն նախընտրված մարդիկ, քան մի տասնյակ անկյալներ: Գրեք որ-քան կարելի է հաճախ և, չհապաղելով, տվեք դեպի ձեր բանվորները տանող մուտքերը (և նրանց բնութագրելը), որպեսզի տարալիման դեպքում ծանծաղուտի վրա չնստենք»¹:

«Искра»-ն նվաճեց Պետերբուրգը: Պետերբուրգի բանվորները սեփական նախաձեռնությամբ հատուկ հանդանակություններ էին կազմակերպում «Искра»-ի համար, պահանջում էին խեղադատական դրականության առաքում, ուսումնասիրում էին այն խմբակներում:

«Անցած կիրակի, — գրում էր «Искра»-ին մի բանվոր, — ես հավաքեցի տասնմեկ մարդ և կարդացի «Ինչի՞ց սկսելը», այդպես էլ մինչև դիշեր մենք չցրվեցինք: Ինչպե՞ս ամեն ինչ ձեռք է առված, ինչպե՞ս ամեն բան պարզաբանված է... ուղում էնք նամակ գրել հենց ձեր այդ «Искра»-ին, որ նա ոչ միայն սովորեցնի, թե ինչպես սկսել, այլև այն, թե ինչպես ապրել և մեռնել: Դուք, հավանորեն, կծիծաղեք և կասեք, որ լրացրում ամեն ինչ չես կարող դրել, այդ այդպես է, բայց համենայն դեպս այս անգամ ես կարդացի մի բան, որը դեռ ոչ մի տեղ գրված չի եղել: Այժմ արդեն մեզ ոչ թե դրամարկղներ են պետք, ոչ թե խմբակներ, նույնիսկ ոչ թե դրքույկներ, այլ պար-

զաբես՝ սովորել, թե ինչպես կռվի գնալ, թե ինչպես մարտնչել կռվում»¹:

✓ Պրոֆեսիոնալ ռևոլյուցիոներները՝ «Искра»-ի գործակալներ Բառամանը, Բաբուշկինը, Կեցխովելին, Ծուլովիկին և շատ ուրիշներն այդ տարիներին լիթւարի աշխատանք կատարեցին: Դրանք խեղճաբան ժողովուրդական հերոսներ էին: Երբ 1910 թ. Լենինն իմացավ այն մասին, որ Բաբուշկինը զնդակահարված է պատժիչ արչախմբի կողմից, նա դրան մի նեկրոբոգ նախընտրեց, որի մեջ գրում էր.

«... Կան ժողովրդական հերոսներ: Դրանք Բաբուշկինի նման մարդիկ են: Դրանք մարդիկ են, որոնք ռևոլյուցիայից ոչ թե մեկ, երկու, այլ ամբողջ 10 տարի առաջ իրենց ամբողջությամբ նախընտրեցին բանվոր դասակարգի ազատագրության համար մղվող պայքարին... Այն ամենը, ինչ հետ է խլված ցարական ինքնակալությունից, հետ է խլված քաղաքային մասսաների պայքարով, որոնք ղեկավարվում են այնպիսի մարդկանց կողմից, որպիսին Բաբուշկինն է:

Առանց այդպիսի մարդկանց ուսումնական ժողովուրդը ընդմիջտ կամար ստրուկների ժողովուրդ, ճորտերի ժողովուրդ: Այդպիսի մարդկանցով ուսումնական ժողովուրդը համար լիակատար ազատագրություն կնվաճի ամեն տեսակ շահագործումից»²:

✓ Իր գործակալների օգնությամբ «Искра»-ն դրեց մարքսիստական պարտիայի ամուր ֆունդամենտը:

«Искра»-ի արդեն առաջին համարներն իսկական ռևոլյուցիոն մարքսիստներին օգնեցին համախմբվելու

¹ Լենին, հատ. XXVIII, էջ 167:

¹ «Искра» № 7, 1901 թ. օգոստոս:

² Լենին, հատ. XIV, էջ 398:

և նրանց պայքարի ուղղեցին ընդդեմ «Էկոնոմիստներին»:

Լենինյան-խակրայական դիրքերի վրա առաջինը կանգնողներն էին Ի. Վ. Ստալինի, Ա. Ծուլուկինի, Լադո Կեցխովելու ուսուցիչները: 1898—1900 թ. թ. ժամանակաշրջանում այդ խումբը մեծ աշխատանք կատարեց Անդրկովկասում, ստեղծեց իր անկեղալ մամուլը և նախապատրաստեց ՌՍԴԲՊ լենինյան-խակրայական ուղղության Թիֆլիսի կոմիտեի կազմակերպումը 1901 թ. նոյեմբերին:

1901 թ. հոկտեմբերից «Искра»-ում մեկը մյուսի հետևից երևան են գալիս տեղական սոցիալ-դեմոկրատական կոմիտեները, որոշումները, որոնք ուղղվում են «Искра»-ի աշխատանքը և ընդունում են նրան որպես իրենց ղեկավար օրգանը: Այդ հայտարարությունները հանրապետարկ բերին պարտիայի իդեական և կազմակերպական միավորման ուղղությամբ «Искра»-ի կատարած մեծ աշխատանքը:

Պետերբուրգի կոմիտեն, որ երկար ժամանակ գտնվում էր «Էկոնոմիստներին» ձեռքում, ղեկնեց բոլոր ուսական սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններին, կոչ անելով՝

«... ավարտել, արտահայտվելով «Ի՞նչ անել» բրոշյուրի հեղինակի խոսքերով, տնայնագործություն ժամանակաշրջանը, տեղական մասնատվածություն, կազմակերպական քաոսի և ծրագրային տարածայնություն ժամանակաշրջանը...»

Ձեռնամուխ լինելով վերը հիշված խնդիրներին իրադրոժմանը, Սարգ. կոմիտեն իր համերաշխություն է հայտնում «Заря»-ի և «Искра»-ի թերթիական կարծիքներին, տակտիկական հայացքներին և կազմակերպ-

պական իդեաներին, թերթեր, որոնց նա ընդունում է որպես ուսական սոցիալ-դեմոկրատիայի ղեկավար օրգաններ»¹:

Օրենսդր.-Ձուևմոյի կազմակերպությունը և ՌՍԴԲՊ Մոսկվայի կոմիտեն ամենին լսելի ձևով «Искра»-ն հայտարարեցին որպես իրենց ղեկավար օրգանը, իսկ Նիժնի-Նովգորոդի կոմիտեն իր համերաշխությունը հայտնեց «Искра»-ի հետ՝ ծրագրի, տակտիկայի և կազմակերպման հարցերում և, ընդունելով նրան որպես իր ղեկավար օրգանը, «կցանկանար նրան տեսնել որպես համապարտիական օրգան»²:

Տեղական շատ կոմիտեներ մանրամասնորեն իրենց կարծիքները հայտնեցին «Искра»-ի կատարած աշխատանքի հոլթյան վերաբերյալ: ՌՍԴԲՊ Սարկովի կոմիտեն հայտարարեց՝ «նրա դիրքի սկզբունքայնությունը, նեղ էկոնոմիզմի ու տեռորիզմի նրա սուր քննադատությունը, տնայնագործության դեմ մղած նրա պայքարը, դործող կազմակերպությունները լայն քաղաքական խնդիրների շուրջը միավորելու նրա ձրդությունը և այդ միավորման համար պլան մշակելը, — այս ամենը դրդեց մեզ հայտարարելու «Искра»-ի հետ ունեցած մեր համերաշխության մասին»³, իսկ ՌՍԴԲՊ Դոնի կոմիտեի՝ Ռուսաստանի բոլոր սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններին արած ղեմումի մեջ տանձնապես նշվում էր «Искра»-ի սկզբունքայնությունը, նրա անհատելիությունը՝ մարքսիզմի անպարտության համար մղած պայքարում:

«Искра»-ն ստիպեց «հոսանքով լողացող շատ ըն-

¹ «Искра» № 26, 1902 թ. հոկտեմբեր:

² «Искра» № 30, 1902 թ. դեկտեմբեր:

³ «Искра» № 28, 1902 թ. նոյեմբեր:

կերները կանգ առնել, մոռանալ ծրագրային թեթևամտութիւնը և հրաժարուել սոցիալ-դեմոկրատական շարժման նկատմամբ ունեցած հայացքից՝ «իր ծխի տեսակետից»... սկզբունքորեն տոկուն, անխառնութեան ու տատանումներին օտար՝ «Искра»-ն զգալապես նպաստեց թաղալորող խառնամտութեան նվազեցմանը։ Որպես բժիշկ ու բարեկամ, նա բացեց մեր ամենածանր խոցերը...»¹։

Տեղական կոմիտեները մեծամասնութեան անցումը «Искра»-ի դրոշի տակ վկայում էր այն մասին, որ լենինյան սկզբունքները և լենինյան կազմակերպական պլանը Ռուսաստանում վճռողական հաղթանակ տարան։

¹ «Искра» № 35, 1903 թ. մարտ։



ԼԵՆԻՆՅԱՆ «ИСКРА»-Ի ՌԵՎՈԼՈՒՑԻՈՆ ՍԱԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ

Լենինյան «Искра»-ն վիթխարի, իր նշանակութեամբ պատմական աշխատանք կատարեց։

«Искра»-ի ծաղման ժամանակ մասսայական բանվորական շարժումը դեռևս վեր չէր բարձրացել սովորական տրեդ-յունիոնիզմից, իսկ Մարքսի—էնգելսի սոցիալիստական ուսմունքը ընդ ինտելիգենտական խմբակների սեփականութիւնն էր։ 1900—1903 թ. թ. բանվորական շարժումը բարձրացավ նոր, ալիլի բարձր աստիճանի։ 1901 թ. Օրոկսովյան պաշտպանութիւնը, ընկեր Ստարիկի դեկամբրութեամբ կատարված Բաթումի ցույցը, 1902 թ. Ռոստովի գործադուլը, 1903 թ. գործադուլների համառութիւնն ու կազմակերպվածութիւնը—հետևանք էին ոչ միայն տարբարյնորեն հարաճող ռևոլուցիոն վերելքի։ Դա արդյունք էր այն բանի, որ առաջադր պրոլետարները տիրապետել էին սոցիալիզմի իդեաններին, որ սոցիալ-դեմոկրատները դարձել էին մասսայական շարժման կազմակերպիչներ։ Դա արդյունք էր լենինյան «Искра»-ի աշխատանքի։

«Искра»-ն սոցիալիզմը միացրեց բանվորական շարժման հետ, —նա սոցիալիստական աշխարհայացքը դիտաւեցաբար ու հաստատակամորեն մտցնում էր բան-
վոր դասակարգի մեջ: Հենց դրանով էլ «Искра»-ն ար-
դեն ոչ միայն թեորրիապես, ինչպես իր ժամանակ
«Աշխատանքի սովատադրություն» խումբը, այլև մաս-
նորեն հիմնադրեց սոցիալ-դեմոկրատիան, դրեց պար-
տիայի ֆունդամենտը: «Искра»-ի շնորհիվ սոցիալիզ-
մի իդեաները լուրջ սպառնալիք դարձան Ռուսաստանի
սիրապետոց դասակարգերի համար:

Զինված իսկրագական իդեաներով՝ ուսանկան բան-
վոր դատակարարը վատահ կերպով դնում էր առաջ դե-
պի դեմոկրատական ուսուցիան: Ռուսաստանի բան-
վոր դատակարարը միջադկային բանվորական շարժման
հետամնաց ջոկատից աճում-դառնում էր միջադկային
պրոլետարիատի առաջադիր ուժը:

«Искра»-ն իրենապես ողենջնջում էր բանվորական շարժումը, իր դրոշի շուրջն էր համախմբում բազմաթիվ խմբակներ ու կազմակերպություններ, նրանց բոլոր ջանքերն ուղղում մի միակ նպատակի: Այդպիսի միախմբման համար քիչ ժամանակ էէր պահանջվում: «Նախքան միախմբվելը և նրա համար, որպեսզի միախմբվենք, մենք պետք է,—գրում էր Լենինը «Искра»-ի խմբադրության անունից, ձեռնամուխ լինելով լրագրի հրատարակմանը,—սկզբից մշտականորեն և որոշակի կերպով սահմանադատվենք: Այլապես մեր միախմբումը կլիներ լուկ գոյութուն ունեցող տարընթացությունը քողարկող և նրա արմատական մերացմանը խանգարող ֆիկցիա»¹:

«Искра»-ն ձգտում էր պարտիան միավորել պրո-
պագանդիստական ու կադմակերպական համբերատար
աշխատանքով: Նա ձգտում էր, որ արցիալ-դեմոկրա-
տական կադմակերպությունները զետեղվեցաբար ընդու-
նեն խելքայական ծրագիրը:

Լենինը սուր կերպով կշտամբում էր «Искра»-ին պրպարառող, նրան հրամանատարություն անելու մեջ մեղադրող «էկոնոմիստներին»․ «...եթե մենք ուզենալինք հրամանատարություն անել, պարոնների, մենք «Искра № 1»-ի փոխարեն կգրենք «Рабочая газета № 3», ինչպես մեզ առաջարկում էին միջանրի ընկերներ և ինչպես որ մենք կատարյալ իրավունք ունենինք անելու»։ — ցրում էր Լենինը։

«Искра»-ն ջախջախեց «էկոնոմիստներին» և մերկացրեց օպորտունիզմը ոչ միայն սոցալական, այլև սրտատաճմանյան սոցիալ-դեմոկրատիայի շարքերում: Նա մշակեց պարտիայի ծրագիրը, որի շուրջը միաժողովեցին տեղական կազմակերպութիւնները:

«Искра»-ի գործունեությունը հասցրեց այն բանին, որ «Հեղինամիտի» իդեալական դիրքերից մնաց լռիկ ահա՛ մի հեղուցութուն»²: Այսպիսով հող էր պատրաստված համապետարի հրապիրման համար, որտեղ կարելի էր ավարտել տեղական սոցիալ-դեմոկրատական կադմակերպությունների միասնորոսմը մի միասնական պարտիայի մեջ:

«Искра»-ն էլը շտապում պարտիական համապու-
մար հրալիրել, թեպետև ամբողջ ժամանակ պատրաս-
տում էր այն, և պարտիական համապումարի հրալիր-

¹ Լեւնին, հ. IV, էջ 486:

² ՀամԿ(Բ)Պ պատմութիւնը, համառոտ դասընթաց, ՀայՏըստ, 1951, 1938 թ.:

ման խնդիրը գրել էր իր առաջին խմբադրական հայտարարության մեջ: «Մենք գործում էինք հենց համաձայն այն կանոնի, թե՛ յոթ անգամ չափիր, մեկ կտրիր»¹,—գրում էր հետագայում Լենինը: Առանց այդպիսի ջանադիր նախադատության չամագումարը չէր կարող կատարել իր դերը, ամբացնել և ձեվակերպել այն, ինչը որ արված էր «Искра»-ի կողմից:

«Ուրեմն ո՞րն է եղել համագումարի գլխավոր խնդիրը: Իսկական պարտիա ստեղծելն այն սկզբունքային ու կազմակերպական հիմունքներով, որոնք առաջադրվել ու մշակվել են «Искра»-ի կողմից»²:

II համագումարը, որը հրավիրված էր 1903 թ. հուլիսի 17 (30)-ին, բարձր գնահատեց լենինյան «Искра»-ի ծառայությունները: Նրա կողմից ընդունված է հետևյալ բանաձևը.

«Ուշադրության առնելով՝ ա) «Искра»-ի ծառայություններն իդեական միավորման գործում, ուսուցիչն սոցիալ-դեմոկրատիայի սկզբունքների և այդ սկզբունքների հողի վրա՝ մեր պարտիայի մեջ եղած ամեն հնարավոր օպորտունիստական հոսանքների դեմ, այլև բանավոր դասակարգի շարժումը միակ ուղիղ ճանապարհից չեղել փորձող հոսանքների դեմ մղած պայքարի զարգացման և պաշտպանության գործում, բ) «Искра»-ի դերը պրակտիկ պարտիական աշխատանքի ղեկավարության գործում և գ) «Искра»-ի ղեկավար դերը միավորման աշխատանքում,—**ՌՍԴԲՊ** II համագումարը «Искра»-ն հայտարարում է իր կենտրոնական օրգանը»³:

¹ Լենին, հատ. VI, էջ 213, Հայկուհի, 1930 թ.:

² Նույն տեղում, էջ 214—215:

³ Протоколы II съезда РСДРП, стр. 426, 1932 г.

Ուժերի համաքման ժամանակաշրջանը վերջանում էր: Վրա էր հասնում ուսուցիչն, որի մեջ պարտիային վիճարկած էր խաղալ մասսաների ղեկավարի դերը: Պարտիան պետք է մաքուր լիներ օպորտունիզմից թե՛ ծրագրային, թե՛ տակտիկական, թե՛ կազմակերպական հարցերում:

«Искра»-ի ներսում եղած տարաձայնությունները, որոնք մինչև համագումարը դեռ թույլ էին տալիս լենինի համատեղ աշխատանքի հնարավորությունը խմբադրության մնացած անդամների հետ, համագումարում հետագա զարգացում ստացան: Այդ տարաձայնությունները ձևավորվեցին և հասցրին պառակտման:

«Դա այն ժամանակն էր, երբ պարտիան լիբերալների հետ համաձայնություն կնքելուց շրջադարձ էր կատարում դեպի մահացու պայքար ընդդեմ բուրժուազիայի, ցարիզմի դեմ պայքար նախադատության լուց՝ դեպի բացահայտ կոլիպ նրա դեմ—ցարիզմն ու Ֆեոդալիզմը լիովին ջախջախելու համար,—ասաց ընկեր Ստալինը պարտիայի XV համագումարում: Այն ժամանակ պարտիայի գլուխ էին կանգնած վեց հոգի՝ Պլեխանով, Ջաուլիչ, Մարտով, Լենին, Աքսելրոդ, Պոտրեսով: Երջադարձն օրհասական դուրս եկավ այդ վեցյակի հինգ անդամի համար: Նրանք դուրս ընկան սայլակից: Լենինը մնաց եղակի թիով: Այնպես ասացվեց, որ պարտիայի հին պարադոկսները, պարտիայի հիմնադիրները (Պլեխանով, Ջաուլիչ, Աքսելրոդ) պլյուս երկու երիտասարդ (Մարտով, Պոտրեսով) դեմ դուրս եկան մեկին, նույնպես երիտասարդ՝ ընկ. Լենինին»¹:

¹ Ի. Ստալին, կենտրոնական կոմիտեի քաղաքական հաշվե-

«Искра»-ի խմբագրութեան կողմից առաջարկված՝ պարտիայի ծրագրի նախագծի քննարկման ժամանակ համապետարի օպորտունիստական մասը, որպես օրինակ վերցնելով արտասահմանյան մի շարք սոցիալ-դեմոկրատական պարտիաների ծրագրերը, հանդես եկավ պրոյետարիատի դիկտատուրայի մասին կետի դեմ: Օպորտունիստները, որոնց խորթ էր բանվոր դասակարգի և դյուղացիութեան դաշինքի մասին լեհինյան պաշտպարը, հանդես եկան նաև ծրագրի՝ դյուղացիական հարցի վերաբերյալ պահանջներ արտահայտող կետի դեմ:

Համապետարում մասնակցող բունդականները և լեհական սոցիալ-դեմոկրատները պայքարում էին ազդերի ինքնորոշման իրավունքի լեհինյան պահանջի դեմ:

Լեհինը ջախջախեց օպորտունիստներին այս բոլոր զիտքերը, և պարտիան ընդունեց մարտական մարքսիստական պարտիային արժանի սեռուցիոն ծրագիր:

Համապետարում ամենից առաջին սուր պայքարը բունդիկեց կադմակերպական հարցերի շուրջը: Պարտիայի կանոնադրութեան քննարկումը ցույց տվեց, որ «Искра»-ի կողմից ջախջախված «էկոնոմիստներին» տեղը օպորտունիստական նոր հոսանք է բռնել՝ մենչեվիկները:

Նոր տիպի պարտիայի մասին ուսմունքը, որն այնպես հաստատականորեն քարոզվել էր լեհինյան «Искра»-ի կողմից երեք տարվա ընթացքում, պետք է որ իր մարմնավորումը գտներ պարտիայի կառուցվածքի

մեջ, նրա կանոնադրութեան մեջ, նրա կենտրոնական հիմնարկների պերսոնալ կազմում: Միաձուլվ, մարտական, պարզորոշ կերպով կադմակերպված պարտիան չի կարող հաշտվել կադմակերպական հեղհեղուկութեան հետ, այնպեսի հիմնարկների հետ, որոնք ձեռնախոյզված են ոչ թե պարտիական սկզբունքով, այլ բնականական ու անձնական նկատառումներով: Եվ ահա կադմակերպական հարցերի ուղղութեամբ մղվող պայքարում համապետարում կտրուկ կերպով սահմանադատվեցին երկու ուժեր: Լեհինի շուրջը հախախտվեցին բոլոր նրանք, ովքեր ուղղում էին շարունակել իսկական սեռուցիոն պարտիայի համար «Искра»-ի մղած պայքարը: Դեպի Մարտովը ձգվեցին բոլոր օպորտունիստները, սկսած ջարդված «էկոնոմիստներին», բունդականներին՝ համապետար մուտք գործած մնացորդներին և վերջապահ պարտիայի ամենաախտերի մի թշնամով՝ Տրոցկով: Կանոնադրութեան առաջին պարագրաֆի՝ Մարտովի կողմից առաջարկված ձևապարագրաֆի՝ Մարտովի կողմից առաջարկեց իր անում կերպումը պարտիայի գոնեք լայնորեն բաց էր անում անկայան տարրերի առաջ և սոցիալ-դեմոկրատական շարժումը քաշում բոլորովին հետ՝ դեպի կադմակերպական ձևակերպվածութեան ժամանակաշրջանը: Այդ հարցում օպորտունիստներին հաջողվեց դեռադուրութեան ստանալ և անցկացնել կանոնադրութեան առաջին պարագրաֆի մարտովյան ձևակերպումը:

Օպորտունիստներին պայքարն ընդդեմ նոր տիպի պարտիայի ստեղծման, նոր ուժով երևան եկավ պարտիայի կենտրոնական հիմնարկներին ընտրութեան ժամանակ և, մասնավորապես, «Искра»-ի խմբագրութեան ընտրութեան ժամանակ: Հին խմբագրութեանը՝ վեցյակը, կազմվել էր որոշ պատմական պայ-

աղյուսակներ Համկ(ր)Պ XV համագումարին, էջ 92, 1937 թ., Հայկուհիստ:

մաններում և մինչև պարտիայի միավորումը և որպես մի միացյալ ամբողջություն խաղում էր դրական դեր: Սակայն խմբագրություն մեծամասնությունն ամբողջ ժամանակ ձգտում էր իրեն նայել որպես մասնավոր, զուտ դրական խումբ, որն իրավասու է, իբր թե, ընտանեբար և պարտիայից անկախ ըստ իր ներքին հարցերը: «Հենց վեցյակի ընտանեկանությունն է մաշել մեզ ամբողջ 3 տարի... —ասում էր Լենինը, — և այն մոմենտից, երբ Իսկրան դարձավ պարտիա և պարտիան դարձավ Իսկրա, մենք պետք է խզեինք, մենք պարտավոր էինք խզելու 6-յակի հետ, վերջ տալու ընտանեկանությունը»¹:

Գրեթե ոչ ոքի, նույնիսկ այն անձերին, որոնք անմիջականորեն չլիով էին ունեցել խմբագրություն հետ, հայտնի չէին «Искра»-ում գոյացած ներխմբագրական փոխհարաբերությունները: Մանավանդ նրանք հայտնի չէին համադրամարին հավաքված տեղական կոմիտեներին ներկայացուցիչներին: Նրանց պատկերացմամբ «Искра»-ի խմբագրությունը մի միասնական ամբողջություն էր, իսկ «Искра»-ի հոդվածները՝ բարեկամական, կոլեկտիվ աշխատանքի արդյունք: Բայց համադրամարի մեկ ամսվա աշխատանքը լիովին բավական եղավ այն բանի համար, որպեսզի համադրամարի մասնակիցները հասկանային խմբագրություն յուրաքանչյուր անդամի հայացքները, գնահատեին նրա քաղաքական ու գործնական հատկությունները: «Թե ո՞ւմ պետք է ընտրել քաղաքական ղեկավար, կ ե ն տ ր ո ն ի կազմի մեջ —այդ լույսի պես պարզ էր համադրամարի

ամեն մի անդամի համար, նրա միամիտ աշխատանքից հետո»¹:

Լենինը վճռաբար հանդես եկավ խմբագրություն հին կազմի դեմ, առաջարկելով այն փոխարինել մի եռյակով, որի կազմի մեջ մտնեն Պլեխանովը, Մարտովը, Լենինը: Խոսքը վերաբերում էր «խմբագրային (редакторский) հին խմբակը պարսիական հիմնարկ պարճնելուն»²:

Լենինի առաջարկը պաշտպանող դեբեդատները ելույթներում մի շարք փաստարկներ էին բերվում ընդդեմ վեցյակի: Ահա այդ ճառերից հանված քաղվածքները, որ կաղմել է Լենինը.

«առաջին, — հին վեցյակի մեջ պարզ երևում են անհարթություններ սկզբունքային երանդների իմաստով. երկրորդ, — ցանկալի է խմբագրական աշխատանքի տեխնիկական պարզեցում. երրորդ, — գործի օգուտը քիչ է կանգնած քաղքենիական քնքշանքներից. միբարձր է կանգնած քաղքենիական քնքշանքներից. միայն ընտրությունը կապահովի ընտրված անձերի համապատասխանությունն իրենց պաշտոններին. չորրորդ, — չի կարելի համադրամարի համար սահմանափակել ընտրության ազատությունը, հինգերորդ... անհրաժեշտ են ոչ միայն գրականագետներ, այլև վարչական անձեր. վեցերորդ, — կենտ. Օրդ. — ի մեջ պետք է լինեն միանգամայն որոշ, համագումարին հայտնի անձեր. յոթերորդ, — վեցից բաղկացած կոլեգիան հաճախ անդորոժունակ է, և նրա աշխատանքն իրագործված է ո՛չ թե անորոժակ կանոնադրության շնորհիվ, այլ չնայած դրան, ութերորդ, — լրագրի վա-

¹ Լենին, հատ. VI, էջ 71, Հայկուհրատ, 1936 թ.:

² Նույն տեղում, էջ 333:

¹ Լենին, հատ. VI, էջ 45, Հայկուհրատ, 1936 թ.:

բումբը պարտիական (և ոչ թե խմբակային) դործ է և ալին»¹ :

Լենինի և նրա կողմնակիցների դեմ հանդես էին գալիս բոլոր նրանք, ովքեր կանգնած էին «կարեկցության ու վերալնրաժողովրդական հողի վրա» և նրանք, ովքեր պիտակցորեն պայքարում էին լենինյան հայացքների դեմ պարտիայի մասին և պարտիական կարգապահության մասին : Պատմականորեն կազմավորված զբաղմունք կոլեկտիվի պահպանման անվան տակ մենչև վիկենբրը և Հուգո-Տրոցկին կատաղի փորձեր էին անում իրենց ձեռքն առնելու պարտիայի ամենատուր գենը—նրա մամուլը : Բայց համապոմարն բնդունեց Լենինի առաջարկը,—պարտիականության դադարն այս հարցում ևս հաղթանակեց :

Սակայն «կադմակերպական հարցերի բնագավառում համապոմարն իր դրության բարձրության վրա չդառնալ, տատանումներ ունեցալ, երբեմն նույնիսկ դերակցություն էր տալիս մենչևիկներին, ու թեև վերջում նա ուղղվեց, այնուամենայնիվ ոչ միայն չկարողացալ մերկացնել մենչևիկներին օպորտունիզմը կադմակերպական հարցերում ու պարտիայի մեջ նրանց մեկուսացնել, այլև նույնիսկ չկարողացալ պարտիայի առաջ նման խնդիր դնել :

Այս վերջին հանգամանքը հանդիսացալ այն բանի գլխավոր պատճառներից մեկը, որ համապոմարից հետո պայքարը բուլչևիկներին և մենչևիկներին միջև ոչ միայն չհանդարտվեց, այլ, ընդհակառակը, է՛լ ալիել սրվեց»² :

¹ Լենին, հատ. VI, էջ 340, Հայկուհրատ, 1936 թ. :

² ՀամԿ(բ)Պ պատմություն, համառոտ դասընթաց, էջ 60.

Պետքադհրատ, 1938 թ. :

Պարտություն կրելով համապոմարում՝ մենչևիկներն ստոր և պառակտողական մեթոդներով է՛լ ալիել ուժեղացրին պայքարը պարտիայի դեմ և ամեն կերպ աշխատում էին վիժեցնել համապոմարի որոշումները կատարումը : Մարտովը դեմոնստրատիվ կերպով հրաժարվեց «Искра»-ի խմբագրության մեջ մտնելուց, և լրագրի 45-ից մինչև 51 համարները խմբագրվեցին միայն Պլեխանովի և Լենինի կողմից : Հենվելով էմիգրանտական խմբակների վրա, Մարտովը Տրոցկու հետ միասին կատաղի հալածանք ծավալեց Լենինի դեմ և փորձեց վարկարկել II համապոմարի որոշումները :

Մենչևիկներին օգնեց Պլեխանովը : II համապոմարում նա պաշտպանում էր Լենինին, բայց համապոմարից հետո, վախենալով պառակտումից, սկսեց հալտության հակվել մենչևիկներին հետ :

«Պլեխանովին մենչևիկներին կողմն էր քաշում նրա նախկին օպորտունիստական սխալների բեռը : Պլեխանովն օպորտունիստ-մենչևիկներին նկատմամբ հաշտվողական լինելուց շուտով ինքը մենչևիկ դարձալ»¹ :

Պլեխանովը պահանջեց փոխել համապոմարի որոշումը և «Искра»-ի խմբագրության կադմի մեջ մտցնել համապոմարի կողմից մերժված Աքսելրոդին, Պոտրեսովին և Զասուլիչին : Այդ ստիպեց Լենինին հեռանալ խմբագրությունից :

52-րդ համարից «Искра»-ն դադարեց լույս տանել որպես լենինյան պարտիական լրագիր : Նա միանգամից այնքան փոխեց իր դեմքը, որ այդ պահից պարտիայի մեջ սկսեցին խոսել՝ հին «Искра»-ի մա-

¹ ՀամԿ(բ)Պ պատմություն, համառոտ դասընթաց, էջ 61, Պետքադհրատ, 1938 թ. :

սին որպէս բողեւիկյան լրագրի մասին և նոր «Искра»-ի մասին, որպէս մենչեիկների օրգանի մասին:

Իր «Մի քայլ առաջ, երկու քայլ հետ» հռչակալուր գրքով Լենինը տվեց իրենց սկզբունքներով արամագծորեն հակադիր այդ երկու լրագրերի բացառիկ վառ համեմատութիւնը:

«Հին «Искра»-ն ռեդուցիոն պայքարի ճշմարտութիւններ էր ուսուցանում: Նոր «Искра»-ն ատրեական լմաստութիւն է ուսուցանում՝ զիջողականութիւն և համակերպութիւն: Հին «Искра»-ն մարտնչող օրթողութիւն օրգան էր: Նոր «Искра»-ն հրամցնում է մեղ օպորտունիզմի դիւտոցը—գլխախորայես, կազմակերպական հարցերում: Հին «Искра»-ն վաստակեց թե՛ ռուսական և թե՛ արեւմտակլրոպական օպորտունիստների իր համար պատխալոր ատելութիւնը: Նոր «Искра»-ն «խելոքացել է» և շուտով կղաղարի իր հասցէին ծայրահեղ օպորտունիստների կողմից շռայլիող գովասանքներից ամաչելուց: Հին «Искра»-ն անչեղորեն դնում էր դեպի իր նախտակը, և նրա խոսքը չէր հակասում գործին: Նոր «Искра»-ում իր դիրքի ներքին կեղծութիւնն անխուսափելիորեն ծնում է—անկախ նույնիակ որեւէ մեկի կամքից և գիտակցութիւնից — քաղաքական կեղծախորութիւն... Որպիսի՛ խայտառակութիւն: Ինչպե՛ս խայտառակեցին նրանք մեր հին «Искра»-ն»¹:

Պատակախիչ—մենչեիկները և նրանց կողմից գրաւված լրագիրը բոլոր ուժերը լարում էին, որպեսզի պակաղերծեն և կործանեն այն աշխատանքը, որն

այնպէս փայլուն կերպով կատարեց Լենինյան «Искра»-ն:

Սակայն օպորտունիստներն անգոր էին ոչնչացնել «Искра»-ի սլատմական գործունեութիւնն արդյունքները: Ռուսական սոցիալ—դեմոկրատների մեծամասնութիւնն առանց տատանումների գնում էր Լենինի հետեից: «Բողեւիզմը,—գրում էր Լենինը,—երեք տարում՝ 1900—1903, անցկացրեց հին «Искра»-ն և մենչեիկների դեմ պայքարի դուրս եկավ որպէս մի ամբողջական ուղղութիւն»¹: Այդ ուղղութիւնն առաջվա պէս հալատարիմ էր մնում «Искра»-ի գաղափարներին:

Մենչեիկների դեմ մղած պայքարի նոր ծանր պամաններում, մենչեիկներ, որոնք Պլեխանովի օգնութիւնը գրաւել էին պարտիայի կենտրոնական հիմնարկները, բողեւիկներին՝ Լենինի գլխախորութիւնը, հարկ եղավ ստեղծել իրենց «Вперед» բողեւիկյան լրագիրը և նախապատրաստել պարտիայի III համագումարի հրախրումը:

«Вперед» լրագիրը շարունակեց հին «Искра»-ի գործը: «Вперед» լրագրի ուղղութիւնը,—գրում էր Լենինը,—հին «Искра»-ի ուղղութիւնն է: Հանուն հին «Искра»-ի «Вперед»-ը վճաբար պայքարում է նոր «Искра»-ի դեմ»²:

Ոչ միայն «Вперед»-ը, այլև բոլոր հաջորդ բողեւիկյան լրագրերը շարունակում էին հին «Искра»-ի գործը: Փոխվում էին պայքարի պայմանները, պարտիան իր մամուլի առաջ նոր խնդիրներ էր առաջա-

¹ Լենին, հատ. VI, էջ 454—455, Հայկուհրատ, 1936 թ.:

¹ Լենին, հատ. XIV, էջ 168:

² Լենին, հատ. VII, էջ 94:

դրում, բոլշևիկյան լրագրերը սկսելով ուսուցիչին ընթերցողներին նեղ շրջանից՝ նվաճում էին տասնյակ միլիոնավոր մարդկանց համակրանքը, — բայց բոլշևիկյան թերթի իդեալական դեմքը մնաց միշտ նույնը:

* * *

Առաջին բոլշևիկյան լրագիր «Искра»-ի փորձով, լրագիր, որը խմբագրում էր Լենինը, սովորել են, սովորում են և սովորելու են բոլշևիկյան խմբագիրները և դրականապես են:

«Искра»-ի՝ ժամանակից դեղնած էջերը պարտիականութուն, անհաշտելիութուն են սովորեցնում պարտիայի թշնամիների դեմ մղվող պայքարում: Նրանք սովորեցնում են լրագիրը որպես ուսուցիչ թերթի պրոպագանդայի հզոր տրվումը, որպես մասսաների ուսուցիչ զործունեության կազմակերպման դեմք օգտագործելու հմտութունը:

Լենինյան «Искра»-ն սովորեցնում է զգայուն կերպով ունենալ այն բանին, թե ինչով են ապրում մասսաները, թե ինչն է նրանց հուզում, և պատասխանել նրանց ամենատուր ու հրատապ պահանջներին:

Այն դրոշը, որի ներքո պայքարում էր «Искра»-ն, դարձել է մեծ, անպարտելի ուժ:

Այդ դրոշը, Մարքսի—Էնգելսի—Լենինի—Ստալինի դրոշը բարձր է պահում ողջ բոլշևիկյան մամուլը, զլուխ ունենալով «Правда»-ին: Նա այն կրում է, «համախմբելով պարտիական և անպարտիական բոլշևիկներին միլիոնավոր մասսաներին, օգնելով նրանց և

մեր հայրենիքի բոլոր աշխատավորներին՝ տիրապետելու բոլշևիզմին, վճռական պայքարի ճանապարհով տանելով նրանց ընդդեմ ժողովրդի թշնամիների, հանուն կոմունիզմի հաղթանակի»¹:

¹ Համ(բ)Պ Կենտկոմի ուղարկած ողջույնը «Правда»-ի 25-ամյակի առթիվ: («Правда» 1937 թ. մայիսի 5):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բանվորական մամուլի ծնունդը Խուսափանում	52
Պարտիայի ստեղծման լենինյան պլանը	3
Ուկրաինայի մարքսիստների առաջին համաժողովական լրագրերը	34
«Искра»-ի գերը պարտիան իդեոլոգիական նախապատրաստելու գործում	44
Նոր տիպի լրագիր	64
«Искра»-ի պայքարը պարտիայի կազմակերպական համախմբման համար	85
Լենինյան «Искра»-ի ուկրաինյան սկզբունքների հաղթանակը	120
	149



Թարգմանիչ Հ. Հասրաբյան
 խմբագիր Վ. Գուրգենյան
 Տեխն. խմբագիր Ս. Խաչատրյան
 Սրբագրիչ Ա. Մանուկյան
 Կոնտրոլ սրբագրիչ Լ. Արուսյան

Հրատարակչության № 856, պատվեր № 349, Заказ № 349
 Տիրաժ 5000, тираж 5000
 Հանձնված է արտադրության 25/XI 1940 թ.
 Ստորագրվել է տպագրության 8/I 1941 թ.
 Գինը 1 ռ. 50 կ., կազմը 2 ռ.

Քաղաքական գրականության պետական հրատարակչության
 տպարան, Երևան, Ալլահվերդյան № 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0139161

14780